*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

—— դեկտեմբերի 2010թ. N_____Ն

## ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011Թ. ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*՝

1. Հաստատել Երևանի զարգացման 2011թ. ծրագիրը՝ համաձայն հավելվածի։
2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման միամյա ծրագիրը ենթակա է հրապարակման «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեով ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011Թ. ԾՐԱԳՐԻ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացված ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ–տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները: Համաձայն նույն օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Երևանի քաղաքապետը կազմում և ավագանուն է ներկայացնում Երևանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերը:

Հիմք ընդունելով վերը նշվածները և այն, որ Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը՝ Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները, որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացված Երևանի զարգացման 2011թ. ծրագիրը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011Թ. ԾՐԱԳԻՐ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունումը չի առաջացնում ավագանու այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագիծ

# ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# 2011 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


Նախաբան ..... 2
Քաղաքաշինություն և ճարտապետություն ..... 6
Արտաքին ձևավորում և գովազդ ..... 19
Շինարարության և բարեկարգման, ճանապարհաշինության ոլորտ ..... 21
Անշարժ գույքի կառավարում ..... 28
Կոմունալ ոլորտ ..... 33
Առևտրի և սպասարկումների ոլորտ ..... 50
Տրանսպորտ ..... 56
Բնապահպանություն ..... 63
Կրթության ոլորտ ..... 68
Առողջապահություն ..... 80
Սոցիալական ապահովություն ..... 84
Երեխաների իրավունքների պաշտպանություն ..... 91
Մշակույթ ..... 94
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ ..... 102
Միջազգային համագործակցություն ..... 107
Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից նախատեսվող ներդրումային ծրագրերը ..... 112
ՀՀ նախարարությունների կողմից 2011 թվականին Երևան քաղաքում նախատեսվող ծրագրեր ..... 114
Աջափնյակ վարչական շրջան ..... 122
Ավան վարչական շրջան ..... 130
Արաբկիր վարչական շրջան ..... 136
Դավթաշեն վարչական շրջան ..... 141
Էրեբունի վարչական շրջան ..... 148
Կենտրոն վարչական շրջան ..... 155
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան ..... 163
Նոր Նորք վարչական շրջան ..... 169
Նորք-Մարաշ վարչական շրջան ..... 176
Նուբարաշեն վարչական շրջան ..... 180
Շենգավիթ վարչական շրջան ..... 185
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան ..... 193
Երևանի զարգացման 2011 թվականի հիմնական գերակայությունները ..... 200

# ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը զբաղեցնում է 227 քառ.կմ տարածք, բնակչության թիվը կազմում է 1116.6 հազ. մարդ, որը հանրապետության բնակչության 34.4%-ն է:

Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Երևանը բաժանված 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն:

2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ Երևան քաղաքում աշխատանքային ռեսուրսները կազմել են 719.0 հազ. մարդ, որից տնտեսակապես ակտիվ բնակչությունը՝ 338.8 հազ. մարդ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 2.05%-ով, զբաղվածների թիվը կազմել է 316.1 հազ. մարդ (-3.62%), իսկ գործազուրկներինը՝ 22.7 հազ. մարդ (+26.1%): Երևանում են հաշվառված շուրջ 179 հազ. կենսաթոշակառու, որը ընդհանուրի 34.2%-ն է, և 21.9 հազ. նպաստառու ընտանիքներ (-8.09%)

***Աղյուսակ 1***

**Երևանի վարչական շրջանների տարածքը և բնակչությունը**[1]

*2010թ. հունվարի 1-ի դրությամբ*

| | Տարածքը, հա | Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը, % | Բնակչության թվաքանակը | Երևանի բնակչության թվաքանակում տեսակարար կշիռը, % |
|---|---|---|---|---|
| **ք.Երևան** | **22700** | | **1116.6** | **-** |
| Աջափնյակ | 2606 | 11.5 | 108.0 | 9.67 |
| Ավան | 808 | 3.6 | 50.3 | 4.55 |
| Արաբկիր | 1320 | 5.8 | 131.0 | 11.73 |
| Դավթաշեն | 654 | 2.9 | 41.0 | 3.67 |
| Էրեբունի | 4880 | 21.5 | 121.5 | 10.88 |
| Կենտրոն | 1339 | 5.9 | 130.4 | 11.67 |
| Մալաթիա-Սեբաստիա | 2539 | 11.2 | 141.5 | 12.68 |
| Նոր Նորք | 1440 | 6.3 | 146.4 | 13.12 |
| Նորք-Մարաշ | 470 | 2.1 | 11.3 | 1.02 |

[1] Հայաստանի Հանրապետությունը և մարզերը թվերով, 18.06ՀՀ ԱՎԾ, Վիճակագրական ժողովածու, 2010թ., էջ 212-219:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Նուբարաշեն | 1731 | 7.6 | 9.6 | 0.86 |
| Շենգավիթ | 4099 | 18.1 | 145.9 | 13.07 |
| Քանաքեռ-Զեյթուն | 775 | 3.4 | 79.1 | 7.08 |

Երևանը խոշոր տնտեսական կենտրոն է:

2009 թվականին մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝

***Աղյուսակ 2***

| | | ՀՀ տեսակարար կշռում | 2009թ. | 2010թ. |
|---|---|---|---|---|
| 1. | Արդյունաբերություն | % | 49.0 | 45.3 |
| 2. | Շինարարություն | % | 87.6 | 68.5 |
| 3. | Մանրածախ առևտուր | % | 84.5 | 81.7 |
| 4. | Ծառայություններ | % | 90.9 | 86.6 |
| 5. | Հիմնական միջոցների գործարկում | % | 89.0 | 84.0 |
| 6. | Շահագործման հանձնված բնակելի շենքեր | % | 84.0 | 84.0 |

Երևանը հարուստ է պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով և թանգարաններով: Այստեղ հաշվառված է պատմության և մշակույթի 401 հուշարձան, որից 288-ը՝ պետական սեփականության, իսկ 113-ը՝ Երևանի համայնքային սեփականության: Երևանի 57 թանգարաններից 4-ը Երևանի քաղաքապետարանի ենթակայության են:

Էրեբունի ամրոցի պատմական, մշակութային և գիտական արժեքներն առավելագույնս բացահայտելու և Էրեբունին Երևանի այցեքարտ դարձնելու նպատակով ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 19-ի հ.1047-Ն որոշմամբ «Էրեբունի պատմահնագիտական արգելոց թանգարան» ՊՈԱԿ-ն հանձնվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը:

Երևան քաղաքում են գործում Ազգային Ակադեմիան, Մատենադարանը, տեսնյակ գիտական հաստատություններ և համալսարաններ, թատրոններ ու

թանգարաններ, Հայաստանի Հանրապետության միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Հաշվի առնելով Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող ոլորտների հիմնախնդիրներն ու գերակայությունները՝ Երևանի զարգացման 2011 թվականի ծրագիրը նախանշում է ոլորտների և վարչական շրջանների առանձին միջոցառումների պլանավորումը՝ ծավալային և ֆինանսական արտահայտությամբ:

Ծրագիրը ներկայացնում է Երևան քաղաքի ընդհանուր վիճակի բնութագիրը, 2010 թվականին իրականացված աշխատանքները, առանձին ոլորտներում և վարչական շրջաններում առկա հիմնախնդիրները և 2011 թվականին նախատեսված միջոցառումները:

Հարկային եկամուտների հավաքագրման կայուն աճին նպաստել են հարկային բազայի ճշտմանն ուղղված համալիր միջոցառումները և ընդլայնումը: 2010 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ աճել են ինչպես Երևան համայնքի, այնպես էլ Երևանի վարչական շրջանների բյուջեների եկամուտների ցուցանիշները.

*2010 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ*

| | Եկամուտներ | Երևան համայնք | | Երևանի վարչական շրջաններ | |
|---|---|---|---|---|---|
| | | հազ. դրամ | % | հազ. դրամ | % |
| 1. | Հարկային եկամուտներ | 847.764,3 | 13.8 | 1.675.326,8 | 25.9 |
| 2. | Տեղական տուրքեր | 610.274,6 | 66.0 | 205.554,1 | 17.7 |

Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեն կանխատեսում է՝

1. Եկամուտների գծով՝ 55,796,447.9 հազ. դրամ
2. Ծախսերի գծով 58,296,447.9 հազ. դրամ
3. Դեֆիցիտ (պակասուրդ) 2,500,000.0 հազ. դրամ

Երևանի զարգացման 2010 թվականի ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը, բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը և աղքատության կրճատումը՝ որպես հետևանք երաշխավորելով երևանցիների կյանքի որակի էական բարելավումը:

Իրականացված ծրագրերի շնորհիվ Երևանը վերածվում է մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի, հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաքի, որտեղ ապահովվում են հասարակության յուրաքանչյուր

անդամի անվտանգ և արժանավայել կյանքը, ինքնաարտահայտման հնարավորությունը, բավարարվում են սոցիալական ապահովության կարիք ունեցող քաղաքացիների անհրաժեշտ կարիքները:

Երևանի զարգացման 2011 թվականի ծրագրի իրականացման գրավականը հանդիսանում է քաղաքացիների վստահությունը վայելող և արդյունավետ գործող քաղաքային իշխանությունը, ինչպես նաև Երևանի ավագանին, որոնք հիմնված են իրավունքների և ազատությունների հարգման, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանն ակտիվ երկխոսության միջոցով կառավարման գործընթացներին մասնակից դարձնելու վրա:

# ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Վիճակի բնութագիր

Քաղաքաշինության բնագավառում 2010 թվականին մշակվել և ներդրվել են ոլորտի ներդրումային գրավչությանը և գործարար միջավայրի բարելավմանն ուղղված համալիր ծրագրեր՝ նպատակ ունենալով Երևան քաղաքի համաչափ տարածական զարգացման առանցնահերթության սկզբունքի արմատավորումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի 2006-2020թթ. իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1402-Ն որոշման

ա) մշակվել և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի հ.47-Ն որոշմամբ հաստատվել են Երևան քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծեր և առաջնահերթ շինարարության կառուցապատման էսքիզներ՝

- Ավան վարչական շրջանի վարչական սահմաններում՝ Գայի պողոտայի տրանսպորտային հանգույցին հարակից (145 հա)
- Էրեբունի վարչական շրջանի վարչական սահմաններում՝ «Սարի-թաղ» թաղամասի և դրան հարակից տարածքներ (264 հա)
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սահմանը (1363 հա)
- Էրեբունի վարչական շրջանի վարչական սահմաններում առանձնացված տարածքի (834 հա)

բ) 2009թ. իրականացվել է Երևանի գլխավոր հատակագծի նախագծի իրացման վերլուծություն և մինչև 2020թ. շինարարության ծրագրի կազմման աշխատանքներ:

գ) Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրացման վերլուծության և նախորդ տարիների մոնիտորինգի արդյունքների հիման վրա, հիմք ընդունելով Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի բյուջեի մասին» հ.56-Ն և Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունվարի 18-ի հ.74Ա որոշումները, կատարվում են Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման աշխատանքները «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից:

1. Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի հհ.31, 32 կետերի համաձայն քարտեզների տեսքով մշակվել և Երևան քաղաքի ավագանու քննարկման է ներկայացվել «Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային գոտին» և «Երևան քաղաքի քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին», որոնք սահմանվել են ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.13-Ա որոշմամբ և 2010թ. վերանայվել են դրանց սահմանները:

**2. Համաքաղաքային գործառույթներով օժտված կենտրոնների ստեղծում**

**ա) Նորագյուղի տարածք - Երևան-Բերդ**

Երևանի կենտրոնի հարավ-արևմտյան տարածքում (մոտ 158 հա) Նորագյուղին (Պասկևիչի բլուր) հարակից մասում նախատեսվում է բազմաֆունկցիոնալ՝ գործարարական, դիվանագիտական և մշակութային միջազգային նոր կենտրոնի ստեղծում: Մշակվել են ծրագրի իրականացման կազմակերպչական, իրավական մեխանիզմներ:

**բ) Տիչինայի փողոցին հարակից տարածք**

2010թ. ընթացքում կատարվել են Տիչինայի փողոցին հարակից տարածքում «Դեֆանս հաուզինգ ինվեստ» ՓԲԸ-ին 2008 թվականի նոյեմբերի 5-ի հ.105/5-ԱԳ պայմանագրով վաճառված 118 հա մակերոսով հողամասի սահմաններում առկա հողօգտագործողների հողամասերի առանձնացման նպատակով ընկերությանը պատկանող հողամասի նոր սահմանների ճշտման աշխատանքները:

**գ) «Մարս» գործարանին հարակից տարածք**

2010թ. սկսվել է բանակցային գործընթաց ծրագրի իրականացման՝ մասնավոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ (այդ թվում նաև արտասահմանյան ներդրողների հետ):

**դ)** Համաձայն գլխավոր հատակագծի և Աջափնյակ վարչական շրջանի գոտիավորման նախագծի՝ հյուսիս-արևմտյան ուղղությամբ քաղաքի հետագա զարգացման նպատակով կազմվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել որոշում 158.56 հա գյուղատնտեսական նշանակության հողերից բնակավայրերի հողերի նպատակային նշանակության փոփոխման մասին:

3. Կատարվել են Ավան և Աջափնյակ վարչական շրջաններում (այդ թվում նաև Տիչինայի կենտրոնին և Սիլիկյան թաղամասին հարակից տարածքում) կառուցապատման նպատակով հողաբաժանման սխեմաների մշակման

աշխատանքներ՝ աճուրդային կարգով հողամասերի վաճառք իրականացնելու համար:

4. Երևանի կենտրոնը տարանցիկ տրանսպորտի միջոցներից բեռնաթափելու նպատակով Ասիական զարգացման բանկի և նրա փորձագետների հետ ձեռնարկվել ու ընթանում են աշխատանքներ Երևանի կենտրոնը շրջանցող մի քանի մայրուղիների և դրանց առանձին հանգույցների կառուցման և վերակառուցման համար: Պատրաստվել են դրանց տեխնիկական նախագծերը: ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի հ.348-Ն որոշմամբ վերոհիշյալ ճանապարհների իրականացման համար նախատեսված տարածքները ճանաչվել են գերակա հանրային շահ՝

- Շիրակի փողոցից մինչև Արտաշատի խճուղի միջպետական նշանակության մայրուղի (մայրուղու երկարությունը՝ 4340 մետր, անցուղիները՝ 995 մետր, ընդհանուրը՝ 5335 մետր):
- Արգավանդը Շիրակ փողոցի հետ կապող ճանապարհ (մայրուղու երկարությունը՝ 1300 մետր, անցուղիները՝ 800 մետր, ընդհանուրը՝ 2100 մետր:
- Դավթաշեն կամուրջ - Հալաբյան փողոց-Աշտարակի խճուղի կապ: (մայրուղու երկարությունը՝ 2250 մետր, անցուղիները՝ 2380 մետր, ընդհանուրը՝ 4630 մետր)

Սկսվել են դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրությունների կազմման և օտարման աշխատանքները:

5. Երևան քաղաքի փողոցաճանապարհային ցանցի կատարելագործման նպատակով համաձայնեցվել են Ծիծեռնակաբերդի խճուղու, Թբիլիսյան խճուղու, Զաքյան-Տերյան փողոցները կապող հատվածի աշխատանքային նախագծերը և տրամադրվել են շինարարության թույլտվություններ:

6. Քաղաքի կենտրոնական փողոցների երկկողմ երթևեկության աջ գոտին տրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանումից ազատելու, երթևեկության խնդիրների բարելավման նպատակով կազմված Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցման համալիր ծրագրի շրջանակներում 2010թ. իտալական «Ռենկո Արմէստեյտ» ընկերության ներդրումներով Երևանի Ազատության հրապարակում շահագործման է հանձնվել 500 տեղանոց ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղին:

7. Հետիոտնի տեղաշարժման անվտանգության ապահովման և տրանսպորտի անարգել աշխատանքի նպատակով մշակվել է հետիոտն անցումների (վերգետնյա կամ ստորգետնյա) կառուցման ծրագիր: Ծրագիրը լայնամասշտաբ է, պահանջում է զգալի ծավալի ֆինանսական միջոցներ, որոնց հայթայթման նպատակով, որպես նոր քաղաքաշինական մոտեցում քայլեր են ձեռնարկվում նաև մասնավոր ներդրողներ ներգրավելու համար:

2010թ. վերգետնյա հետիոտն անցումներ են կառուցվել Կենտրոն վարչական շրջանում Խանջյան-Թումանյան փողոցների խաչմերուկում՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Բաբաջանյան փողոցի վրա:

2010 թվականին հայտարարվել են հետիոտն վերգետնյա անցումների նախագծման համար մրցույթներ

- Ազատության պողոտայի Տոլստոյի անվան հ.128 դպրոցի հարևանությամբ վերգետնյա հետիոտն անցման կառուցում
- Շիրազի փողոցի հ.26 շենքի մոտ հետիոտն վերգետնյա անցման կառուցում
- Դ.Անհաղթի փողոցի հ.10 հասցեի՝ Ֆրանսիական համալսարանի շենքի մոտ վերգետնյա հետիոտն անցման կառուցում

8. Շարունակական է իրացման գոտիների՝ մասնավորապես Գլխավոր պողոտայի, Հյուսիսային ճառագայթի կառուցապատման նպատակով նախագծերի քննարկման և համաձայնեցման գործընթացը:

9. Որպես քաղաքաշինական սկզբունք, բազմաբնակարան և բազմաֆունցիոնալ շենքերի նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են միայն դրանց ստորգետնյա հարկերում ավտոկայանատեղեր նախատեսելու պարագայում:

10. Ամփոփվել են նախկին երիտասարդության պալատի տեղում Երևանի քաղաքապետարանի, «Ավանգարդ մոթորս» կազմակերպության և ճարտարապետների միության կողմից նախագծային առաջարկի համար հայտարարված միջազգային մրցույթի արդյունքները: հաղթող է ճանաչվել ճապոնական «Կիոկազու Արայ» նախագծային կազմակերպությունը, որի կողմից մշակված նախագծային առաջարկը քննարկվել է Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի կողմից:

11. Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի և Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածի վերակառուցման հայեցակարգը քննարկվել և ընդունվել է Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի կողմից։

12. Օղակաձև զբոսայգում կատարվել են վերակառուցման և բարեկարգման աշխատանքներ՝ վերականգնվել են ամբողջ այգու կենտրոնական ճեմուղու լուսավորության ցանցը, ոռոգման ցանցը, այգու որոշ հատվածներում կենտրոնական հատվածի սալա հատակը, կատարվել է ծառերի սանիտարական էտ, սիզամարգերը նորացվել են, տեղադրվել են նոր նստարաններ։

13. «Հաղթանակ» զբոսայգու տարածքի վերակառուցման, արդիականացման, այգին համապատասխան նոր սարքավորումներով հագեցնելու նպատակով հաշվառվել են տարածքում գործող հողօգտագործողները։ Նրանց և մասնավոր այլ ներդրողների հետ անցկացվում են քննարկումներ նշված խնդիրների լուծման համար։

14. Երևան քաղաքի վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կատարվում են աշխատանքներ Հրազդանի կիրճում էկոլոգիական կրթության և կենսաբազմազանության պահպանման ազգային կենտրոնի և կենդանաբանական այգու ստեղծման ուղղությամբ։

15. Պատմության և մշակույթի հուշարձանների տարածքների պահպանման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Ռազմավարական խնդիր համարելով «Էրեբունի» ամրոցի պատմական, մշակութային և գիտական արժեքի բացահայտումը, ինչպես նաև Երևանի այցեքարտը դարձնելու նպատակով, դրա ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, պահպանության և օգտագործման համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ «Էպեբունի» ամրոցը հանձնվել է քաղաքապետարանի ենթակայության։
- Ասիական զարգացման բանկի հետ համատեղ միջազգային փորձագետների միջոցով աշխատանքներ են ընթանում «Կարմիր բլուր» բնակատեղիի թանգարանացման ուղղությամբ։

16. Երևանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկություններով (մրցույթներով և աճուրդներով)

տրամադրման և օտարման նպատակով նախապատրաստվել են համապատասխան փաթեթներ։

17. Քաղաքի համար կարևորագույն մի շարք կառույցների համար քննարկվել և համաձայնեցվել են նախագծային փաստաթղթեր։

- Ծ. Իսակովի պողոտայի հ.27/8 հասցեում կառուցվելիք 3200 հանդիսատեսի համար նախատեսված հեծանվահրապարակ, որի շինարարական աշխատանքները սկսվել են «Ռենկո Արմէստեյտ» կազմակերպության կողմից
- «Զվարթնոց» օդանավակայանում 2-րդ մասնաշենք և երկհարկանի ավտոկայանատեղ
- «Զվարթնոց» օդանավակայանում նոր նախագահական համալիր (կառուցման համար տրվել է ճարտարապետա հատակագծային առաջադրանք)
- Ռուսական ուղղափառ եկեղեցու կաթողիկե տաճարի համալիր (Ծ.Իսակովի պողոտայի մոտ)
- «Հյուսիսային ճառագայթ» թաղամասի առանցքով՝ «Հայաստան» հուշահամալիրից մինչև Բաբայան փողոց հետիոտն ուղի և ճանապարհ։

Տրամադրվել են ճարտարապետա-հատակագծային առաջադրանքներ՝

- Կաթողիկե եկեղեցու համալիր (Աբովյան փող. հ.15 հասցեում)
- «Դվին» հյուրանոցի վերակառուցման (Պարոնյան փող.)
- Իրացվող «Կոնդ» թաղամասի - Սբ. Հովհաննես եկեղեցուն կից հատվածի կառուցապատման (սկսվել են հողային աշխատանքները)
- «Երազ» բնակելի թաղամասի կառուցապատման (Ազատության պող. հ.27)

18. Քաղաքի կարևորագույն հատվածներում վերսկսվել են կիսակառույց և անավարտ շինարարության օբյեկտների ավարտման հետ կապված, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նախագծային փաստաթղթերի վերահամաձայնեցման աշխատանքները՝

- Սևան հյուրանոցի տեղում բազմաֆունկցիոնալ կառույց
- «Անի» հյուրանոցի հարևանությամբ բազմաֆունկցիոնալ կառույց
- Բանկային համալիր քաղաքապետարանի շենքին հարակից տարածքում
- Կայարանամերձ հրապարակում բազմաֆունկցիոնալ կառույց (տրամադրվել է ՃՀԱ, և շինարարական հրապարակի կազմակերպման և գոյություն ունեցող կառույցի քանդման թույլտվություն)

# Հիմնախնդիրներ

- Երևան – քաղաքամերձ գոտի – ագլոմերացիա տարածքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված համատեղ նպատակահարմար քաղաքաշինական գործառույթների իրականացում և դրանց իրավական հիմքերի ստեղծում:
- Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի դրույթներին և գոտիավորման նախագծերում ամրագրված պահանջներին համապատասխան քաղաքի կառուցապատման ամբողջականացում և արդիականացում, առանձին հատվածների վերակառուցում և, մասնավորապես, բարոյապես մաշված, խարխուլ ֆոնդի իրացման արդյունքում քաղաքաշինական նոր կառուցապատման իրականացում:

Երևանի Կենտրոնի ֆունկցիոնալ, տրանսպորտային գերբեռնվածության թուլացում և այդ նպատակով՝

- Գլխավոր հատակագծով նախատեսված հատակագծային գոտիներում համաքաղաքային նշանակության գործառույթներով օժտված կենտրոնների ստեղծում՝ հարակից մարզերի հետ կապող հաղորդակցության մայրուղիների շուրջ:
- Երևանի փոքր կենտրոնի անմիջապես հարակից տարածքում միջազգային մշակութային, դիվանագիտական, գործարարական նոր կենտրոնի ստեղծում:
- Կենտրոն վարչական շրջանի առանձնացում՝ որպես ունիկալ քաղաքաշինական միջավայրով և գործառույթներով օժտված հատակագծային գոտի:
- Երևանի կենտրոնը շրջանցող մայրուղային ցանցի զարգացում, փողոցա-ճանապարհային ցանցի կատարելագործում, տրանսպորտային երթևեկության կազմակերպման ավտոմատացված համակարգի ստեղծում, ավտոտրանսպորտային միջոցները փողոցներում և նրանց հարակից տարածքներում կայանելու համալիր կանոնակարգման մեխանիզմների ներդնում:
- Հետիոտն շարժման անվտանգության նկատառումներից ելնելով ստորգետնյա և վերգետնյա անցումների կառուցում:

Մայրաքաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում, բարեկարգում, նոր կանաչ զանգվածների հիմնում, այդ թվում գյուղատնտեսական արտադրության համար զբաղեցված տարածքների աստիճանաբար վերապրոֆիլավորում:

Բակային տարածքների (բնակչության հանգստի և ժամանցի կազմակերպման առաջին մակարդակ) բարեկարգում, կանաչապատում, սպորտային և խաղահրապարակների ստեղծում, ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում:

Արդյունաբերական գոտիների և արտադրական օբեկտների հողային տարածքների օպտիմալացում, կանոնակարգում և ներքին վերակառուցում՝ նորագույն տեխնոլոգիաների պահանջներին համապատասխան: Կենտրոն վարչական շրջանի արդյունաբերական շենքերի և նրանցով զբաղված տարածքների վերապրոֆիլավորում՝ բնակելի և հասարակական բնույթի կառուցապատում իրականացնելու նպատակով:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում, վերականգնում, ժամանակակից կառուցապատման մեջ ընդգրկման և օգտագործման նպատակով սահմանված կարգով դրանց արդիականացում և վերակառուցում:

Ինժեներական հաղորդակցուղիների և ինժեներական ցանցերի արդիականացում: Անհրաժեշտ նոր հզորությունների ստեղծում:

## 2011 թվականի քաղաքաշինական ծրագրեր

***Քաղաքաշինական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների նպատակով 2011թ. նախատեսվում է ՀՀ մի շարք օրենքներում և իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ.***

- Երևան քաղաքի քաղաքաշինական կանոնադրության մշակում

Այն կսահմանի քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացակարգերը Երևան քաղաքում, որպես համայնքի, ինչպես նաև քաղաքաշինական սուբյեկտների իրավասությունները և պարտականությունները

- Հողամասերի տրամադրման, հողօգտագործման գործընթացներին վերաբերվող օրենսդրական ակտերում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների փաթեթի կազմում.

ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման

իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը սահմանելու մասին» հ.714 որոշման մեջ փոփոխություններ մտցնելու առաջարկությունների ներկայացում.

- Երևան քաղաքում շենքերի ճակատների պահպանման, վերականգնման և նորոգման կարգի մշակում և Երևանի քաղաքապետի 2007 թվականի մայիսի 22-ի հ.1290-Ն որոշմամբ հաստատված և ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցված կարգի վերանայում:

***Քաղաքաշինական ծրագրային և նախագծային փաստաթղթերի ստեղծում***

- Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրացման վերլուծության հիման վրա գլխավոր հատակագծի ճշգրտում (2010 թվականից շարունակական 2011թ.).
- Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում.
- Գլխավոր հատակագծի իրականացման 2006-2008թթ. ընթացքում մշակված ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացում:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանման, վերականգնման, ժամանակակից կառուցապատման մեջ ընդգրկման և օգտագործման նպատակով սահմանված կարգով դրանց արդիականացում և վերակառուցում՝ առավել վտանգված հուշարձանների վերականգնման նախագծային աշխատանքների կատարում. մասնավորապես՝

ա).Քաղաքատեղի Էրեբունի (Արին բերդ) միջնաբերդ

բ) »Կարմիր» (Խոջա փլավի) կամուրջ

- Համաքաղաքային նշանակության կենտրոնների ստեղծում

Կենտրոնի ֆունկցիոնալ, տրանսպորտային գերբեռնվածության թուլացման նպատակով, Երևանի գլխավոր հատակագծով նախանշված միավորված հատակագծային գոտիներում ագլոմարացիայի հետ կապող հիմնական տրանսպորտային հաղորդակցուղիների շուրջը համաքաղաքային նշանակության գործառույթների կենտրոնացման նպատակով նախատեսվում է համաքաղաքային նշանակության բազմաֆունցիոնալ համալիրների ստեղծում՝

<u>Տիչինայի փողոցին հարակից տարածք</u>

2011 թվականին Տիչինայի փողոցին հարակից տարածքում և «Դեֆանս հաուզինգ ինվեստ» ՓԲԸ-ին 2008 թվականի նոյեմբերի 5-ի հ.105/5-ԱԳ պայմանագրով վաճառված 118 հա մակերեսով ճշտված հողամասի սահմաններում նախատեսվում է

կառուցապատման, ճանապարհային և ինժեներական ցանցերի նախագծման աշխատանքների իրականացում:

Տիչինայի կենտրոնին և Սիլիկյան թաղամասին հարակից՝ «Դեֆանս հաուզինգ ինվեստ» ՓԲԸ-ին 2008 թվականի նոյեմբերի 5-ի հ.105/5-ԱԳ պայմանագրով վաճառված 118 հա մակերեսով հողամասի սահմաններում առկա հողօգտագործողների համար առանձնացված տարածքում, մշակված հողաբաժանման սխեմաների հիման վրա 2011թ. իրականացվելու են աճուրդային կարգով հողամասերի տրամադրման աշխատանքներ:

<u>Նորագյուղի տարածք-Երևան-Բերդ</u>

Երևանի կենտրոնի հարավ-արևմտյան տարածքում (մոտ 158 հա) Նորագյուղին (Պասկևիչի բլուր) հարակից մասում բազմաֆունկցիոնալ՝ գործարարական, դիվանագիտական և մշակութային միջազգային նոր կենտրոնի ստեղծման հետ կապված Երևան և Մոսկվա քաղաքների միջև կնքվել են համագործակցության պայմանագրեր, որի շրջանակներում գլխավոր ճարտարապետների մակարդակով ղեկավարվող աշխատանքային խմբի կողմից ներկայումս ընթանում է գործընթաց նախագծային առաջադրանքի դրույթների վերջնական ճշտման ուղղությամբ:

Նորագյուղում կիրառվելու է իրացվող գույքի փոխհատուցման բոլորովին նոր սկզբունք: Նորագյուղի բնակիչների տեղափոխման (փոխհատուցման) նպատակով Իսակովի պողոտային հարակից 2,0 հա տարածքում 2009 թվականին մշակվել է 16 հարկանի 10 բնակելի շենքերով բնակելի համալիրի էսքիզային նախագիծ: Բնակելի համալիր շինարարության ավարտի և բնակիչների տեղափոխումից հետո միայն կիրականացվեն բուն շենքերի իրացման աշխատանքները:

<u>«Մարս» գործարանին հարակից տարածք</u>

2010 թվականին սկսված բանակցային գործընթացները կշարունակվեն ծրագրի իրականացման՝ մասնավոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ (այդ թվում նաև արտասահմանյան ներդրողների հետ):

***Քաղաքաշինական կառուցապատման աշխատանքների իրականացում***

- Գերակա հանրային շահ ճանաչված՝ հասարակության և պետության կարիքների համար օտարվող հողամասերում քաղաքաշինական համալիրների կառուցում (իրացման, նախագծային և շինարարական աշխատանքների իրականացում)՝ 30-րդ թաղամաս, Կոնդ թաղամաս, Պուշկինի այգուն հարակից տարածք (Կոզեռն), Գր. Լուսավորիչ եկեղեցուն հարակից տարածք, Կրկեսին

հարակից տարածք, Գինու կոմբինատին հարող տարածք, Գլխավոր պողոտա (Արամ և Բուզանդ փողոցներին հարակից տարածքներ), «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայր, Նալբանդյան, Թումանյան, Ավագ Պետրոսյան փողոցներով պարփակված տարածք, Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի և Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածի վերակառուցում:

- Երևան քաղաքի վարչական շրջաններում հանգստի գոտիների ստեղծում

1. Շենգավիթ վարչական շրջանում՝ Հ.Հովսեփյան փող. «Շողակաթ» հեռուստաստուդիայի հարակից այգու տարածք
2. Աջափնյակ վարչական շրջանում՝ Հանրապետական հիվանդանոցի լճի և հարակից տարածք
3. Շարուրի և Շիրակի փողոցների հատվածի բակային տարածք

***Քաղաքի ճանապարհային ցանցի կատարելագործում***

- **Երևանի կենտրոնը շրջանցող մայրուղիների կառուցում և վերակառուցում, փողոցների կառուցում**

1. Շիրակի փողոցի և երկաթգծի հատման տեղամասից մինչև Արտաշատի խճուղու Նորագավիթը շրջանցող միջպետական նշանակության մայրուղի,
2. Շիրակի փողոցի և Արշակունյաց պողոտայի խաչմերուկից դեպի Թամանցիների փողոց, մայրուղին
3. Արգավանդի խաչմերուկը Շիրակ փողոցի հետ կապող ճանապարհի շինարարություն
4. Դավթաշեն կամուրջ - Հալաբյան փողոց - Աշտարակի խճուղի կապի վերակառուցում և վերականգնում
5. «Հայաստան» հուշահամալիրից մինչև Բաբայան փողոց հետիոտն և տրանսպորտային ճանապարհների շինարարություն («Հյուսիսային ճառագայթ» թաղամաս)
6. Դավիթ-Բեկ փողոցի վերակառուցման աշխատանքներ
7. Զաքյան-Տերյան փողոցների կապի շինարարության իրականացում
8. Տիգրան Պետրոսյան փող. խաչմերուկից Սասնա Ծռեր մայրուղու շարունակությունը դեպի Դավթաշենի 1-ին թաղամաս կառուցված մայրուղին
9. Դավթաշեն վարչական շրջանում Դավթաշեն 2-րդ թաղամասը հյուսիսով շրջանցող ճանապարհի անավարտ հատվածի նախագծում

10. Մամիկոնյանց փողոցը Հ.Էմինի փողոցին միացնող ճանապարհի նախագծային աշխատանքներ

- **Հետիոտն անցումներ**

2011թ. նախատեսվում է հետիոտն շարժման անվտանգության նկատառումներից ելնելով անցումների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարության իրականացում

***2011թ. նախատեսվում է կառուցել թվով 5 անցումներ՝***

- Ազատության պողոտայի Տոլստոյի անվան հ.128 դպրոցի հարևանությամբ վերգետնյա հետիոտն անցման կառուցում (նախագիծը իրականացվում է 2010թ.)
- Շիրազի փողոցի հ.26 շենքի մոտ հետիոտն վերգետնյա անցման կառուցում (նախագիծը իրականացվում է 2010թ.)
- Դ.Անհաղթի փողոցի հ.10 հասցեի՝ Ֆրանսիական համալսարանի շենքի մոտ վերգետնյա հետիոտն անցման կառուցում (նախագիծը իրականացվում է 2010թ.)
- Օրբելի-Բաղրամյան պողոտայի հատման հատվածում ստորգետնյա հետիոտն անցման կառուցում (նախագիծն առկա է)
- Սևակ-Ռուբինյանց խաչմերուկում ստորգետնյա հետիոտն անցման կառուցում (նախագիծն առկա է)

***2011թ. կազմվելու են նախագծանախահաշվային փաստաթղթեր թվով 10 անցումների համար՝***

- Արշակունյաց պող. տրամվայի նախկին հավաքակայանի մոտ վերգետնյա հետիոտն անցման
- Արշակունյաց-Շահամիրյանների (Տյուլենինի) խաչմերուկում վերգետնյա հետիոտն անցման
- Չարենցի փող. հ.75 հասցեի հ.10 Խրիմյան Հայրիկի անվ. դպրոցի մոտ (վերգետնյա կամ ստորգետնյա) անցման
- Լենինգրադյան փողոցի վրա (Սեբաստիա հյուրանոցի մոտ) վերգետնյա հետիոտն անցման
- Մյասնիկյան պող. ջրաշխարհի մոտ վերգետնյա հետիոտն անցման
- Ագաթանգեղոս-Խորենացու փողոցների հատման մասում վերգետնյա հետիոտն անցման
- Գր.Լուսավորչի փող. Մայակովսկու անվան դպրոցի մոտ հետիոտն անցման

- Սեբաստիա և Ա.Վեգների փող. հատման մասում վերգետնյա հետիոտն անցման
- Հասրաթյան փողոցի վրա վերգետնյա հետիոտն անցման
- Ֆիզիկայի ինստիտուտ-Հալաբյան փողոցի հատվածում հետիոտն անցման
- Թբիլիսյան խաչուղու հ.5, 7 շենքերի դիմաց (հանրակացարանների մոտ) վերգետնյա հետիոտն անցման
- Ծիծեռնակաբերդի խաչուղու վրա վերգետնյա հետիոտն անցման

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման համար 2010 թվականին Երևան քաղաքի բյուջեով նախատեսվել էր 110,000.0 հազ. դրամ, սակայն հաշվի առնելով աշխատանքների ծավալները 2010 թվականին կիրականացվի 60,000.0 հազ. դրամի աշխատանքներ, իսկ մնացած ծավալը նախատեսվել է 2011 թվականին։

# ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքի արտաքին գովազդի ոլորտում գործունեություն են ծավալում խոշոր այնպիսի կազմակերպություններ, ինչպիսին են «Նուշիկյան ասոցացիան», «Էգա», «Արաբելլա», «Իմեքս գրուպ», «Գարանտ Մեդիա», «Սիլ Կոնցեռն» ՍՊԸ-ները, «Յունիքորն Գրուպ» ՓԲԸ-ն և այլն: Այս կազմակերպությունները մատուցում են գովազդային վահանակների տեղադրման ծառայություններ: Նշված կազմակերպություններից մի քանիսն ունեն պաստառների լայնաֆորմատ տպագրության հնարավորություն:

Երևան քաղաքում տեղադրված գովազդային վահանակների 50%-ը բաժին է ընկնում Կենտրոն վարչական շրջանին:

Արտաքին գովազդի ոլորտը Երևանում կարգավորվում է «ՀՀ Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներով, Երևանի ավագանու 37-Ն որոշումով:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010 թվականի ընթացքում Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում ապամոնտաժվել են ապօրինի և ոչ պատշաճ ձևավորված գովազդային վահանակները:

Իրականացվել են «Վերջին Զանգի» միջոցառման տոնական զարդարման և բեմի տեղադրման աշխատանքներ: Դրոշակազարդման աշխատանքներ են կատարվել «ՀՀ Անկախության 19-ամյակի» տոնակատարության կապակցությամբ:

Երևան քաղաքի արտաքին ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ են կատարվել Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի՝ օգոստոսի 19-ին Երևան կատարած պետական այցի, օգոստոսի 20-ին ՀԱՊԿ անդամ երկրների ոչ պաշտոնական գագաթնաժողովի կապակցությամբ:

Էրեբունի-Երևան 2792-ամյակի տոնակատարության շրջանակներում կատարվել են Երևան քաղաքի տոնական ձևավորման, լուսավորության և դրոշակազարդման աշխատանքներ:

# Հիմնախնդիրներ

Երևան քաղաքի 12 վարչական շրջաններից Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններում թերի է զարգացած արտաքին գովազդը: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության կողմից աշխատանքներ են տարվում՝ այս վարչական շրջաններում գովազդատուների ընդգրկվածությունը մեծացնելու նպատակով:

# 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

2011 թվականին արտաքին ձևավորման և գովազդի ոլորտում կիրականացվեն «Վերջին Զանգի» տոնական ձևավորման և բեմի տեղադրման աշխատանքներ:

Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում տեղադրված Հայաստանի Հանրապետության պետական դրոշների նորացում:

ՀՀ Անկախության 20-ամյակի և Էրեբունի-Երևան 2793-ամյակի տոնակատարության շրջանակներում Երևան քաղաքում կիրականացվեն տոնական արտաքին ձևավորման աշխատանքներ:

2011 թվականի ամանորյա տոնական միջոցառումների շրջանակներում 12 վարչական շրջաններում կտեղադրվեն տոնածառեր: Տոնական ձևավորման նպատակով կտպագրվեն և Երևանում վահանակների վրա կտեղադրվեն տոնական պաստառներ:

Երևան քաղաքում դրոշակների տեղադրման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 67,000.0 հազ. դրամ:

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքում հաշվառված են թվով 83 երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքեր, որոնցից 23-ը ունեն փայտյա ծածկ և փայտե միջնորմային պատեր: Մայրաքաղաքում կա 50 վերգետնյա և ստորգետնյա հետիոտն անցումներ: Մայրաքաղաքում կա 736 կմ երկարությամբ 13 մլն քմ ընդհանուր մակերեսով 1013 փողոց:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերով իրականացվում են.

- Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված թվով 33 ջրային կառույցներից 24-ի և 29 կամուրջների ու կամրջային կառուցվածքներից 24-ի սպասարկում և շահագործում:
- փողոցների, բակերի, այգիների և այլ օբյեկտների (թվով 990) արտաքին լուսավորության ցանցի վերակառուցման և ասֆալտապատման աշխատանքեր: Ներկա դրությամբ շահագործվում է 1174 կմ երկարությամբ լուսաեվորության ցանց:
- Երևան քաղաքի տարածքում հաշվառված 401 պատմության և մշակույթի հուշարձանների (288-ը՝ պետական սեփականություն, 113-ը՝ Երևանի համայնքային սեփականություն), պատվանդանների վերանորոգման, ամրակայման, պահապանման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի նախաձեռնությամբ 2010 թվականից իրականացվող «Բարեկարգ Երևան» ծրագիրը նպատակաուղղված է առաջիկա 2-3 տարիների ընթացքում ամբողջությամբ բարեկարգելու մայրաքաղաքի բոլոր բակերը և լուսավորելու ինչպես բակային տարածքները, այնպես էլ երկրորդական փողոցները:

«Բարեկարգ Երևան» ծրագրի շրջանակներում 2010 թվականին Երևան քաղաքի թվով 112 բակային տարածքներում և 200 փողոցներում իրականացվել են

բարեկարգման աշխատանքներ. ասֆալտապատվել է մոտ 545.0 հազ. քմ տարածք: Այս աշխատանքների իրականացման համար ծախսվել է 3036.0 մլն դրամ:

2010 թվականի «Բարեկարգ Երևան» ծրագրի շրջանակներում բարեկարգվել է թվով 1202 բակ, որոնցից 136-ում տեղադրվել են մանկական խաղեր: Մինչև 2012 թվականը կբարեկարգվեն մայրաքաղաքի բոլոր բակային տարածքները: 2010 թվականին ասֆալտապատվել է 160 հազ. քմ բակային տարածք:

Երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու նպատակով, քաղաքապետի հանձնարարությամբ, բակերի կանաչապատման և բարեկարգման աշխատանքների հետ մեկտեղ սկսվել են բակային խաղահրապարակների բարեկարգման և խաղերի տեղադրման գործընթացը: 2010 թվականին նախատեսվում էր բարեկարգել 59 խաղահրապարակներ ու տեղադրել 80 խաղեր:

2010 թվականին իրականացվել են Թբիլիսյան խճուղու 4550մ երկարությամբ ճանապարհապատվածի վերակառուցման աշխատանքները (1557,0 մլն դրամ):

Կարևոր նշանակություն ուներ Ծիծեռնակաբերդի ճանապարհի և տրանսպորտային էստակադայի կառուցման ծրագիրը: Ծիծեռնակաբերդի խճուղու 1-ին և 2-րդ փուլի աշխատանքներն ուղղված են երթևեկության անխափան ընթացքի ապահովմանը: Նախկին ճանապարհն ընդլայնվել է 5 մետրով և կառուցվելու է տրանսպորտային էստակադա (5 մետր բարձրությամբ), որը Ցեղասպանության թանգարան և Մարզահամերգային համալիր մտնող և դուրս եկող մեքենաներին ազատ երթևեկելու հնարավորություն կտա: Այս ճանապարհի յուրաքանչյուր կողմում կառուցվել է 1.5 մետր լայնությամբ մայթեր, իսկ ամբողջ երկայնքով անցկացվել է լուսավորության նոր համակարգ: Ճանապարհի երկու կողմերում կառուցվել են մայթեր: Ճանապարհի 3 կմ երկայնքով տեղադրվել է ջրահեռացման համակարգ: Այս ծրագրի իրականացման համար Երևանի բյուջեից հատկացվել է 1.5 մլրդ դրամ, որից 2-րդ փուլի համար նախատեսվում է 866 մլն դրամ:

Մայրաքաղաքի որոշ փողոցներում կառուցված հենապատերը լուրջ վտանգ էին ներկայացնում երթևեկության, հարակից շենքերի և շինությունների, ինչպես նաև անցորդների համար: Այս խնդրի լուծման նպատակով վերակառուցվել են թվով վեց՝ Սարյան (400 գծմ), Լեո (94 գծմ), Օրբելի (150գծմ), Բաբաջանյան փողոցներում (310 գծմ), Նորքի 9-րդ զանգվածի հ.48 շենքի մոտի (26 գծմ) և ՀՀ նախագահի նստավայրին կից նրբանցքի ընդանուր 1050մ երկարությամբ հենապատերը: Այս ծրագրի իրականացման համար ծախսվել է 167.0 մլն դրամ: Վերակառուցման

աշխատանքների ընթացքում լուրջ ուշադրություն է հատկացվել ջրահեռացման համակարգերի կառուցմանը: Մայրաքաղաքում հենապատերի վերակառուցման ծրագիրը կշարունակվի նաև առաջիկա տարիներին:

Ընթացքի մեջ են Մանկական երկաթուղու մոտ՝ Հրազդանի կիրճի փլված ճանապարհահատվածի և հենապատի վերականգնման աշխատանքները: Նախատեսվում է հենապատի դիմաց տեղադրել երկաթ-բետոնե հավաքովի բլոկներ, որոնցով կսահմանափակվի ջրի հոսքը հենապատի տակ: Հենապատը պետք է երեսապատվի անդեզիտա-բազալտե ցիկլոպային շարվածքով: Հենապատի կառուցման ավարտից հետո կասֆալտապատվի ճանապարհը և կտեղադրվի մետաղական արգելապատնեշ:

Ավարտվել են Դավիթ Անհաղթ–Ռուբինյանց 1850մ երկարությամբ 253,0 մլն դրամի և Թամանցիների փողոցի 2140մ երկարության 288,0 մլն դրամի տրամվայի գծերի ապամոնտաժման ու տարածքի ասֆալտապատման աշխատանքները:

2010 թվականը նշանավորվել է բարեկարգման ոլորտում լայնածավալ աշխատանքների իրականացմամբ: Վերանորոգվեց և շահագործման հանձնվեց Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններն իրար միացնող Գարեգին Նժդեհի կամուրջը (450մ երկարությամբ), որը 1997 թվականից ճանաչվել էր վթարային:

Կամուրջը հիմնանորոգման համար օգտագործվել է մոտ 2600 խմ միաձույլ բետոն և երկաթ-բետոն, 1510տ ասֆալտբետոն: Թարմացվել է կամրջի արտաքին տեսքը, տեղադրվել են նոր բազրիքներ: Ասֆալտապատվել է 20 մետր լայնությամբ երթևեկելի շերտը, նորոգվել են 3 մետր լայնությամբ երկկողմանի մայթերը: Կամրջի ողջ երկայնքով անցկացվել են լուսատուներ: Հիմնանորոգման աշխատանքների արդյունքում փոխվել են բոլոր 23 թռիչքները և 328 հեծանները, ուժեղացել է կրողունակությունը, նախկինում վթարային համարվող կամուրջը դարձել է սեյսմակայուն 9-բալանոց սանդղակին համաձայն: Կամուրջի հիմնանորոգման համար ծախսվել է 1823 մլն դրամ:

Ամրացվել են թվով 3 երրորդ աստիճանի վնասվածության շենք 141.6 մլն դրամի, երկուսը՝ ընթացքի մեջ են, որոնք կավարտվեն տարեվերջին: Թվով 84 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 39-ում ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքներն ավարտվել են:

Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ 2010 թվականին ընթացք է տրվել Երևան քաղաքի շենքերի ճակատային մասի և պատշգամբների պատշաճ տեսքի վերականգնման ծրագրին, որի շրջանակներում իրականացվում են լվացման,

մաքրման ու վերանորոգման աշխատանքներ: Ծրագիրը նախատեսված է իրականացնել 2 փուլով, որի արդյունքում վերականգնվելու են թվով 40 շենքերի արտաքին տեսքը: Շենքերի լվացման աշխատանքներն իրականցվում են հատուկ տեխնիկայի միջոցով (ցնցուղ), որը չի վնասում շենքերին: Երևանի բյուջեից 2010 թվականի ծրագրի համար հատկացվել է 160 մլն դրամ: Ծրագիրն ունենալու է շարունակական բնույթ և իր մեջ ներառելու է ոչ միայն Մաշտոցի պողոտայի, այլ նաև մյուս վարչական շրջանների շենքերը: Այդ նպատակով բոլոր վարչական շրջաններին հանձնարարվել է գույքագրել շենքերը և հայտեր ներկայացնել՝ հաջորդ տարի աշխատանքներ սկսելու համար:

Արդեն ավարտվել են Մաշտոցի պողոտայի թվով 10 շենքերի ճակատային մասերի վերանորոգման և հարդարման աշխատանքները 55.0 մլն դրամի և ընթացքի մեջ է ևս 30 շենքերի վերանորոգման և հարդարման աշխատանքները:

Իրականացվել են Աջափնյակ և Քանաքեռ-Զեյթուն համայնքների 1140 մետր երկարության 5.0 մլն դրամի ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքներ:

Իրականացվել են «Մայր Հայաստան» հուշարձան տանող ճանապարհի և հարակից տարածքի 4.4 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ:

Շուրջ 7200 բնակիչ ունեցող Սիլիկյան թաղամասը 70 տարի կոյուղացանց չի ունեցել: Նոր կոյուղագիծ անցկացնելու 1-ին փուլի աշխատանքներն սկսվել էին 2009 թվականի մայիսից: 1-ին փուլի ընթացքում կառուցվել էր կոյուղացանցի 6 կմ-ոց հատվածը: 2010 թվականի ընթացքում ավարտվեցին կոյուղագծի անցկացման երկրորդ փուլի աշխատանքները: 2 փուլի աշխատանքների արդյունքում Սիլիկյան թաղամասում անցկացվեց 9500գծմ կոյուղագիծ: Այս ծրագրի արժեքը կազմել է 520 մլն դրամ:

## Հիմնախնդիրներ

- *Երևան քաղաքի փողոցների և նրա բաղադրիչ էլեմենտների բարեկարգումը:*
- *Բնակ. ֆոնդի հիմնական և ընթացիկ նորոգումը, 3-րդ աստիճանի վնասվածության շենքերի վերականգնում-ամրացումը:*

# 2011 թվականին նախատեսվող միջոցառումները

2011 թվականին նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման, փորձաքննության անցկացման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 150000,0 հազ. դրամ:

Երևան քաղաքի կամուրջների սպասարկում և շահագործում համար կտրամադրվի 100000,0 հազ. դրամ, իսկ Ջրային կառույցների շահագործման և պահպանման համար՝ 329000,0 հազ. դրամ

Յուրաքանչյուր վարչական շրջանում կկառուցվեն մեկական մինի ֆուտբոլի դաշտի կառուցում (12 տեղ) ՝ 120 մլն դրամ:

Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հուշարձանների նորոգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացման համար (նոր նախագծերի պատվիրում) նախատեսված է 20000,0 հազ. դրամ

Երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքերի վերակառուցման, վերականգնման և ամրացման համար 2011 թվականին նախատեսվել է 350,000.0 հազ. դրամ: Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար շենքերի կառուցում ծրագրով նախատեսվել է 1,750,693.0 հազ. դրամ՝ 2010 թվականին սկսված բազսաբնակապան շենքի աշխատանքներն ավարտելու համար:

Մայրուղիների և փողոցների վերակառուցման և հիմնանորոգման նպատակով նախատեսվել է 3,728,782.6 հազ. դրամ: Ծրագիրը նախատեսում է Դավիթ-Բեկ փողոցի վերակառուցում (Նոր Նորքի 7-րդ զանգվածից մինչև Սարի-Թաղի խաչմերուկ)՝ 1350000,0 հազ. դրամի 3000մ երկարության, Խաչիկ Դաշտենցի փողոցի տրամվայի գծերի ապամոնտաժում և տարածքի ասֆալտապատում՝ 100000.0 հազ. դրամի 1700մ երկարության, Էրեբունի փողոցի տրամվայի գծերի ապամոնտաժում և տարածքի ասֆալտապատում՝ 280000,0 հազ. դրամի 2050մ երկարության, Զաքյան-Տերյան փողոցների կապի կառուցումը, «Հայաստան» հուշահամալիրից մինչև Բաբայան փողոց ճանապարհի շինարարությունը, ինչպես նաև Ծիծեռնակաբերդի խճուղու վերակառուցման 2-րդ փուլի ավարտումը:

Վթարային հենապատերի վերակառուցման աշխատանքների համար նախատեսվել է 104,797.4 հազ. դրամ: Վթարված եզրաքարերի վերանորոգման և նորերով փոխարինման համար նախատեսվել է 15,998.6 հազ. դրամ:

Կամրջային կառուցվածքների վերականգնման և պահպանման աշխատանքների համար նախատեսվել է 675,000.0 հազ. դրամ, որից Դավթաշենի կամրջի վերականգնման համար՝՝ 585,000.0 հազ. դրամ։

Հրազդանի կիրճում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար նախատեսվում է 2,000.0 հազ. դրամ։

Իսակովի, Մյասնիկյան, Աթենքի և այլ փողոցների ընթացիկ բարեկարգման աշխատանքների համար նախատեսվում է 40,000.0 հազ. դրամ։

2011 թվականին Երևան քաղաքի շենքերի ֆասադների ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքների իրականացման նախատեսված է 200000,0 հազ. դրամ

Մշակույթի և կրթության օբյեկտների ջեռուցման աշխատանքների համար նախատեսվել է 100000,0 հազ. դրամ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման աշխատանքների համար՝ 2000000.0 հազ. դրամ, երաժշտական դպրոցների հիմնանորոգման համար՝ 150000.0 հազ. դրամ։

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 325,000.0 հազ. դրամ։

Երևան քաղաքի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման համար նախատեսվել է 792,201.6 հազ. դրամ։

2011 թվականին ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և պահպանման համար նախատեսվել է 4,204,000.0 հազ. դրամ, իսկ հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար՝ 716,000.0 հազ. դրամ։ Այս աշխատանքների իրականացման համար նախատեսված 4,290,000.0 հազ. դրամից 3,284,000.0 հազ. դրամը նախատեսված է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով որպես նպատակային հատկացում (սուբվենցիա)։

Հետիոտն անցումների կառուցման և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված է 385,868.9 հազ. դրամ, որից՝

1. Բաղրամյան-Օրբելի խաչմերուկում ստորգետնյա հետիոտն անցման համար՝ 152,000.0 հազ. դրամ

2. Ազատության պողոտայում, Դավիթ Անհաղթ, Շիրազի և Հալաբյան փողոցներում վերգետնյա հետոտն անցումների համար՝ 207,868.9 հազ. դրամ

2011 թվականին կոյուղագծի կառուցման և վերանորոգման համար նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում կիրականացվեն Արաբկիր վարչական շրջանում վթարված կոյուղագծի վերականգնման աշխատանքները։

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքի վարչական տարածքը 22659 հեկտար է, այդ թվում՝ պետական սեփականության հողերը կազմում են 14839 հա, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության՝ 7807 հա, մնացած 13 հեկտարը օտարերկրյա պետությունների սեփականություն:

Երևան քաղաքում հաշվառված է բազմաբնակարան 4720 շենք:

2010 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Երևան քաղաքում հաշվառված են 4-րդ աստճանի վթարայնության 9 շենք 482 բնակարաններով, այդ թվում 262-ը Աջափնյակ, 134-ը Էրեբունի, 52-ը Շենգավիթ, 27-ը Կենտրոն և 7-ը Արաբկիր վարչական շրջաններում:

Երևանում կան ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման պահանջներին չհամապատասխանող, պետական գրանցում ունեցող հաշվառված, բայց չհասցեավորված շինություններ, որոնց հաշվառման աշխատանքները դեռ չեն ավարտվել:

Լուծման կարիք ունեն Երևան քաղաքի մի շարք վարչական շրջաններում 1991 թվականին որպես տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված նախկինում սեփականաշնորհված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգման հարցերը:

Կարգավորման կարիք ունի ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» հ.947-Ն որոշմամբ հաստատված «»Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքներին բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» կարգի համաձայն հաշվառման գործընթացը:

Երևանի քաղաքապետարանի կողմից սպասարկվում է շուրջ 22 հազար հեկտար հողամասերի վարձակալության և կառուցապատման պայմանագրեր:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010 թվականի օգոստոսի 19-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի հ.604-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հ.1047-Ն որոշումը, որով սահմանվել է սեփականության իրավունքով Երևան քաղաքին փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը։

ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու» հ.1517-Ն որոշմամբ Երևանի քաղաքային համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են պետական սեփականության հողամասերից 11330.61 հա, որից գյուղատնտեսական նշանակության՝ 3158.44 հա, բնակավայրերի հողեր՝ 6278.40 հա, արդյունաբերական, ընդերք-օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտներ՝ 969.69 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ 107.25 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 853.34 հա, ջրային հողեր 13.49 հա։

2010 թվականին իրականացված ծրագրերը կապված են եղել Երևան քաղաքում 4-րդ կարգի վնասվածություն ունեցող բազմաբնակարան և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների վերաբնակեցման հետ։ Այսպես, 2010 թվականին շարունակվեց և ավարտին հասցվեց Աէրացիայի հ.7 հանրակացարանային բնակելի շենքի 72 ընտանիքների, Մարգարյան 45 և Մարգարյան 37 շենքերի համապատասխանաբար 48 և 44 ընտանիքների վերաբնակեցման աշխատանքները, որի համար օգտագործվել է շահագործման կընդունվի Քանաքեռի 14-րդ փողոցում պետական միջոցների հաշվին կառուցված 50- բնակարանանոց բնակելի շենքը։

Ավարտվել է Արցախի փողոցի 2-րդ նրբանցքի (հ.5 ուսումնարանի) 4-րդ աստիճանի վնասվածության հանրակացարանային բնակելի շենքի բնակիչների հաշվառումը։

Հետևողական աշխատանք է տարվել Երևանի քաղաքապետարան հասցեագրված քաղաքացիների, իրավաբանական անձանց շուրջ 11500 դիմումների,

գրությունների ժամանակային քննարկման, պատասխանների հիմնավորվածության ուղղությամբ:

# Հիմնախնդիրներ

Կարգավորման կարիք ունի Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բնակելի և ոչ բնակելի տարածքների ոչ նպատակային նշանակությամբ փաստացի օգտագործվող տարածքների գործառական նշանակության փոփոխության հարցերը, այդ թվում՝ նկուղ, կիսանկուղ, ձեղնահարկ, մանսարդ:

Դեռևս լուծում չի տրվել սողանքի հետևանքով վթարային և բնակության համար ոչ պիտանի դարձած Սարի Թաղի 18-րդ փողոցի հ.հ.33, 35, 37, 39 և 41 հասցեներում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային հարցերին, որոնք ըստ ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 26-ի հ.204-Ն որոշման ենթակա են վերաբնակեցման:

Երևան քաղաքում 1991 թվականից սկսած, որպես տնամերձ, բնակարանային շինարարության համար տրված հողամասերից դեռևս լուծում չեն ստացել Նոր-Խարբերդի տոհմային թռչնաբուծական կոլտնտեսության 80.0 հա, Ն. Չարբախ գյուղի 16.0 հա, Նորաշենի, Նորագավիթի, Հաղթանակ գյուղի նախկինում սեփականաշնորհված հողամասերի, ինչպես նաև Նոր Խարբերդի այգեգործական տնտեսությունների վերաբերյալ խնդիրները, տեղեկատվության բացակայության պայմաններում խնդրի կարգավորման համար հիմնավոր առաջարկություններ չեն արվել:

Կշարունակվեն քննարկումները վթարային բնակելի շենքերից բնակիչների վերաբնակեցման ժամանակ բնակարանային շինարարությունը տվյալ վարչական շրջանի սահմաններում իրականացնելու համար:

Վարձակալության, կառուցապատման հողամասերի ուղղակի վաճառքի մասին հողամասի անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով կնքված պայմանագրերի ելեկտրային արխիվի ստեղծումը, անհրաժեշտության դեպքում ոլորտը կարգավորող Երևանի քաղաքապետի որոշումների նախապատրաստումը:

Անհրաժեշտ է իրականացնել ընթացիկ հաշվառման և ամենամյա հողային հաշվեկշռի կազմման աշխատանքների հստակեցում, Երևան քաղաքի վարչական տարածքում կատարված կադաստրային քարտեզագրման արդյունքների շարունակական ճշգրտում:

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2011 թվականին նախատեսվում է շարունակել Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի (բնակելի տների) բնակիչների անվտանգության ապահովման, անկանխատեսելի հետևանքները բացառելու, դրանցում բնակվող բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու հետ կապված աշխատանքները:

Երևան քաղաքի Սարի թաղի 18-րդ փողոցի հ.33, 35, 37, 39 և 41 հասցեներում գտնվող և սողանքի հետևանքով վթարային և բնակության համար ոչ պիտանի դարձած 10 բնակելի տների բնակիչների անվտանգությունն ապահովելու համար ընդունվել է ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 26-ի հ.204-Ն որոշումը, որի համաձայն 2009-2011 թվականների պետական բյուջեներով նախատեսվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցվող շենքերից 2011 թվականին բնակարաններ կհատկացվեն նաև նշված տներում բնակվող ընտանիքներին:

Սկսվել են Նոր Խարբերդի այգեգործական տնտեսությունների հողօգտագործման իրավունքների ձևակերպումները, սակայն այս տարածքում դեռևս առկա են կարգավիճակը չճշտված շուրջ 4800 տնտեսությունների խնդիրներ, որոնց կարգավորմանն ուղղված 2011 թվականին կիրականացվեն համապատասխան աշխատանքներ:

2011 թվականին կշարունակվեն Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերում դեռևս չսեփականաշնորհված բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացը:

Կուսումնասիրվեն Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման արդյունավետության վիճակը և առաջարկներ կարվեն դրանց պահպանման և շահագործման հետ կապված խնդիրների հետագա կարգավորմանը ուղղված ծրագրերի իրականացման համար:

Կշարունակվի համայնքային գույքի պետական գրանցման գործընթացը:

Նախատեսվում է առաջարկություններ նախապատրաստել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի պահանջների կատարման և Երևանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագրի կազմման համար:

Կապահովվի Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի՝ (գրանցված և չգրանցված) տարեկան գույքագրման աշխատանքների կատարումը։

2011 թվականին միջոցներ կձեռնարկվեն վերաբնակեցման ենթակա վթարայնության 4-րդ աստիճան ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի, հանրակացարանների, քանդման և բնակիչների վերաբնակեցման առաջնահերթությունները ճշտելու ուղղությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշմամբ հաստատված կարգը։

Հնարավոր միջոցներ կձեռնարկվեն և առաջարկներ կնախապատրաստվի վթարային քանդման ենթակա շենքերից բնակիչների վերաբնակեցման ժամանակ բնակարանային շինարարությունը տվյալ վարչական շրջանի սահմաններում իրականացնելու համար։

Կհաշվառվեն նախկին շրջխորհուրդների գործկոմների որոշումներով չկառուցվող բնակելի շենքերից քաղաքացիներին տրամադրված որոշումները, և արդյունքներից ելնելով կնախապատրաստվեն խնդրի կարգավորման առաջարկություններ։

2011 թվականին կշարունակվեն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, գույքի նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման գործառույթները։

Աջափնյակ, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում կսկսվեն բազմաբնակարան շենքերի ոչ բնակելի տարածքների հաշվառման գործընթացը՝ ներգրավելով վարչական շրջանների և համատիրությունների ներկայացուցիչներին։

Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատվել է զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր 95 ընտանիքներին հաշվառման ցուցակներում ընդգրկելու հարցը

# ԿՈՄՈՒՆԱԼ ՈԼՈՐՏ

## Ջրամատակարարում և ջրահեռացում

## Վիճակի բնութագիր

Մայրաքաղաքում ջուրը սպառողին բաշխվում է 1320կմ երկարություն ունեցող բաշխիչ ցանցի և 245 հազ. խմ. տարողությամբ սանիտարական գոտիներում տեղակայված օրվա կարգավորող 23 ջրավազանների (ՕԿՋ) միջոցով:

Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգն ունի 103 կապտաժային կառույցներ, 39 արտեզյան հորատանցքեր, 5 խոշոր պոմպակայաններ, 30 խորքային հորատանցքեր և 803 կմ մայրուղային ջրատարներ: Երևան քաղաք մտնող ջրաքանակի շուրջ 47% տրվում է մեխանիկական եղանակով: Երևան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի շուրջ 75% կառուցվել է ավելի քան 25 տարի առաջ և անհրաժեշտ ներդրումների բացակայության պատճառով գտնվում է անբավարար սանիտարատեխնիկական վիճակում:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

«Երևան Ջուր» ՓԲ ընկերությունը պայմանագրային 4-րդ տարում (01.05.2009-01.06-2010թթ.) ջրի հոսակորուստների նվազեցմանն ուղղված կատարվել է համակարգային փոփոխություններ և ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ: Ընկերությունում ստեղծվել և 2010 թվականից գործում է «Ջրային հաշվեկշռի համակարգման և վերահսկողության տնօրինություն»:

Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի իրականացման ուղղությամբ կատարվում են ջրամատակարարման բաշխիչ ցանցի գոտիավորման աշխատանքներ:

Աշխատանքներ են տարվում բաժանորդների ծառայությունների մակարդակի և «1-85» հեռախոսային կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ներդրվել և հաջողությամբ կիրառվում է Բաժանորդներից ստացվող դիմում-բողոքների կառավարման ավտոմատացված համակարգչային ծրագիրը:

# Հիմնախնդիրներ

- *ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի բարելավում, շահագործման ու պահպանման ծախսերի օպտիմալացում,*
- *ջրի կորուստների էական կրճատում.*
- *ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի ընդլայնում,*
- *պոմպակայանների և բակային պոմպերի նորացում և փոխարինում:*
- *ջրամատակարարման համակարգի գոտիավորման աշխատանքների իրականացում*
- *մակերևույթային ջրերի հեռացման համակարգի շահագործման արդյունավետության բարձրացում*

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

***1. Կայուն ջրամատակարարում, Ջրատար համակարգի և բաշխիչ ցանցի կառավարում, կորուստների կրճատում***

Պայմանագրային 5-րդ տարում (01.06.2010-31.05.2011թթ.) «Երևան Ջուր» ՓԲ ընկերության կողմից կշարունակվեն կառավարման ոլորտի բարեփոխումների և արդիականացման, ջրամատակարարման բաշխիչ ցանցի գոտիավորման, ճնշման կարգավորիչ փականների տեղադրման, հոսակորուստների հայտնաբերման և վերացման աշխատանքները:

Գոտիավորման աշխատանքներին զուգընթաց ջրի կորուստները նվազման միտում ունեն: Օրվա ընթացքում Երևան քաղաքում ջրամատակարարման միջին տևողությունը 3-րդ տարում (01.06.2008 – 01.05.2009թթ.) կազմել է 80.1%, 4-րդ տարվա առաջին կիսամյակում՝ 83.2%, իսկ դեկտեմբեր-հունվար ամիսներին՝ 89.6 %:

«Վարձակալության պայմանագրով» 5-րդ տարում ջրամատակարարման շարունակականության համար սահմանված է 82.5%, սակայն այս ցուցանիշը կգերազանցվի: Ուշադրության կենտրոնում է լինելու ջրամատակարարման քիչ ժամեր (4-6 ժամ) ունեցող տարածքների վրա, որտեղ ցանցը չափազանց վնասված է և վերականգնման կարիք ունի: Նախատեսվում է այդ տարածքներում հասնել նվազագույնը 8-ժամյա ջրամատակարման:

Պայմանագրային 5-րդ (01.06.2010-31.05.2011թթ.) տարում հոսակորուստները նախատեսվում է նվազեցնել մինչև 283.9 մլն խմ կամ միջինը 9000լ/վրկ:

Նախնական գնահատմամբ, ուսումնասիրվող բազմաբնակարան շենքերում միջին կորուստը կազմում է շենքին տրված ջրաքանակի 50%-ը: Ընդ որում, տեխնիկական կորուստը մոտավոր գնահատմամբ կազմում է շենքի ներսում կորստի 15%-ը:

### *2. Էներգիայի կառավարման պլան*

«Երևան Ջուր» ՓԲԸ-ն նախատեսում է պայմանագրային 5-րդ տարում էլեկտրաէներգիայի միջին ամսական ծախսը պայմանագրային 4-րդ տարվա համեմատ 8.46 մլն կվտ.ժ-ից նվազեցնել մինչև 7.9 մլն կվտ.ժ-ի (կամ տարեկան 94.8 մլն կվտ.ժ-ի): Պայմանագրային 5-րդ տարում ջրարտադրությունը նախատեսվում է նվազեցնել մոտ 17 մլն խմ-ով, որից 15 մլն խմ-ը՝ մեխանիկական ջրատադրության նվազեցման հաշվին:

Մասնավորապես, Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրով իրականացվող «Արզնի-Երևան ջրամատակարարման համակարգի և Արզնիում 4-րդ աղբյուրի վերականգնման» արդյունքում «կորչող» 300 լ/վրկ ջրաքանակի» և «Արզականի ջրաղբյուրի մոտ 50 լ/վրկ ինքնահոս ջրաքանակի» կապտաժավորումը, ինչպես նաև «Գառնու աղբյուրների, Գողթի կապտաժների վերանորոգմամբ» 30 լ/վրկ ջրաքանակի ավելացումը հնարավորություն կընձեռեն նվազեցնել էներգատար պոմպերով ջրարտադրությունը:

### *3. Կեղտաջրերի մաքրում և շրջակա միջավայրի պահպանում*

Ներկայումս կեղտաջրերի մաքրման կայանը գործում է մասնակի: Կատարվում է միայն մեխանիկական զատում 16 մմ ճաղավանդակով և ավազորսիչներով, որոնց մաքրումը իրականացվում է տարեկան 4 անգամ:

3-րդ պայմանագրային տարվա ընթացքում «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից որոշակի աշխատանքներ են կատարվել Աէրացիա կայանի վերանորոգման ռազմավարության հստակեցման ուղղությամբ:

2007թ. մայիսի 27-ին Ֆրանսիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությունները կնքեցին «ֆինանսական արձանագրություն», որի համաձայն Ֆրանսիայի կառավարության կողմից Երևան քաղաքի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրի իրականացման

համար պահուստային ֆոնդից հատկացվել է 23.9 մլն եվրո գումարի չափով կոնցեսիոն ֆինանսավորում և 500 հազ. եվրո դրամաշնորհ, որը նախատեսված է ծրագրի տեխնիկական աջակցության համար և պետք է հաստատի ծրագրի տնտեսական կենսունակությունը ու իրականացնի ջրի սակագնային ուսումնասիրություն: Ծրագրի ուսումնասիրության իրականացման համար ընտրվել է խորհրդատու՝ «Սոգրեա Կոնսուլտանտս» ընկերությունը:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ և «Սոգրեա Կոնսուլտանտս» ընկերության միջև 2009թ. սեպտեմբերի 30-ին կնքվել է «Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ծրագրի իրագործելիության ուսումնասիրության, Երևան քաղաքի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրի աջակցման ծառայությունների» N ՄԲԾՁԲ-09/9 գնման պայմանագիր:

«Աէրացիա» կայանի վերականգնման ներդրումային ծրագրի համար նախատեսված է 6.0 մլն եվրո, որը բաղկացած է հետևյալ բաղադրիչ գործողություններից և ունի հետևյալ նկարագիրը.

- հին կայանի առաջնային պարզարանների ամրացում
- նոր սարքավորումների տեղադրում կեղտաջրերի նախնական մշակման (ճաղավանդակներ-ավազորսիչներ-յուղորսիչներ) և առաջնային պարզարանների համար (6 պարզարանի համար)
- առաջնային տիղմի մեխանիկական մշակման ներդրման՝ մեխանիկական ջրազրկման և կիրով կայունացման միջոցով
- Տիղմի գյուղատնտեսական պիտանելիության որոշման հնարավորություն
- կուսումնասիրվի մեթանտենկերում տիղմի մշակման տարբերակն իրականացնելու հնարավորությունը, որի արդյունքում կարտադրվի էներգիա և կկրճատվի հեռացվելիք տիղմի քանակը: Տարբերակ, որ մեծ ներդրումներ է պահանջում, սակայն կրճատում է շահագործման ծախսերը:

Մաքրման նպատակն է՝ նվազեցնել կայան մտնող ջրի աղտոտվածությունը 40%-ով:

## *Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների ծրագիր (ՊՎԸԱԾ)*

Համաձայն «Վարձակալության պայմանագրի» 10 տարիների ընթացքում պետք է կատարվեն 10, 644, 480, 000 ՀՀ դրամի աշխատանքներ:

Պայմանագրով առաջին չորս տարիների համար նախատեսված 2, 661, 120, 000 ՀՀ դրամի դիմաց 2010թ. մարտ ամսի դրությամբ արդեն իսկ կատարվել են 3, 188, 278, 194 ՀՀ դրամի աշխատանքներ:

Պայմանագրային 5-րդ տարում նախատեսվում է կատարել «Վարձակալության պայմանագրով» այդ տարվա համար սահմանված շուրջ 725.7 մլն դրամի աշխատանքներ:

Ընկերության շահագործման տեղամասերի կողմից ջրամատակարարման բաշխիչ և կոյուղու ցանցերի բարելավման համար ներկայացված ավելի քան 1 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ աշխատանքների ցանկից ընտրվել են 2011 թվականի ընթացքում իրականացվելիք աշխատանքների առաջնահերթությունները՝

- Բաշխիչ ցանցի համար՝ 271,1 մլն դրամ
- Կոյուղու ցանցի համար՝ 112,8 մլն դրամ

# Բազմաբնակարան շենքերի կառավարում

## Վիճակի բնութագիր

2010թ. Երևանում հաշվառված 4720 բազմաբնակարան շենքերից, 237-ը գտնվում են Ավան վարչական շրջանում, 664-ը՝ Արաբկիրում, 419-ը՝ Աջափնյակում, 186-ը՝ Դավթաշենում, 261-ը՝ Էրեբունիում, 698-ը՝ Կենտրոնում, 575-ը՝ Մալաթիա-Սեբաբտիայում, 665-ը՝ Նոր Նորքում, 626-ը՝ Շենգավիթում, 353-ը՝ Քանաքեռ-Զեյթունում և 36-ը՝ Նուբարաշենում:

Երևանի 4419 բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է 286 համատիրությունների, 117-ը՝ լիազորագրային կառավարիչների, 175-ը՝ վարչական շրջանների ղեկավարների և 9-ը՝ ԿԷՉ-ի կողմից:

Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար: Վատթար վիճակում է գտնվում վերելակային տնտեսությունը:

Ներկայումս ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման բնագավառի բարեփոխումներին ուղղված միջոցառումների ծրագրի նախագիծ է մշակվել, որը քննարկվել է ՀՀ կառավարությունում և 2008 թվականի ապրիլի 28-ի հ.380-Ա որոշմամբ արժանացել է կառավարության հավանությանը:

Համաշխարհային բանկի փորձագետ է հրավիրվել Երևան, որի ներգրավման նպատակն է երկրի բնակֆոնդի պահպանման և շահագործման ազգային ռազմավարության ուսումնասիրությունը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը: Վերջինիս հանձնարարվել է 6-ամսյա ժամկետում մշակել և կառավարության քննարկմանը ներկայացնել բազմաբնակարան ֆոնդի կառավարման բարելավման 5-ամյա ծրագիր: Նախագիծը կազմվել է և այն իր մեջ ներառում է բնակարանային ֆոնդի շահագործման և կառավարման բնագավառի հիմնախնդիրները, ծծրագրի նպատակը, բարեփոխումների հիմնական սկզբունքները, կառավարման նոր մոդելի նկարագիրը, իրականացման հիմնական ուղղությունները, ֆինանսական գնահատականը, միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010 թվականի ընթացքում բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգման համար ծախսվել է 243.5 մլն դրամ, թեք լանջավոր տանիքների վերանորոգման համար՝ 88.5 մլն դրամ: Կատարվել են 32.0 մլն դրամի բարեկարգման աշխատանքներ:

# Հիմնախնդիրներ

- *Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ*
- *Բնակֆոնդի սպասարկումն իրականացնող մասնավոր կազմակերպությունների ներգրավման միջոցով սպասարկման ինստիտուտի ձևավորման անհրաժեշտություն*
- *Պետական աջակցությանն անհրաժեշտ միջամտություն և աջակցություն*
- *Բազմաբնակարան շենքերի տեխնիկական անձնագրավորման անհրաժեշտություն*

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2011 թվականին նախատեսվում է բազմաբնակարան շենքերի կառավարման հայեցակարգի մշակում, տեղեկատվական և խորհրդատվական օգնություն, հակադարձ կապի մշակում և ներդրում, պարտադիր նորմերի կատարման պահանջների վերահսկողություն:

2011 թվտականին բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգման համար նախատեսվում է 568,034.1 հազ. դրամ: այս ծրագիրը շարունակական է և նախատեսվում է ավարտել 3 տարվա ընթացքում:

# Վերելակային տնտեսություն

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքի բարձրահարկ շենքերում վերալակների թիվը 4294 է, որի աշխատող՝ 4121։ Ավան վարչական շրջանում հաշվառված է 330 վերելակ, Արաբկիրում՝ 460, Աջափնյակում՝ 302, Դավթաշենում՝ 385, Էրեբունիում՝ 211, կենտրոնում՝ 580, Մալաթիա-Սեբաստիայում՝ 958, Նոր Նորքում՝ 589, Շենգավիթում՝ 216, Քանաքեռ-Զեյթունում՝ 257, Նուբարաշենում՝ 6։

Բարձրահարկ բնակելի շենքերի վերելակային պարկի ցուցակային թիվը 4318 է, թվով 3120 վերելակ սպասարկվում և շահագործվում է մասնագիտացված վերելակային ծառայությունների կողմից, իսկ մնացած 1188 վերելակների սպասարկումն ու շահագործումն իրականացվում է լիցենզիա չունեցողներ անհատ մասնագետների միջոցով։

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010 թվականին Երևան քաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման և վերականգնման համար ծախսվել է 97.3 մլն դրամ։

## Հիմնախնդիրներ

Բարձրահարկ բազմաբնակարան շենքերում առկա թվով 72 դեպի դուրս բացվող դռներով վերելակների շահագործման ռեսուրսները լիովին սպառվել են և նրանցից օգտվելը խիստ վտանգավոր է բնակչության համար։ Մեծամասնությամբ դադարեցվել են նմանատիպ վերելակների շահագործումը։

## 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2011 թվականին վերելակների վերանորոգման համար նախատեսված է 89,190.9 հազ. դրամ, որից՝ բազմաբնակարան շենքերի վերելակների կապիտալ բնույթի աշխատանքների համար՝ 83,190.9 հազ. դրամ և ընթացիկ նորոգման համար՝ 6,000.0 հազ. դրամ։

# Աղբահանություն և սանիտարական մաքրում

## Վիճակի բնութագիր

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է թվով 12 մասնագիտացված ընկերությունների 1470 աշխատակիցների և 370 միավոր հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների միջոցով, որոնք ներկա դրությամբ մաշված են գրեթե 80-85%-ով: Երևան քաղաքի սանիտարական մաքրման աշխատանքների ծավալն օրական կազմում է 12760.0 հազ.քմ:

Աղբահանությունը կատարվում է 4720 բազմաբնակարան շենքերից և 53000 մասնավոր տնատիրություններից:

Մայրաքաղաքի բազմահարկ-բազմաբնակարան շենքերում առկա է՝ թվով 3901 հատ աղբամուղ, որից

- գետնից բարձր կոնաձև աղբամուղ 380 հատ,
- հարթ և չբացվող հատակով աղբամուղ 835 հատ
- գետնի մակարդակի հետ հավասար աղբամուղ 2786 հատ:

Նոր կառուցված շենքերում աղբամուղեր չկան:

Սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքների կարգավորման վերաբերյալ գործում է միայն 24.11.2004թ. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը, իսկ «Աղբահանության և սանիտարական մաքրման» մասին օրենքը և Երևան քաղաքի սանիտարական մաքրման ու աղբահանության կազմակերպման կարգը դեռևս նախագծեր են և ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկման:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010 թվականին Երևան քաղաքի սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման համար ծախսվել է 3.2 մլրդ դրամ: 2010թ. գարնանը ՀՀ վարչապետի և ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ Հրազդանի կիրճում իրականացվեց «Երեք կամուրջ» ծրագրի սանիտարական մաքրման և աղբահանության լայնածավալ աշխատանքներ, որին մասնակցում էին թվով 12 սանիտարական մաքրման ընկերություններ շուրջ 150 միավոր մեքենա-

մեխանիզմներով և թվով 300 աշխատակիցներով, որի արդյունքում պատշաճ տեսքի բերվեց ողջ Հրազդանի կիրճի տարածքը:

Երևանի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.157-Ա որոշմամբ մինչև 15.12.2010 թվականը պետք է ձեռք բերվեն ձյան մաքրման մեքենա-մեխանիզմներ, որի համար հատկացվել է 158,6 մլն դրամ: Համաձայն կնքված պայմանագրերի մինչև դեկտեմբերի 15-ը ձեռք կբերվի թվով 27 միավոր մեքենա-մեխանիզմ, որից 10-ը ձյան մաքրող և 17 միավոր մայթ մաքրող մեխանիզմ:

Երևան քաղաքում 2010 թվականին ավելացնել է մեծ և փոքր թվով 1300 աղբաման:

2010թ. գարնանը ՀՀ էկոնոմիկայի նախարարության գնահատող հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել Անգլիական Միացյալ Թագավորության Integrated Skills Limited ընկերությունը, որն էլ ստանձնեց Երևան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքների խորհրդատվական ծառայությունների մատուցումը: Ծառայության մատուցման տևողությունը 18 ամիս է:

## Հիմնախնդիրներ

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման համակարգն իր մի շարք բացթողումներով և առկա խնդիրներով չի համապատասխանում ժամանակակից եվրոպական երկրներում գոյություն ունեցող չափանիշներին:

- *օրենսդրական դաշտի համակարգի թերի վիճակ,*
- *վարչական շրջաններում ծառայությունների մատուցման իրարից տարբերվող մակարդակներ,*
- *շահագործվող հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների ֆիզիկական մաշվածություն և անբավարար թվաքանակ,*

ՀՀ կառավարությունը դիմել է Համաշխարհային Բանկին՝ Երևան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներին պետական և մասնավոր արտասահմանյան օպերատորներ ներգրավվելու օժանդակություն ցուցաբերելու համար:

# Նուբարաշենի աղբավայր

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքը Հայաստանում սպառման կոշտ թափոնների առաջացման խոշորագույն օջախ է, որտեղ կուտակվում է երկրի ընդհանուր կոշտ թափոնների 70-75 %–ը:

Երևանի համար մեծ նշանակություն ունի Նուբարաշենի քաղաքային աղբավայրը, որը գործարկվել է դեռևս 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 52.3 հա տարածք:

Մայրաքաղաքի տարածքից քաղաքային աղբավայր է տեղափոխվում օրական միջին հաշվով 550-600 տոննա կամ տարեկան 190-200 հազար տոննա կենցաղային աղբ:

Նուբարաշենի աղբավայրի տարածքը պատկանում է Երևանի քաղաքապետարանին, իսկ աղբի ընդունումը, տեղադրումը և վնասազերծումը, Երևանի քաղաքապետի 2004թ. հուլիսի 9-ի որոշման համաձայն իրականացնում է «Էրեբունի մաքրություն» ՍՊ ընկերությունը: Ընկերությունը կենցաղային աղբը վերամշակման կամ տեսակավորման չի ենթարկում, այլ այն խտացնում և վնասազերծում է՝ ծածկելով 25-30 սմ հողի շերտով, նրա շահագործումն իրականացվում է ոչ արդյունավետ՝ աղբի ընդունումը, տեղադրումը և վնասազերծումը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին, որն էլ աղբավայրում առաջացնում է գազերի արտանետումներ: Աղբավայրը չունի ցանկապատ, հագեցած չէ ժամանակակից հարթեցնող և գլդոնող տեխնիկայով, որի պատճառով հաճախակի աղբավայրի տարածքում տեղի է ունենում կենցաղային աղբի ինքնաբռնկում:

Նուբարաշենի քաղաքային աղբավայրում ջերմային գազերի արտանետումը կրճատելու նպատակով 2009թ. մարտի 10-ին Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը՝ ճապոնական «Շիմիձու» կորպորացիայի հետ Երևանի քաղաքապետարանում կնքեց համաձայնագիր Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի վերաբերյալ, որը կարևոր նշանակություն ունի հատկապես

բնապահպանական, շրջակա միջավայրի բարելավման և սանիտարահիգիենիկ մաքրման տեսանկյունից:

Նուբարաշենի ներկայումս գործող թափոնակուտակիչում՝ մոտ 8 հա տարածք, փորվել են հորատանցքեր, հորիզոնական գազամուղերով մխոցների միջոցով մեթան գազը մղվում է կենտրոնական ուղղահայաց խողովակ (ջահ) և այրվում: Տարածքը ծածկված է հերմետիկ թաղանթով և հողի շերտով: Ծրագրի տևողությունը 16 տարի է: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում՝ մինչև 2023 թվականը ըստ հաշվարկների պետք է իրականացվի 512 հազար տոննա $CO_2$-ի համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:

Ծրագրի ֆինանսավորումը, ներառյալ բոլոր տարիներին համակարգի պահպանման և շահագործման ծախսերը կկազմեն մոտ 5, 5 մլն ԱՄՆ դոլար, կիրականացնի ճապոնական կողմը: Ներկա պահին արդեն ներդրվել է 2.75 մլն ԱՄՆ դոլար: Կառույցը հանձնվել է հայկական կողմին՝ որպես սեփականություն: Շահագործումն իրականացնում է «Նոր բարեկարգում» ՓԲ ընկերությունը:

2010թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ Նուբարաշենի աղբավայրում արդեն տեղադրվել, վնասազերծվել և հողի շերտով ծածկվել է 120 հազ. տոննա կենցաղային աղբ:

Խորհրդատվական ծառայություն իրականացնող ընկերությունը նշված աշխատանքներն իրականացնելուց հետո կներկայացնի հաշվետվություն, որի հիման վրա Համաշխարհային բանկը կհայտարարի միջազգային մրցույթ, որից հետո հաղթող ճանաչված ընկերությունների հետ (նոր օպերատորներ) կկնքվի Երևան քաղաքի սանիտարական մաքրման, աղբահանության աշխատանքների, ինչպես նաև Նուբարաշենի աղբավայրի (ՆՖԿՇ) նախագծում-ֆինանսավորում-կառուցում և շահագործում ծրագրերի իրականացման պայմանագրեր: Նախատեսվում է կառուցել և շահագործել եվրոպական չափանիշներին համապատասխան նոր աղբավայր:

## Հիմնախնդիրներ

Նուբարաշենի աղբավայրի տարածքում պետք է մշտապես լինի (պահպանի) անձնակազմ, որը կհետևի ու կկազմակերպի թափոնների տեղադրումը կամ կկանխի թափոնների ապօրինի տեղադրումը: Կեղտաջրերի առկա ավազանն անհապաղ վերանորոգման կարիք ունի: Աղբավայրի տարածքում պետք է մշտապես

իրականացվեն աղբատար մեքենաների անվադողերի ախտահանման աշխատանքներ:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

2011 թվականին սանիտարական մաքրման աշխատանքների համար նախատեսվում է Երևանի բյուջեից հատկացնել շարջ 3,262,400.6 հազ.դրամ:

## Արտաքին լուսավորություն

«Երքաղլույս» ՓԲ ընկերությունը շահագործում է 26178 հենասյուն, որոնց վրա մոնտաժված են 48222 հատ լուսատու, արտաքին լուսավորության պահարաններ լրիվ սարքավորումներով՝ 626 համալիր: Գործող ցանցը կազմում է 1174 կմ: 2009-2010 թվականների լայնածավալ աշխատանքների շնորհիվ վերականգնվել է 322 կմ բակային լուսավորության ցանցը, մինչև 2010 թվականի վերջը կվերականգնվի ևս 51 կմ լուսավորության ցանց: 2011 թվականին Երևան քաղաքի լուսավորման համար պահանջվում է 2246.5 մլն դրամ (1225 կմ գործող ցանցի շահագործման համար):

2011 թվականին արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման համար՝ 1,696,000.0 հազ. դրամ:

# Ենթակառուցվածքներ

## Էլեկտրամատակարարում

2010 թվականին Երևան քաղաքում թվով 110/35կվ ենթակայանների վերազինման, սարքավորումների արդիականացման նպատակով, իրականացվել է 11 մլրդ 200 մլն դրամի չափով աշխատանքներ: Երևան քաղաքի բաշխիչ կետերում յուղային անջատիչներով բջիջները փոխարինվել են վակումային անջատիչներով բջիջների, որի համար ծախսվել է 0.96 մլրդ դրամ: Մալուխների և օդային գծերի, տրանսֆորմատորային ենթակայանների հիմնանորոգումն իրականացվել է 2.4 մլրդ դրամի չափով:

## Գազամատակարարում

Առ 01.10.2010 թվականի դրությամբ Երևան քաղաքում գազահամակարգին միացված բաժանորդների թիվը կազմել է 237867:

Երևան քաղաքում նախադպրոցական հաստատությունների ջեռուցման նպատակով ընթացիկ տարում իրականացվելու են այդ հաստատությունների կաթսայատները սնող արտաքին գազատարների կառուցման աշխատանքները, որի ուղղությամբ 2010 թվականի հունվար – սեպտեմբեր ամիսների ընթացքում կատարվել են 104.7 մլն դրամի շինմոնտաժային աշխատանքներ թվով 83 նախադպրոցական հաստատություններում, որի 81-ում աշխատանքներն ավարտվել են:

Նույն ժամանակահատվածում իրականացվել են մի շարք բազմաբնակարան շենքերի գազաֆիկացման աշխատանքներ, որի արդյունքում հնարավորություն է ընձեռնվել ապահովելու թվով 622 բնակարանների գազամատակարարումը: Գազասպառողների բնակարաններում տեղադրվել է թվով 78784 վթարային ազդանշանային սարքեր և անջատիչ կափույրներ:

2011թ. նախատեսվում է իրականացնել շուրջ 150.0 մլն դրամի ներդրումներ՝ նախադպրոցական հաստատությունների, երաժշտական դպրոցների և բազմաբնակարան շենքերի գազաֆիկացման, շուրջ 830.0 մլն դրամ՝ մոտ 30000 հատ անվտանգության համակարգերի տեղադրման և շուրջ 165.0 մլն դրամ՝ մոտ 5000 նոր

բաժանորդների բնակարաններում և առանձնատներում կենցաղային գազի հաշվիչների տեղադրման համար:

2010 թվականին գերակա խնդիրներից է Երևանի մի շարք տարածքների, այդ թվում՝ Խորենացու 4-րդ նրբ, Նորագյուղ թաղ. հ.94, 94ա, 94բ, 94գ և 147, 340, 321 հասցեներ, թվով 119 առանձնատներ, Սարի թաղի 8-րդ, 9-րդ, 10-րդ շարքերի թվով 250 առանձնատներ, Աջափնյակ վարչական շրջանի Սպանդարյան կայարանի տարածք, Փիրումյան միկրոշրջանի (Սիլիկյան թաղ.) առանձնատների, Նոր Նորքի 7-րդ զանգվածի 2/5, Հ.Ավետիսյան հ/տարածքի թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 առանձնատների գազիֆիկացումը և գազամատակարարումը:

## Էլեկտրոնային հաղորդակցություն

***ՎիվաՍել-ՄՏՍ***

ՎիվաՍելի բջջային կապի ծածկույթը հանրապետության տարածքում կազմում է 80%, Orange-ինը՝ 83%, Արմենտելը՝ 35 %:

Բջջային ցանցի զարգացման, նոր ծառայությունների և կապի որակի բարելավման նպատակով՝

ՎիվաՍել-ՄՏՍ-ը գործարկել է 3 նոր բջջային հիմնական կայաններ (երկրորդ սերունդ): 37 կայաններում տեղադրվել են լրացուցիչ բջջային սարքավորումներ՝ ցանցի թողունակությունն ավելացնելու համար: Գործարկվել են 30 հիմնական կայաններ (երրորդ սերունդ՝ Node B): Երևան քաղաքում փակ (նկուղային և կիսանկուղային) տարածքների համար տեղադրվել են երկրորդ և երրորդ սերնդի 105 վերահաղորդիչ սարքեր: Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի բոլոր 10 կայաններում և թունելների 12 կմ երկայնքով տեղադրվել են 2G և 3G սարքավորումներ:

2010 թվականին մշակույթի, կրթության և սպորտի ոլորտում ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից հովանավորվել են Երևան քաղաքում իրականացված մի շարք միջոցառումներ (Է.Կուստուրիցիայի և «No Smoking» նվագախմբի համերգը, Յան Գիլանի երևանյան համերգը, Մայրության և գեղեցկության օրվան նվիրված համերգը, մի շարք այլ փառատոններ, համերգներ և ցուցահանդեսներ), իրականացվել է «Ճանաչեք հայկական հուշարձանները» ծրագրի (Մատենադարան) շրջանակներում բազմալեզու վահանակների տեղադրման աշխատանքները: ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից

կազմակերպվել է ծառատունկ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում, թուղթ ստանալու նպատակով վերամշակվել է Անմար կրակի շուրջ կուտակված ծաղիկները և հովանավորվել այլ աշխատանքներ ու միջոցառումներ:

2011 թվականին նախատեսվում է 20 նոր կայանների կառուցում և 50 վերահաղորդիչ սարքերի տեղադրում Երևան քաղաքի այն մասերում, որտեղ ծածկույթը թերի է: Նախատեսվում է զարգացնել գոյություն ունեցող շարժական կապի տեխնոլոգիաները՝ գերարագ ինտերնետային կապ ապահովելու համար: Մշակույթի, սպորտի և կրթության ոլորտներում ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից Երևան քաղաքում նախատեսվում են իրականացնել մի շարք ծրագրեր:

***ԱրմենՏել***

«ԱրմենՏել» ՓԲԸ 2010 թվականի ընթացքում կատարվել են 50 000 բաժանորդային գծերի համար ADSL տեխնոլոգիայի վրա հիմնված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման հնարավորության ընդլայնում, բջջային ցանցի արդիականացում՝ նոր բազայի և կայանների տեղակայմամբ երրորդ սերնդի ցանցի (3G) ռադիոծածկույթի ընդլայնում:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից 2010 թվականին իրականացվել են բարեգործական միջոցառումներ, մասնավորապես «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ «անվտանգ բջջային կապ. դպրոցականների կարողությունների զարգացում» լայնամասշտաբ ծրագրի մասնակցություն՝ ուղղված կանխարգելելու բջջային կապի միջոցով երեխաների և անչափահասների շահագործումն ու նրանց նկատմամբ բռնության կիրառումը, Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 20-րդ տարելիցի շրջանակում աշխարհում մանկական առաջին կամերային նվագախմբի ստեղծում Վ. Սպիվակովի հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կրթաթոշակառուներից, նվեր հայ նկարիչների 5 ստեղծագործություններ Հայոց ցեղասպանության թանգարանին Հայ Մեծ Եղեռնի 95-րդ տարելիցի կապակցությամբ:

***Օրանժ***

Օրանժը 2010 թվականի ընթացքում տեղադրել է 14 նոր կայաններ (Նոր Արեշում, Մալաթիա-Սեբաստիայում, Նոր Նորք 7-րդ զանգվածում, 2-րդ զանգվածում, Նուբարաշենում, Լուկաշինում, Վերին Ջրաշենում և Կենտրոնում): Բացվել են 7 նոր Orange-խանութներ:

2010 թվականին Օրանժ Արմենիան հովանավորել է մի շարք համերգներ՝ Ֆրանկոֆոնիային նվիրված համերգները (մարտ), Եվրատեսիլ-2010 երգի մրցույթը (մայիս), Fete de la Music ծրագրի շրջանակներում կազմակերպված համերգները (հունիսին)։

2010 թվականին վերջին ամիսներին կտեղադրեն 8 լրացուցիչ կայան (էրեբունիում, Մալաթիա-Սեբաստիայում, Նոր Նորք 4-րդ զանգվածում, Դավթաշեն 3-րդ զանգվածում, Սիլիկյան թողոմասում և Կենտրոնում), կբացվեն 5 նոր խանութներ։

2011 թվականին նախատեսվում է իրականացնել օպտիկամանրաթելային մալուխի տեղակայում (Երևանի քաղաքապետարանից բոլոր համապատասխան թույլտվությունները ստանալու դեպքում)՝ օգտագործելով քաղաքային լուսավորության հենասյուները։ 2011 թվականին նոր խանութների բացում նախատեսված չէ։

2011 թվականին նախատեսվում է կազմակերպել մի շարք հանրային միջոցառումներ, այդ թվում՝ Եվրատեսիլ-2011 երգի մրցույթին առնչվող։

# ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքում գործում են առևտրի 10650 օբյեկտներ, սպառողական ապրանքների 18, գյուղատնտեսական արտադրանքի 11 շուկաներ, հանրային սննդի 1266 և կենցաղային ծառայություններ մատուցող 1796 օբյեկտներ:

Առևտրի օբյեկտների 66,3%-ը, հանրային սննդի օբյեկտների 83.1%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 81.2%-ը կենտրոնացված են Կենտրոն, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա–Սեբաստիա, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում:

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 86.6%–ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության ընդամենը 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ: Մնացած 7 վարչական շրջանների տարածքներում իրականացվող առևտրի շրջանառությունն առանձին–առանձին վերցրած կազմում է 0.06%-ից մինչև 3.66%:

Երևան քաղաքում կանոնակարգված չէ տարերայնորեն գործող բոլոր տեսակի պարենային, ոչ պարենային ապրանքների և գյուղմթերքների բացօթյա առևտուրը: Անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի,սպասարկման ծառայություններ մատուցող և զվարճանքի օբյեկտները:

Երևան քաղաքում որոշ՝ հիմնականում կենտրոնական փողոցներին հարող, տարածքներ գերհագեցված են տեղադրված կրպակներով ու տաղավարներով, որոնցից շատերն արդեն իսկ վերածվել են կրպակաշարերի կամ ծառայում են բացօթյա ապօրինի առևտուր իրականացնողների համար որպես պահեստ և կարիք ունեն կանոնակարգման ու վերակառուցման: Քիչ են նաև հասարակական զուգարանները, ինչը հարիր չէ մայրաքաղաքի արդի և քաղաքակիրթ պատկերին:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում և Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը:

Հաշվառվել և գույքագրվել են մայրաքաղաքում առկա առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների բոլոր օբյեկտները:

Նշված աշխատանքների շրջանակներում ամրագրվել են նաև բոլոր այն օբյեկտները, որոնք իրենց գործունեությունը իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով պետք է ձեռք բերեին համապատասխան թույլտվություն (ոգելից խմիչքի և (կամ) ծխախոտի վաճառքի թույլտվություն, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները) ժամը 24.00–ից հետո աշխատելու թույլտվություն, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի թույլտվություն, բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն):

Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրին աջակցելուն ուղղված միջոցառումների շրջանակներում, Երևան քաղաքում առկա առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տեղաբաշխումը կանոնակարգելու, տեղափոխելու կամ արդիականացնելու միջոցով՝ դրանց արտաքին տեսքը մայրաքաղաքին ներկայանալի դարձնելու մասին» N 1843-Ա որոշման պահանջները կատարելու նպատակով իրականացվել է մայրաքաղաքի թվով 14 փողոցների առևտրի և ծառայությունների ոլորտի օբյեկտների արդիականացման ծրագրի մշակման և առաջարկությունների ձևավորման աշխատանքներ:

Առևտրի և ծառայությունների ոլորտում մշտապես իրականացվել է հսկողություն՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ։

# Հիմնախնդիրները

➢ *Կանոնակարգված չէ զվարճանքի օբյեկտների՝ հատկապես բազմաբնակարան շենքերի ծավալներում գործող հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, գիշերային ակումբների և բացօթյա սրճարանների գիշերային գործունեությունը։*

➢ *Բավարար հսկողություն չի իրականացվում վաճառվող ապրանքների որակի, պիտանիության ժամկետներն անցած ապրանքների վաճառքի արգելման ուղղությամբ։*

➢ *Բարվոք վիճակում չի գտնվում բացօթյա առևտուրը, այն դեպքում, երբ Երևան քաղաքում գործում են շուրջ 1500 բացօթյա առևտրի կետեր։ Արդյունքում՝ Երևանում գործող գյուղմթերքների արտադրանքի շուկաներն աշխատում են թերծանրաբեռնվածությամբ։ Ոլորտում առևտուրը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կազմակերպելու գյուղմթերքների արտադրանքի ինչպես մեծածախ շուկա, այնպես էլ մանրածախ նոր շուկաներ և անասնաշուկա։*

➢ *Կանոնակարգված չեն բացօթյա հանրային սննդի և բացօթյա կենցաղային ծառայությունների գործունեությունը, հրագործական արտադրատեսակների օգտագործումը, շրջիկ առևտրի կետերի միջոցով իրականացվող վաճառքը, ծաղիկների, ձմերուկի, սեխի, գործարանային փաթեթավորմամբ պաղպաղակի, զովացուցիչ ջրերի բացօթյա վաճառքը։*

➢ *Հեռու է քաղաքակիրթ ձևերից ստորգետնյա անցումներում իրականացվող առևտուրը։*

➢ *Ապամոնտաժման կամ արդիականացման կարիք ունեն Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների) մեծ մասը, ինչպես նաև բացօթյա փոքրածավալ շուկաներն ու տոնավաճառները։*

➢ *Հսկողության խստացման անհրաժեշտություն կա առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների առևտրի*

*օբյեկտից դուրս ցուցադրումը, ինչպես նաև ավտոդիատարները օրենքով նախատեսված վայրերից դուրս կայանումն արգելելու ուղղությամբ:*

➢ *Երևան քաղաքում բացակայում են գյուղատնտեսական կենդանիների սպանդանոցները:*

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացում:

Հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների, այդ թվում գիշերային ակումբների՝ հատկապես բազմաբնակարան շենքերի ծավալներում գործող, և բացօթյա սրճաններում հնչեցվող երաժշտության վերաբերյալ կանոնակարգող իրավական ակտի ընդունում:

Բացօթյա հանրային սննդի և բացօթյա կենցաղային ծառայությունների օբյեկտների գործունեության կանոնակարգման նպատակով օրենսդրական առաջարկությունների ներկայացում:

Բուսական ծագում ունեցող գյուղատնտեսական արտադրանքի բացօթյա վաճառքի, ինչպես նաև շրջիկ առևտրի միջոցներով իրականացվող առևտրի կանոնակարգմանն ուղղված օրենսդրական առաջարկությունների ներկայացում:

Հրագործական արտադրատեսակների առևտուրը և օգտագործումը կանոնակարգելու նպատակով օրենսդրական առաջարկությունների ներկայացում:

Ավտոդիատարների կայանման համար օրենքով նախատեսված վայրերից դուրս ավտոդիատարների կայանումն արգելելու նպատակով, ինչպես նաև սգո պարագաներ վաճառող օբյեկտները օրենքով սահմանված կարգով մգեցված ապակիներով կամ վարագուրապատված չլինելու դեպքերում վարչական պատասխանատվություն սահմանելու օրենսդրական առաջարկությունների ներկայացում:

«Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ շահումների ցուցադրման վայրից 500 մետրից մոտ հեռավորության վրա վիճակախաղերի տոմսերի վաճառքի իրականացումն արգելելու նպատակով վարչական

պատասխանատվություն սահմանելու օրենսդրական առաջարկությունների ներկայացում:

Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, հատկապես բացօթյա՝ քաղաքացիներին զուգարաններից անվճար օգտվելու վերաբերյալ կանոնակարգող իրավական ակտի ընդունում, նոր զուգարանների կառուցմանն ուղղված միջոցառումների իրականացում (հասարակական զուգարանների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար մրցույթի կազմակերպում, հասարակական զուգարանների տեղակայման վայրերի որոշում և դրանց կառուցման համար տեխնիկական առաջադրանքի մշակում և կառուցման մրցույթի կազմակերպում):

Մասնավոր ներդրումների հաշվին հասարարական զուգարաններ կառուցելու նպատակով քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցապատողներին ծրագրային փաթեթների օտարում՝ աճուրդային կամ մրցութային կարգով:

Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրին աջակցելուն ուղղված միջոցառումների շրջանակներում, Երևան քաղաքում առկա առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տեղաբաշխումը կանոնակարգելու, տեղափոխելու կամ արդիականացնելու միջոցով՝ դրանց արտաքին տեսքը մայրաքաղաքին ներկայանալի դարձնելու մասին» N 1843-Ա որոշման պահանջները կատարելու նպատակով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների հաշվառում, առաջարկությունների ձևավորում և ներկայացում Երևանի քաղաքապետին:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում:

Առևտրի և սպասարկման օբյեկտների տեղաբաշխման և ոլորտի զարգացման ծրագրի և սխեմայի մշակում:

Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպման նպատակով տեղակայման վայրերի որոշում, դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար մրցույթի կազմակերպում, տեխնիկական առաջադրանքի մշակում և դրանց կազմակերպման համար մրցույթի անցկացում:

Երևանի բոլոր վարչական շրջաններում գյուղատնտեսական արտադրանքի նոր շուկաների կազմակերպման, ինչպես նաև փոքրածավալ շուկաների ստեղծման

նպատակով տեղակայման վայրերի որոշում, դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար մրցույթի կազմակերպում, տեխնիկական առաջադրանքի մշակում և դրանց կազմակերպման համար մրցույթի անցկացում:

Գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրի և կենդանիների շուկաների, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների սպանդանոցների ստեղծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի կանոնակարգմանը ուղղված առաջարկությունների փաթեթի մշակում:

Երևան քաղաքում կենդանիների շուկաների կառուցման նպատակով հողամասերի առանձնացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի մշակում:

Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների իրականացում: Ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում (Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու քաղաքային կանոնների սահմանում և այլն):

Առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտում գործունեության լրացուցիչ կանոնների և պայմանների մշակում:

Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների իրականացման համար 2011 թվականին տախատեսվում է 180,000.0 հազ. դրամ:

# ՏՐԱՆՍՊՈՐՏ

## Վիճակի բնութագիր

***Ավտոբուսային փոխադրումներ***

Երևան քաղաքում փաստացի գործում են 31 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 270-280 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են 16 կազմակերպություններ: Անբավարար է ավտոբուսային երթուղիների շահագործման արդյունավետությունը, անհրաժեշտ քանակի ավտոբուսների բացակայության պատճառով երթուղիների մի մասը համալրված է մասնակիորեն:

***Միկրոավտոբուսային փոխադրումներ***

Երևան քաղաքում գործում են թվով 112 միկրոավտոբուսային երթուղիներ, որոնք համալրված են տարբեր մակնիշների մոտ 2750 միավոր շարժակազմով: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված 64 մասնավոր կազմակերպություններ:

Երևանում ուղևորափոխադրումների հիմնական մասը դեռևս իրականացվում է միկրոավտոբուսներով, որոնց բաժին է ընկնում ընդհանուր ծավալի 73,0%-ը: Որոշակիորեն բարելավվել է միկրոավտոբուսային երթուղիների որակական կազմը: 2010թ. ընթացքում անցկացված՝ երթուղիների շարժակազմերի համալրման (փոխարինման) գործընթացների արդյունքում ներքաղաքային երթուղիներում ներգրավվել են 200 հատ նոր «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսներ, որոնք հիմնականում փոխարինել են հին «ՌԱՖ» և «ԵՐԱԶ» մակնիշների միկրոավտոբուսներին:

Երթուղային ցանցը գերհագեցած է միկրոավտոբուսային երթուղիներով, որոնցում շահագործվող շարժակազմի մեծ քանակությունը, մայրաքաղաքի ճանապարհափողոցային ցանցի և կանգառատեղերի փոքր թողունակության պայմաններում, լուրջ դժվարություններ է ստեղծում երթևեկության կազմակերպման առումով, ուստի ուղևորափոխադրումների գործընթացում միկրոավտոբուսների քանակի կրճատումը և դրանց փոխարինումը մեծ և միջին տեղատարության ավտոբուսներով այլընտրանք չունի:

### *Վերգետնյա էլեկտրատրանսպորտ*

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է 89 տրոլեյբուս (2-ը՝ տեխօգնության տրոլեյբուսներ)։ Ընկերության կողմից ներկայումս սպասարկվում են 5 տրոլեյբուսային երթուղիներ։

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերջին մի քանի տարիների վերլուծությունը ցույց է տվել, որ որոշակիորեն ավելացել է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը։ Չնայած այդ հանգամանքին, դեռևս ցածր է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների տեսակարար կշիռը. ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում այն կազմում է մոտ 2.3%։

2010թ. շարունակվել են աշխատանքները նոր տրոլեյբուսներ ձեռք բերելու նպատակով, ինչպես նաև որոշակի աշխատանքներ են կատարվել տրոլեյբուսների հպակային ցանցի վիճակի բարելավման ուղղությամբ։

Առաջիկայում ևս նախատեսվում է իրականացնել տրոլեյբուսային հավաքակազմի համալրման, հպակային և մալուխային ցանցերի, հպակային ցանցի որոշակի նոր հատվածների կառուցման, քարշի ենթակայանների վերակառուցման ու վերագործարկման, տրոլեյբուսային տնտեսության արտադրատեխնիկական վերազինման, ինչպես նաև տրոլեյբուսների շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ։

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին որպես սուբսիդիա կտրամադրվի 276,000.0 հազ. դրամ։

### *Մետրոպոլիտեն*

Երևանի մետրոպոլիտենում առկա է թվով 70 վագոն։ Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ)։

Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում նկատվում է կայունացման և աճի միտում։ 2008-2009թթ. մետրոպոլիտենով տեղափոխվել է մոտ 18.9 մլն ուղևոր, տեսակարար կշիռը ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում կազմել է մոտ 9,2%։

ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին 2010թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարվել են վագոնների (6 հատ), անվազույգերի (16 հատ), շարժասանդուղքների հիմնանորոգման, ընթացային ռելսերի, փայտակոճերի

փոխարինման, մետրոպոլիտենի կայարանների, մուտքային դռների, նախասրահների արդիականացման և այլ աշխատանքներ:

Առաջիկա տարիներին նախատեսվում է սկսել նաև մետրոպոլիտենի գծի երկարացման, նոր կայարանների նախագծման և կառուցման աշխատանքները, ինչպես նաև իրականացնել մետրոպոլիտենի անխափան աշխատանքի և շահագործման ու երթևեկության անվտանգության ապահովման հետ կապված առաջնահերթ միջոցառումներ և աշխատանքներ:

Մասնավորապես, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել ծրագիր, որը նպատակ է հետապնդում բարելավելու Երևանի մետրոպոլիտենի ծառայությունների անվտանգ և ապահով իրագործումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ ներդրումային բաղադրիչներից՝ շարժակազմի արդիականացում, ռելսային գծերի վերականգնում, էլեկտրասնուցման վերականգնում և վերանորոգում, սպասարկման ծառայությունների և ենթակառուցվածքների արդիականացում, ջրի ներհոսքի վերացում: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը կազմում է 15.0 մլն եվրո:

Հիմք ընդունելով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծրագիրը՝ որպես պատվիրակված լիազորություն Երևանի մետրոպոլիտենով ուղորափոխադրումների ծառայությունների իրականացման համար նախատեսվել է 1,845,000.0 հազ. դրամի սուբսիդիա:

***Հասարակական տրանսպորտի կանգառներ***

2010թ. ընթացքում իրականացվել են հին կանգառասրահների վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, շարունակվել են հասարակական տրանսպորտի կանգառների կահավորման աշխատանքները, նախատեսվել է կանգառներում տեղադրել կանգառանշաններ և կատարել համապատասխան գծանշումներ:

Ուսումնասիրվել են մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի կանգառատեղերը, մշակվել են դրանց հատակագիծ-սխեմաները, կանգառների ցանկերը հաստատվել են Երևանի քաղաքապետի որոշումներով և ներկայացվել ՀՀ ճանապարհային ոստիկանություն՝ կանգառները կահավորելու համար:

Երևանի Կենտրոն վարչական շրջանի տարածքում նախատեսված կանգառ-ներն արդեն կահավորվել են, աշխատանքները կշարունակվեն 2011 թվականին: Մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի կանգառների կահավորման

նպատակով, ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ, ուսումնասիրվել է կանգառների վիճակը և ներկայացված առաջարկների հիման վրա աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից մշակվել են թվով 384 կանգառների հատակագիծ-սխեմաներ, որոնց ցանկերը հաստատվել են Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով: Նշված որոշումները ուղարկվել են ՀՀ ճանապարհային ոստիկանություն՝ ցանկերում ընդգրկված կանգառներում կանգառանշաններ տեղադրելու և գծանշումներ կատարելու համար: Երևանի Կենտրոն վարչական շրջանի տարածքում կանգառները կահավորվել են, աշխատանքներն այդ ուղղությամբ շարունակվում են: Ամբողջովին վերանորոգվել և բարեկարգվել են մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի կանգառներում 2006-2008թթ. ընթացքում տեղադրված թվով 298 կանգառասրահները:

### *Երթուղային ցանց*

2010թ. Երևանի քաղաքապետի համապատասխան հանձնարարականի հիման վրա շարունակվել են հասարակական տրանսպորտի երթուղային ցանցի լրամշակման աշխատանքները՝ նպատակ հետապնդելով ամբողջովին վերանայելու Երևանի փոքր կենտրոնում ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը, որոշակիորեն նվազեցնելու միկրոավտոբուսների քանակը, մեծացնելու տրոլեյբուսների դերը ներքաղաքային ուղևորափոխադրումներում, ինչպես նաև նախատեսելու ավտոբուսային նոր, արդյունավետ երթուղիներ, որոնց սպասարկումն իրականացվելու է մայրաքաղաք ներկրվելիք մեծ տեղատարողության ավտոբուսներով:

Երթուղային ցանցի լրամշակման աշխատանքների ընդհանուր համատեքստում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ համատեղ 2010թ. ընթացքում ևս շարունակվել են քննարկումները Երևանի վարչական տարածք մուտք գործող միջմարզային երթուղիների կանոնակարգման խնդիրների հետ կապված՝ նպատակ հետապնդելով սահմանափակել դրանց մուտքը Երևանի վարչական տարածք և աշխատանքները կազմակերպել ավտոկայարաններից (Հյուսիսային, Կենտրոնական) և սահմանված երթակարգավարական կետերից: Բացի այդ, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ որոշակիորեն կանոնակարգվել է մայրաքաղաքի վարչական տարածք մուտք գործող «ուսանողական» ավտոբուսների աշխատանքը, արգելվել է դրանց կայանումը մայրաքաղաքի մի շարք կենտրոնական

փողոցներում: ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ ուսումնասիրվել է երթևեկության կազմակերպման վիճակը մայրաքաղաքի կենտրոնական մի շարք փողոցներում: Ելնելով երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման նկատառումներից՝ զգալի փոփոխություններ են կատարվել Պետոպերային և Ֆրանսիայի հրապարակին հարակից փողոցների և Նալբանդյան, Պուշկինի, Իսահակյան փողոցների երթևեկության կազմակերպման սխեմաները:

***Ավտոկայանատեղեր***

Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման հարցը լուրջ հիմնախնդիր է և այն կանոնակարգելու նպատակով տեղի են ունեցել քննարկումներ, նախատեսվում է վերանայել օրենսդրական դաշտը և սահմանել ավտոկայանատեղերի կազմակերպման նոր կարգ: Արդեն մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Ավտոկայանատեղերի տուրքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որից հետո կմշակվեն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր, որոնց հիման վրա կիրականացվեն գործնական միջոցառումներ և կազմակերպչական աշխատանքներ՝ ավտոկայանատեղերի գործունեության կանոնակարգման նպատակով:1) Մայրաքաղաք է ներկրվել թվով 29 նոր, քաղաքային ավտոբուսներ (15 հատ «Բոգդան» մակնիշի և 14 հատ «Հունդաի» մակնիշի), որոնք ներկայումս շահագործվում են հ.հ.72Ա և 86Ա երթուղիներում: Արդյունքում փակվել են միկրոավտոբուսային հ.հ.72 և 86 երթուղիները, կրճատվել 50 միավոր միկրոավտոբուս:

***Հաշմանդամների տրանսպորտային սպասարկում***

Քաղաքային հասարակական տրանսպորտի ծառայություններից օգտվելու հաշմանդամների մատչելիության ապահովման նպատակով Երևանի քաղաքապետարանի «Ավտոբուս» ՓԲԸ-ին պատկանող «Ռենո–SC10» մակնիշի մեծ տեղատարության թվով 2 ավտոբուսների վրա կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում դրանք հարմարեցվել են հաշմանդամների բարձրանալ-իջնելուն: Այդ ավտոբուսների առավել արդյունավետ և նպատակային շահագործումն իրականացնելու համար Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով դրանք հանձնվել են Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միությանը և «Ունիսոն» հասարակական կազմակերպությանը:

Բացի այդ, 2007-2008թթ. մայրաքաղաք ներկրված թվով 36 նոր «Լիազ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը, որոնք ներկայումս շահագործվում են ներքաղաքային

երթուղիներում, իրենց կառուցվածքով հարմարեցված են հաշմանդամների տրանսպորտային սպասարկումն իրականացնելու համար: Առաջիկա տարիներին մայրաքաղաք ներկրվելիք ավտոբուսների և տրոլեյբուսների խմբաքանակներում ևս նախատեսվում է ներառել հաշմանդամների տեղափոխման համար հարմարեցված շարժակազմեր:

Հաշմանդամների տրանսպորտային ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքները դեռևս անբավարար են և 2011թ. ընթացքում ևս նախատեսվում է իրականացնել կոնկրետ ծրագրային միջոցառումներ՝ հաշմանդամների սպասարկման համար հարմարեցված տրանսպորտային միջոցների քանակն ավելացնելու նպատակով:

***Երթակարգավարական կետեր***

Երևան քաղաքում առկա են թվով 38 երթակարգավարական կետեր, որոնց միջոցով կարգավորվում է ներքաղաքային ավտոբուսային, միկրոավտոբուսային և տրոլեյբուսային երթուղիների աշխատանքը: Նշված կետերում հիմնականում տեղակայված են տաղավարներ, որոնք ենթակա են վերանորոգման, բացի այդ՝ անհրաժեշտություն կա երթուղիների վերջնակետերում նոր տաղավարների տեղակայման: Երթակարգավարական կետերի մոտ հիմնականում չկան սան.հանգույցներ, ինչը խնդիրներ է առաջացնում երթակարգավարների և վարորդների աշխատանքի կազմակերպման հարցերում: Սան. հանգույցների կառուցման, տեղակայման հարցը լուրջ և մոտակա տարիներին լուծում պահանջող հիմնախնդիր է:

## Հիմնախնդիրներ

- *համալրված չէ քաղաքի ավտոբուսային հավաքակազմը.*
- *ներքաղաքային երթուղիները գերհագեցած են միկրոավտոբուսներով.*
- *համալրված չէ քաղաքի տրոլեյբուսային հավաքակազմը.*
- *քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսությունը գտնվում է վատ վիճակում.*
- *բավարար չէ հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը.*

- *կանոնակարգման անհրաժեշտություն է առաջացել տրանսպորտային միջոցների կայանատեղերի կազմակերպման և գործունեության հարցերում.*
- *հասարակական տրանսպորտի երթակարգավարական կետերը բարեկարգված և կահավորված չեն.*
- *ներքաղաքային վերգետնյա ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցը ենթակա է վերանայման և լրամշակման.*

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2011 թվականին նախատեսվում է՝

- մեծ և միջին տեղատարողության նոր, քաղաքային ավտոբուսների ձեռքբերում՝ խմբաքանակներում նախատեսելով նաև հաշմանդամների սպասարկման համար հարմարեցված ավտոբուսներ,
- միկրոավտոբուսների քանակի աստիճանաբար կրճատում,
- նոր տրոլեյբուսների ձեռք բերում,
- տրոլեյբուսային տնտեսության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում,
- Երևանի մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի 2-րդ մուտքի (Աբովյան փող.-Սայաթ Նովայի պող. խաչմերուկում) կառուցում,
- Երևանի մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Երևանի ներքաղաքային վերգետնյա ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի հաստատում և ներդնում,
- ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման մրցույթների կազմակերպում և անցկացում,
- ավտոկայանատեղերի կանոնակարգմանն առնչվող օրենսդրական և կազմակերպչական միջոցառումների իրականացում:

:

# ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքի հողերը և մթնոլորտն աղտոտված են տարբեր վնասակար նյութերով.

- վարչական շրջանների հողերի ծանր մետաղներով (Pb, Cu, Zn, Ni, Mo, Ag, Co, C2 ) աղտոտվածության հետազոտության արդյունքները վկայում են, որ ըստ աղտոտման գումարային գործակցի արժեքի մեծության, Երևանի բոլոր շրջանների հողերը հատում են աղտոտման բարձր մակարդակի շեմը (ԱԳԳ=32-128):
- Մայրաքաղաքի մեկ բնակչին հասնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքի չափանիշը 7.5 մԱ/մարդ, որը 2-2,2 անգամ պակաս է նորմատիվայինից:
- Երևան քաղաքի հարավային (Իսակովի պողոտայի-Արգավանդի խաչմերուկ) և հյուսիս - արևմտյան (Աշտարակի խճուղու սկզբնամաս) մուտքերը գտնվում են խիստ անբավարար, անհրապույր, կանաչի առումով մերկ վիճակում:
- Մայրաքաղաքի կանաչապատման ոլորտի անբաժան կարևորագույն մասն է կազմում ոռոգման ցանցի առկայությունը: Տարվա կտրվածքով յուրաքանչյուր 1 հա կանաչ զանգվածի ոռոգման համար պահանջվում է առնվազն 7000 խմ ջուր, առանց որի անհնարին կլինի ապահովել կանաչ մակերեսների պահպանումը և զարգացումը:

Երևանում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքը կազմում է 832,3 հա, որից փողոցների կանաչապատ տարածքը՝ 145,83 հա, զբոսայգիները՝ 146,22, պուրակները՝ 34,47, անտառ–պուրակները՝ 505,77:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

Մարտ ամսին շահագործման է հանձնվել 0.3 հա մակերես ունեցող ժամանակակից ջերմատունը, որի կառուցման աշխատանքների համար ծախսվել է 120.0 մլն դրամ: Գոյություն ունեցող 0.1 հա ջերմատան հետ այն զգալիորեն կավելացնի և կապահովի որակյալ տնկանյութի արտադրությունը:

Տարիների ընթացքում կանաչ տարածքների քայքայված բուսական շերտը թարմացվել է բուսահողով և կարմիր ավազով: Հողի որակի բարելավման նպատակով ձեռք է բերվել 4230 խմ հող և 7444 խմ ավազ, որի համար ծախսվել է 56.6 մլն դրամ:

՝«Կանաչ Երևան» ծրագրի շրջանակներում ձևավորվել է թվով 4500 ծառ և ծաղկապատվել 5 կամուրջ: Կանաչ տարածքների մակերեսի ավելացման նպատակով ձեռք է բերվել և տնկվել 4000 հատ ծառ, 5000 հատ թուփ և 500000 հատ ծաղիկ, որի համար ծախսվել է 59.8 մլն դրամ: Հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել է ծառատունկ, որը կնպաստի ոչ միայն կանաչ տարածքների ավելացման, այլև տնկվող տեսականին օժտված լինելով գազա և փոշեկլանիչ հատկություններով կմեղմացնի մայրաքաղաքի էկոֆոնը:

Քաղաքի փողոցներին գեղեցիկ տեսք հաղորդելու համար նոր սիզամարգեր են ստեղծվել Սևանի խճուղու միջնամասում, Իսակովի պողոտայի ուղետար կամրջի շրջակայքում, Կորյունի պողոտայի հարևանությամբ, Խանջյան փողոցում և Մյասնիկյան պողոտայում: Երևան քաղաքի վարչական շրջաններում 2010 թվականին ստեղծվել է 1.53 քմ սիզամարգ, որի համար ծախսվել է 30.7մլն դրամ:

Երևանի քաղաքապետարանի կանաչապատման ծրագրերում ներգրավվել են նաև ուսումնական հաստատությունների բակային տարածքները: «Կանաչ Երևան» ծրագրի շրջանակներում հիմնվել է 2.47 հա կանաչ տարածք, աշխատանքների համար ծախսվել է 15.0 մլն դրամ: 2010 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մայրաքաղաքում առկա են 5.2 հա ծաղկապատ տարածքներ:

Կարևորելով քաղաքի կանաչապատ տարածքների ավելացումը՝ «Կանաչ Երևան» ծրագիրն ուղղված է կանաչ տարածքների ստեղծմանն ու ավելացմանը: Այս ուղղությամբ 2010 թվականին ընթացքում նոր պուրակներ են ստեղծվել Շենգավիթ վարչական շրջանում՝ 0.4 հա, Աջափնյակում՝ 0.7 հա, Մալաթիա-Սեբաստիայում՝ 0.3 հա, Ավանում՝ 0.67 հա, Նոր Նորք վարչական շրջանում՝0.4 հա:

Կանաչապատ տարածքների պահպանման և քաղաքին մշտապես կանաչ տեսք տալու համար նախապես անցկացվել և վերանորոգվել են ոռոգման ցանցերը: Կանաչապատ և ծաղկապատ տարածքների պահպանության համար անցկացվել է 7000 գծմ ոռոգման ցանց, որի համար ծախսվել է 63.5 մլն դրամ: Ոռոգման նոր ցանցեր են անցկացվել Դավթաշեն կամրջին հարող տարածքում, Երևան-Զովունի ճանապարհի միջնաշերտում, Էստոնական, Արզումանյան, Մայիսի 9-ի, Թելմանի, Բագրատունյաց, Դրոյի փողոցներում և Սպանդարյանի հրապարակում:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ նախատեսված է և իրականացվում է հանրակրթական դպրոցների ու նախադպրոցական հաստատությունների բակերում ոռոգման համակարգի անցակցնելու գործընթացը՝

դրանով իսկ ապահովելով կրթական հաստատությունների համար շրջակա կանաչ միջավայր:

Երկու փուլով ընթանում են ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ՝ 1-ին փուլ՝ Դավթաշեն կամրջի շրջակայք, Դրոյի փողոց, Երևան-Զովունի խճուղի, Էստոնական, Արզումանյան, Մայիսի 9, Թելմանի փողոցներ, Սպանդարյան հրապարակ և Բաբաջանյան փողոց: 2-րդ փուլ՝ Էրեբունի փողոց, Սևանի խճուղի, Մյասնիկյան պողոտա, Ավանի թաղամասեր:

2010 թվականի ծրագրով ոռոգման ցանցի անցկացման համար նախատեսված էր 207,000.0 հազ. դրամ, սակայն ավագանու որոշմամբ պահուստային ֆոնդից հատկացվեց ևս 200,000.0 հազ. դրամ:

2010 թվականի ընթացքում ձեռք է բերվել 130 միավոր նորագույն տեխնիկա (100.0 մլն դրամ), որը հնարավորություն է տվել 12 վարչական շրջանների կանաչապատման տեղամասերին կազմակերպել և իրագործել ժամանակակից պահանջներին համապատասխան աշխատանքներ:

## Հիմնախնդիրներ

- *Երևան քաղաքի անբարենպաստ տեխնածին և կլիմայական գործոնների ազդեցության պայմաններում բացակայում են պաշտպանիչ տնկարկները և դրանց էկոլոգիապես կայուն տեսակները:*
- *Մայրաքաղաքի հարավային մուտքի (Իսակովի պողոտա – Արգավանդ խաչմերուկ) և հյուսիս-արևմտյան մուտքի (Երևան – Աշտարակ խճուղու սկզբնամաս) սիզամարգերը պահանջում են կապիտալ վերանորոգման աշխատանքներ, քանզի դրանք գտնվում են ծայրահեղ վատ վիճակում:*
- *Մայրաքաղաքի 832 հա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և բարելավման աշխատանքների մասնագիտորեն ճիշտ համակարգման և արդյունավետ իրականացման անհրաժեշտություն:*
- *Երևան քաղաքի մի շարք կենտրոնական փողոցներում և միջնակարգ ուսումնական հաստատությունների տարածքներում բացակայում կամ վատթար վիճակում են գտնվում ոռոգման ցանցերը: Հրատապ պահանջ է դարձել ոռոգման նոր ցանցերի անցկացումը:*

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները նվազեցնելու կամ բացառելու առումով գերխնդիր է դարձել Երևան քաղաքի վարչական շրջանների և առավել ևս Կենտրոն վարչական շրջանի կանաչապատման հարցը.

2011 թվականին կանաչ տարածքների հիմնման աշխատանքներ կիրականացվեն Նուբարաշեն վարչական շրջանում (70 հա) և Արաբկիր վարչական շրջանում (50 հա)։ Նախատեսվում են 10 հա նոր սիզամարգերի ստեղծում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում (Իսակովի պողոտա-Արգավանդի խճուղի ուղետար հանգույցի հարակից տարածք), 2.0 հա՝ Երևան – Աշտարակ ճանապարհի սկզբնամասի միջնաշերտում։

2011 թվականին նոր ոռոգման ցանցեր կանցկացվեն Արաբկիր վարչական շրջանում (Սարալանջի հատված), Էրեբունի վարչական շրջանում (Էրեբունի փողոցի հատված և Էրեբունի թանգարան), Մալաթիա-Սեբաստիա - Իսակովի պողոտա–Արգավանդի խաչմերուկ ուղետար հանգույցի հարակից տարածքում, Երևան – Աշտարակ խճուղու միջնաշերտում, Իսակովի պողոտա (մինչև Նորագյուղ), դպրոցների և մանկապարտեզների հարակից տարածքներում։

Նախատեսվում է Շողակաթ հեռուստաընկերության հարակից պուրակի (0.94 հա) և Շիրակի փող. 12 -14 շենքերի և Շարուրի փողոցի բակերի պուրակի (0.3հա) բարեկարգման աշխատանքներ։

2011 թվականին ոռոգման ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 311.754.4 հազ. դրամ։ Կանաչ տարածքների հիմնման և պահպանման համար նախատեսված է 1,367,246.0 հազ. դրամ, սիզամարգերի ստեղծման և ծաղկապատման աշխատանքների համար՝ 340,000.0 հազ. դրամ։

***Ծրագրային առաջարկություններ***

1. Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի, Հաղթանակ զբոսայգու և Եռաբլուր պանթեոնի տարածքների կանաչապատման զարգացման ծրագրերը հնարավորություն կընձեռնեն գլոբալ առումով լուծելու ոչ միայն մայրաքաղաք ներթափանցող փոշու ծանր մետաղներով աղտոտվածության նվազեցման քամիների

մեղմման խնդիրները, այլև կունենանք գեղեցիկ, ժամանակակից պահանջներին համապատասխանող կանաչ զանգվածներ:

2. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով Երևան քաղաքին հատկացվող մասհանումներով իրականացնել կանաչ տարածքների վերականգնում, բարելավվում և ոռոգման ցանցերի անցկացում:

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

## Հանրակրթության բաժին

## Վիճակի բնութագիր

Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը, որի ապահովման նպատակով շարունակվում են հանրակրթության ոլորտի բարեփոխումները: Գործողության մեջ է մտել ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին»:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 203 կրթական հաստատություն՝ 195 հանրակրթական դպրոցներ, 3 հատուկ դպրոց, 5 արհեստագործական ուսումնարաններ (աղյուսակ 1), 161 նախադպրոցական ուսումնական հաստատություններ (աղյուսակ 2): Երևանում սեպտեմբերի 24–ի դրությամբ գործում են թվով 46 ոչ պետական լիցենզավորված ուսումնական հաստատություններ և 18 ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

*Աղյուսակ 1*

**Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների, աշակերտների ու մանկավարժների բաշխվածությունը**

| Հ/Հ | Վարչական շրջան | Դպրոցների թիվը | Աշակերտների թիվը | Մանկավարժ. թիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աջափնյակ | 20 | 9360 | 834 | |
| 2 | Արաբկիր | 22 | 11007 | 1028 | |
| 3 | Ավան | 8 | 4121 | 339 | |
| 4 | Դավթաշեն | 6 | 3183 | 288 | |
| 5 | Էրեբունի | 22 | 11430 | 926 | |
| 6 | Կենտրոն | 33 | 15491 | 1322 | |
| 7 | Մալաթիա-Սեբաստիա | 17 | 12583 | 899 | |
| 8 | Նոր Նորք | 19 | 11409 | 947 | |
| 9 | Նորք Մարաշ | 4 | 942 | 109 | |
| 10 | Նուբարաշեն | 2 | 1248 | 96 | |
| 11 | Շենգավիթ | 29 | 13218 | 1126 | |
| 12 | Քանաքեռ–Զեյթուն | 13 | 6304 | 633 | |
| 13 | Հատուկ դպրոցներ | 3 | 311 | 101 | |
| 13 | Արհեստագործական ուսումնարան | 5 | 920 | 62 | 50-ը՝ արտադրական ուսուցման վարպետ |
| | *Ընդամենը* | *203* | **101266** | *8710* | |

Երեխայի բնականոն և համակողմանի զարգացման ապահովման գործում կարևոր է նախադպրոցական կրթության դերը, որի նկատմամբ պետական հոգածությունը Հայաստանի Հանրապետությունում առաջնային խնդիր է:

*Աղյուսակ 2*

**Երևանի քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների, երեխաների ու աշխատողների բաշխվածությունը**

| Հ/Հ | Վարչական շրջան | ՆՈՒՀ-ի թիվը | Երեխաների ցուցակային թիվը | Աշխատողների թիվը |
|---|---|---|---|---|
| 1 | Աջափնյակ | 16 | 2694 | 568 |
| 2 | Արաբկիր | 13 | 2377 | 358 |
| 3 | Ավան | 7 | 1470 | 202 |
| 4 | Դավթաշեն | 5 | 875 | 146 |
| 5 | Էրեբունի | 13 | 1833 | 373 |
| 6 | Կենտրոն | 21 | 2551 | 436 |
| 7 | Մալաթիա-Սեբաստիա | 22 | 3583 | 596 |
| 8 | Նոր Նորք | 22 | 3637 | 601 |
| 9 | Նորք Մարաշ | 4 | 242 | 94 |
| 10 | Նուբարաշեն | 1 | 159 | 26 |
| 11 | Շենգավիթ | 22 | 3429 | 613 |
| 12 | Քանաքեռ–Զեյթուն | 15 | 1819 | 328 |
| | *Ընդամենը* | *161* | *24669* | *4341* |

Կիրարկվում են «Հանրակրթության պետական կրթակարգի» պահանջները. 2009-2010 ուսումնական տարում դպրոց են մտել պետական ծրագրով նախատեսված նոր դասագրքեր:

Պետության կողմից համակարգին հատկացվող ֆինանսական ներդրումների ավելացումը նպատակ ունի բարձրացնել կրթության որակը: Պետբյուջեի միջոցներով և տարբեր ծրագրերով իրականացվում է դպրոցական գույքի նորացում:

Երևանի քաղաքապետարանի դպրոցներն ունեն 214 համակարգչային դասարան՝ 2081 համակարգիչներով, 30 էլեկտրոնային գրատախտակով: Թվով 116 դպրոց ընդգրկված են Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում (ՀԴԻՑ) :

Ֆինանսական նպատակային հատկացումներ են եղել պետբյուջեից, ինչը հնարավորություն է տվել թվով 24 դպրոցներում իրականացնել տարբեր աշխատանքներ, սակայն դպրոցական շենքերը հիմնականում վերանորոգման կարիք ունեն:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Երևանի թաղային համայնքների սեփականություն համարվող գույքը

սեփականության իրավունքով փոխանցվել է Երևանին: Քաղաքապետարանի ենթակայության են անցել նախադպրոցական 162 (այժմ՝ 161) հաստատություններ: Դպրոցական կրթության համար մեկնարկային հավասար պայմաններ ստեղծելը առաջնահերթ խնդիր է:

Այդ ուղղությամբ իրականացվել են որոշակի աշխատանքներ: Ըստ վարչական շրջանների կատարվել է երեխաների հաշվառում, ինչպես նաև սոցիալական տարբեր խմբերում նրանց ընդգրկվածության ուսումնասիրություն, որի հիման վրա նոր բյուջետային տարում նուհերում կգործի սոցիալապես անապահով ընտանիքների համար զեղչային համակարգ:

Տարեցտարի բարձրանում է նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնարանների դերը: Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են թվով 5 նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնարաններ.

Հ.4 – սպասարկման ոլորտ (խոհարար, վարսահարդար, դերձակ, ավտովերանորոգող-փականագործ մասնագիտությամբ):

Հ.5 – զարդակիրառական (գորգագործություն, ասեղնագործություն, ոսկերչություն, փայտի գեղարվեստական մշակում, մետաղի գեղարվեստական մշակում մասնագիտությամբ):

Հ.7 – պոլիգրաֆ (գործավար, հաշվետար, գործավար-ռեֆերենտ մասնագիտությամբ):

Հ.9 – սպասարկման ոլորտ (խոհարար, վարսահարդար, դերձակ, ավտովերանորոգող-փականագործ մասնագիտությամբ):

Հ.10 – երկաթուղային (էլեկտրաքարշի մեքենավար մասնագիտությամբ) և զարդակիրառական (գորգագործություն, ասեղնագործություն, ոսկերչություն, փայտի գեղարվեստական մշակում, մետաղի գեղարվեստական մշակում մասնագիտությամբ):

## 2010 թվականին իրականացված խոշոր և կարևոր ծրագրեր

Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից է անցումը 12-ամյա հանրակրթական համակարգի: 2009-2010 ուսումնական տարվանից իրականացվել է

առանձին գործող եռամյա ավագ դպրոցի ծրագիրը Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Ավան վարչական շրջանների դպրոցներում:

Երևանում գործում են թվով 31 ավագ դպրոց:

***Աղյուսակ 3***

**Երևանում գործող ավագ դպրոցների ցանկը**

| հ/հ | Դպրոցի անվանումը և համարը | հ/հ | Դպրոցի անվանումը և համարը |
|---|---|---|---|
| | **Աջափնյակ** | | **Կենտրոն** |
| 1 | Գ.Մարգարյանի անվան հ.94 | 13 | Մ. Աբեղյանի անվան հ.3 |
| 2 | հ.109 | 14 | Ա.Մարգարյանի անվան հ.29 |
| 3 | Ա. Երզնկյանի անվան հ.118 | 15 | Տ. Շեւչենկոյի անվան հ.42 |
| 4 | հ.195 | 16 | Խ.Դաշտենցի անվան հ.114 |
| | | 17 | Գ.Էմինի անվան հ.182 |
| | **Արաբկիր** | | |
| 5 | Մ. Քաջունու անվան հ.54 | | **Մալաթիա-Սեբաստիա** |
| 6 | Հ. Գալստյանի անվան հ.83 | 18 | հ.105 |
| 7 | Մ.Գալշոյանի անվան հ.148 | 19 | Ս. Խանզադյանի անվան հ.184 |
| 8 | Վ. Դավթյանի անվան հ.149 | 20 | Գ.Գյուլբենկյանի անվան հ.190 |
| | | | |
| | **Ավան** | | **Նոր Նորք** |
| 9 | հ.170 | 21 | հ.62 |
| | | 22 | Կ. Դեմիրճյանի անվան հ.139 |
| | **Դավթաշեն** | 23 | Ա. Ղարիբյանի անվան հ.142 |
| 10 | Ս. Գևորգյանի անվան հ.189 | 24 | հ.159 |
| | | | |
| | **Էրեբունի** | | **Շենգավիթ** |
| 11 | Ա. Իսահակյանի անվան հ.16 | 25 | հ.46 |
| 12 | Բ.Ժամկոչյանի անվան հ.119 | 26 | Լեոյի անվան հ.65 |
| | | 27 | հ.97 |
| | | 28 | Սոս Հովսեփյանի անվան հ.115 |
| | | | |
| | | | **Քանաքեռ-Զեյթուն** |
| | | 29 | հ.30 |
| | | 30 | Լ. Արիսյանի անվան հ.127 |
| | | 31 | հ.103 |

Շարունակվում է դպրոցների ինտեգրումը եվրոպական կրթական համակարգին:

Կարևորվում է էլեկտրոնային ռեսուրսների (համակարգչային հայալեզու էլեկտրոնային ծրագրեր, դասագրքեր, ուսուցողական նյութեր) ստեղծման և ուսումնական գործընթացում դրանց օգտագործման անհրաժեշտությունը:

Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի հովանավորությամբ և «Ավիահինֆոթել» ՓԲԸ–ի աջակցությամբ բոլոր դպրոցներին հատկացվել է «Հայ գրականության գանձեր» խտասկավառակ-էլեկտրոնային գրադարան, որն ընդգրկում է 32 հեղինակի 430 ստեղծագործություն:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելու համար մշակվել և դպրոցներին է հանձնարարվել միջոցառումների ծրագրեր՝ նվիրված Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Թումանյանի, Կոմիտասի, Լևոն Շանթի, Դանիել Վարուժանի, Պարույր Սևակի, Հրանտ Մաթևոսյանի, Ռաֆֆու, Կոստան Զարյանի հոբելյաններին: Համագործակցելով ՀՀ սփյուռքի նախարարության հետ՝ «Մայրենի լեզվի օր» պետական տոնի շրջանակում իրականացվել է բազմաբնույթ միջոցառումների շաբաթ Օշականում, Մատենադարանում: Կատարվել է ծաղկադրում հայոց ոսկեդենիկ լեզվի նվիրյալների հուշարձաններին:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ, համագործակցելով Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական, Կ.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական, Հ.Պարոնյանի անվան երաժշտական թատրոնների հետ, տարբեր ներկայացումների են հաճախել 4675 աշակերտներ (մարտ–ապրիլ-մայիս)՝ դիտել են «Ռոմեո և Ջուլիետ», «Մուսալեռ», «Ազգային գործիչը»,«Խելքից պատուհասը», «Չաո», «Ատամնաբույժն արևելյան», «Հարուստի աղջիկը տգեղ չի լինում» ներկայացումները:

Համագործակցելով ՀՀ ֆրանսիայի դեսպանատան, ՀՀ արտաքին կապերի նախարարության ֆրանկոֆոնիայի հարցերով բաժնի և հայկական «Ալյանս-ֆրանսե» կազմակերպության հետ 2010 թվականի մարտը հայտարարվել է ֆրանկոֆոնիայի ամիս, որի շրջանակում մայրաքաղաքի ֆրանսերեն ուսումնասիրող դպրոցներում իրականացվել են հետաքրքիր միջոցառումներ: Ֆրանկոֆոնիայի քաղաքապետների միջազգային ասոցիացիայի աջակցությամբ Երևանի հհ.48, 78, 119 դպրոցներում իրականացվում է լինգոֆոնային կաբինետների ստեղծման ծրագիր:

Պետությունը կարևորում է երեխաների ընդգրկվածության աճը նախադպրոցական ուսումնական հաստատություն և օժանդակում է հաստատությունների հզորացմանը: Ավելացվում են ներդրումները, ամրագրվում են նպատակային գումարներ՝ ուղղված երեխաների խնամքի և կրթության կազմակերպմանը, նախադպրոցական կրթության մատչելիությանը:

Երևանի 2010 թվականի զարգացման ծրագրով առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից է նուհերի ջեռուցման համակարգի ստեղծումը: Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով նախատեսած ֆինանսական հատկացումների հաշվին: Ջեռուցման շրջանում Երևանի բոլոր նուհերը ապահովված կլինեն անհատական ջեռուցման համակարգով:

Բավականաչափ նորացվել է փափուկ և կոշտ գույքը: Աջափնյակ, Նորք–Մարաշ, Նոր Նորք, Մալաթիա–Սեբաստիա, Նուբարաշեն վարչական շրջանների նուհերը համալրվել են սեղան–աթոռներով, մահճակալներով, սալօջախներով, սառնարաններով: Գործընթացը շարունակվում է:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների վերապատրաստման ուղղությամբ 2010 թվականին կատարվել են որոշակի աշխատանքներ: ՀՀ առողջապահության նախարարության և քաղաքապետարանի համագործակցությամբ վերապատրաստվել են նուհերի բուժքույրերը: ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի աջակցությամբ նուհերի տնօրենների վերապատրաստումը ընթացքի մեջ է:

Ապահովվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձի համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը:

## Հիմնախնդիրներ

- *Հանրակրթական, հատուկ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների և արհեստագործական ուսումնարանների շենքային պայմանների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:*
- *Հանրակրթական դպրոցների և արհեստագործական ուսումնարանների ջեռուցման համակարգի բարելավում, լոկալ կաթսայատների կառուցում:*

- *Քաղաքապետարանի հանրակրթական, հատուկ նախադպրոցական ուսումնական հաստատությունների և արհեստագործական ուսումնարանների՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով ապահովում և ընդգրկում «Կրթական համալիր էջ» ինտերնետային պորտալ:*
- *Դպրոցների գրադարանային ֆոնդի համալրում գեղարվեստական, մեթոդական և մասնագիտական գրականությամբ: Էլեկտրոնային գրադարանների զարգացում:*
- *Հանրակրթական, հատուկ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների և արհեստագործական ուսումնարանների՝ անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, դիդակտիկ նյութերով, լաբորատոր սարքավորումներով, մարզագույքով ապահովում, ինչպես նաև գործող սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան գույքի ձեռքբերում:*
- *Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման համակարգի բարելավում, խորհուրդների ստեղծում:*
- *Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում և ընդգրկում նուի, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ համապատասխան աշխատանք իրականացնող կենտրոնների ստեղծում՝ յուրաքանչյուր վարչական շրջանում:*
- *Արդի շուկայի պահանջներին համապատասխան՝ արհեստագործական ուսումնարանների՝նոր մասնագիտություններով համալրում:*

## Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ

- *Հանրակրթական, հատուկ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների և ուսումնարանների անմխիթար վիճակում գտնվող շենքերի հիմնանորոգում /գծապատկերներ 3,4/:*
- *Անհատական կաթսայատների կառուցում /գծապատկեր 5/:*
- *Ներառական կրթություն իրականացնող դպրոցների, հատուկ դպրոցների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանեցում սովորողների ֆիզիկական*

*պահանջներին, ինչպես նաև վերոնշյալ հաստատությունների մանկավարժական համակազմի՝ համապատասխան մասնագետներով համալրում:*

- *Դպրոցական գույքի նորացում, համապատասխան նյութատեխնիկական բազայով ապահովում:*

***Աղյուսակ 3***

**Հիմնանորոգման և վերանորոգման կարիք ունեցող դպրոցները (ք.Երևան)**

| Հ/Հ | Վարչական շրջան | Հիմնանորոգում /դպրոցի համարը/ | Տանիք | Սանհան հանգույց | Դուռ, պատու հան | Մարզա դահլիճ, հանդիս. դահլիճ | Միջանցք, դասասեն յակների |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Աջափնյակ | hh. 122, 126, 146 | hh.102, 111, 138 | hh.22, 102, | - | hh.111, 138, 188 | |
| 2 | Արաբկիր | h. 21 | hh.36, 76 | - | hh.76, 128, 145, 151, 172 | hh.37, 76, 77, 145, 151 | h.172 |
| 3 | Ավան | h.104 | - | - | - | - | - |
| 4 | Դավթաշեն | - | - | h.199 | - | hh. 199 | - |
| 5 | Էրեբունի | hh. 34, 68, 70, 120, 178, | - | hh.49, 64, 35, 45, 123 | hh49, 35, 64, 107, 123 | hh.6, 35, 43, 49, 64, 107, 123 | hh.35, 45, 47, 49, 64, 107, 123 |
| 6 | Կենտրոն | hh. Հ.Կոջոյան,2, 25, 41, 71 | hh.23, 42, | hh.8, 13, | - | hh.10, 19, 33, 40, 41 | hh.,5, 4, |
| 7 | Մալաթիա-Սեբաստիա | hh.91, 105, 116, 152, 176, 179, 90 (1–ին մասնաշենքը վթարային) | h.113 | hh.121 | hh.113 | - | h.191 |
| 8 | Նոր Նորք | hh.133, 134, 135, 141, 142, 163, 164, 166, 186 | hh.Հր.Մաթ. 88, 163, 143, 139 | hh. 187,197 | hh. 88, 106, 143, 187 | hh.,150, 187 | hh. 88, 106, 143, 150, |
| 9 | Նորք Մարաշ | h. 157 | - | hh.61, 26 | h.61 | h.61 | hh.61, 26 |
| 10 | Նուբարաշեն | hh.95, 175 | - | - | - | | |
| 11 | Շենգավիթ | hh. 50, 66, 74, 140, 144, 169, 173 | hh.18, 27, 31, 75, 154, 161 | hh.12, 18, 31, 52, 86 | hh.12, 27, 38, 86, 137 | hh.31, 154 | hh.12, 38, 75, 86, 110, 161 |
| 12 | Քանաքեռ–Զեյթուն | hh.48, 59, 85 | | hh.44, 147 | hh. 44, 147 | hh. 44, 147 | hh. 44, 147 |

*Աղյուսակ 4*

## Հիմնանորոգման և վերանորոգման կարիք ունեցող նախադպրոցական ուսումնական հաստատությունները

| Հ/Հ | Վարչական շրջան | Հիմնանորոգում /նուհ-ի համարը/ | Տանիք | Սանհանգույց |
|---|---|---|---|---|
| 1 | Աջափնյակ | 36, 39, 40, 41, 43, 44, 48, 50 | 35, 37, 38, 40, 42, 45, 46, 47, 49 | 36, 38, 39, 40, 41, 42, 44, 45, 47, 48, 49, 50 |
| 2 | Արաբկիր | 24, 26 | 22, 23, 25, 26 | 22, 23, 25, 29, 30, 31, 32 |
| 3 | Ավան | - | 53, 55 | 53, 56 |
| 4 | Դավթաշեն | 58, 61, 62 | 59, 61 | 58, 60, 62 |
| 5 | Էրեբունի | 65, 68, 69, 71 | 63, 65, 66, 70, 73, 74, 75 | 63, 74, 75 |
| 6 | Կենտրոն | 4, 5, 10, 12, 14 | 2, 5, 8, 10, 11, 15, 17, 18 | 5, 7, 8, 10, 18, 21 |
| 7 | Մալաթիա-Սեբաստիա | 76, 80, 82, 83, 84, 86, 87, 88, 92 | 76, 77, 78, 80, 81, 85, 89. 90, 91, 95 | 78, 79, 85, 89, 93, 94, 96, 97 |
| 8 | Նոր Նորք | 100,103,108,109,116, 118 | 101, 102, 104, 106, 107, 110, 111, 112, 113, 114, 120 | 101, 105, 107, 110, 113, 114, 119, 120 |
| 9 | Նորք-Մարաշ | 122 | 121 | 121 |
| 10 | Նուբարաշեն | 125 | - | - |
| 11 | Շենգավիթ | 134, 135, 139 | 126, 131, 138, 139, 143 | 126, 129, 131, 132, 134, 141, 142, 143, 146, 147 |
| 12 | Քանաքեռ–Զեյթուն | 148, 149, 150, 155, 159 | 153, 157, 160, 161, 162 | 151, 153, 157, 158, 160 |

*Աղյուսակ 5*

| Հ/Հ | Վարչական շրջան | Դպրոցների համարները | Նախահաշվային արժեք /հազ.դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Էրեբունի | հ. 34 | 33784.66 |
| | | հ.47 | նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պատվիրվել |
| | | հ.120 | 48980.92 |
| | | հ.107 | 40530.40 |
| | | հ.7 ուսումնարան | նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պատվիրվել |
| | | հ.9 ուսումնարան | |
| 2. | Կենտրոն | հ.3 | 46770.2 |
| | | Հակոբ Կոջոյան | 33351.7 |
| | | հ.23 | նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պատվիրվել |
| | | հ.25 | 48690.0 |
| | | հ.40 | 46650.0 |
| | | հ.42 | 43463.0 |
| | | հ.53 | նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պատվիրվել |
| | | հ.72 | |
| | | հ.81 | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| | | h.182 | 35845.0 |
| **3.** | Մալաթիա–Մեբաստիա | h.176 | 73566.9 |
| **4.** | Նոր Նորք | h.134 | 41474.4 |
| | | h.141 | 71252.8 |
| | | h.133 | 64496.4 |
| | | h.163 | 82549.0 |
| | | h.159 | 114057.57 |
| | | h.4 ուսումնարան | նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պատվիրվել |
| **5.** | Նորք Մարաշ | h.157 | 73784.0 |
| **6.** | Շենգավիթ | h.31 | 48110.83 |
| | | h.65 | 55672.8 |
| | | h.66 | 78876.9 |
| | | h.169 | 59213.26 |
| | | h.144 | 67821.5 |
| **7.** | Աջափնյակ | h.102 | 59976.2 |
| | | h.108 | 63129.5 |
| | | h.111 | 57676.18 |
| | | h.146 | 69720.52 |
| **8.** | Արաբկիր | Գույրերի երեկոյան | նախագծանախահաշվային փաստաթղթեր չեն պատվիրվել |
| | | h.5 ուսումնարան | |

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- ՀՀ պետբյուջեից դպրոցական շենքերի պահպանման համար հատկացվող գումարի չափի վերանայում:
- Մանկավարժների խրախուսման նպատակով «Տարվա լավագույն դպրոցե, «Տարվա լավագույն տնօրենե, «Տարվա լավագույն ուսուցիչե,«Տարվա լավագույն դաստիարակե և այլ մրցույթների քաղաքային փուլի անցկացման ֆինանսավորման ապահովում:
- Ազգային ժողովի գավաթի խաղերի անցկացում /քաղաքային, հանրապետական փուլ/:
- Սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելու համար միջոցառումների իրականացում՝ նվիրված 2011 թվականի անվանի հոբելյարներին:

Շարունակել անվանակիր դպրոցների կողմից անվանատուներին նվիրված ավանդական միջոցառումները;

- «Մեծ հայերը» խորագրով բազմաբնույթ միջոցառումներ, շարադրությունների մրցույթներ՝ նվիրված Սփյուռքի մեր հայրենակիցներին։
- Երեխաների պաշտպանության օրը Ազատության հրապարակում մանուկների շքահանդեսի կազմակերպում/5-7 տարեկաններ/։
- Համագործակցելով ՀՀ սփյուռքի նախարարության հետ՝ «Մայրենի լեզվի օրե պետական տոնի շրջանակում իրականացնել բազմաբնույթ միջոցառումների շաբաթ Օշականում, Մատենադարանում։ Կատարել ծաղկադրում հայոց ոսկեդենիկ լեզվի նվիրյալների հուշարձաններին։
- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել սովորողների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերին։ Ապրիլ–մայիս ամիսներին կազմակերպել 11-րդ դասարանցիների ռազմադաշտային ուսումնական պարապմունքներ։
- Օրենսդիր մարմնի հետ դպրոցի կապը ապահովելու նպատակով «Իրավունքե առարկայի շրջանակում կազմակերպել 9-11-րդ դասարանների աշակերտների մասնակցություն ԱԺ քառօրյա նիստերին՝ որպես բաց դասի օրինակ։
- 2011 թվականը քաղաքապետարանի կրթական հաստատություններում հայտարարել Նժդեհյան տարի՝ ծննդյան 125 ամյակի կապակցությամբ՝ հիմքում դնելով հայրենապաշտության գաղափարը։
- Ուսումնական հաստատություններում տոնել Հայկական բանակի 19 ամյակը, որի շրջանակում կազմակերպել ռազմագիտության կաբինետների մրցույթ, հայրենաշունչ երգերի փառատոն։
- Կազմակերպել Շուշիի ազատագրմանը նվիրված միջոցառումների շարք։ Դպրոցականների ուժերով կազմակերպել Հայրենական պատերազմի վետերաններին նվիրված «Սերունդների կամուրջե միջոցառում;
- Կազմակերպել «Կորյունե ռազմամարզական խաղերի համայնքային և քաղաքային փուլերը, շախմատի դպրոցական օլիմպիադան։
- Շարունակել Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ ստեղծված համագործակցությունը Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական, Կ.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական, Հ.Պարոնյանի անվան երաժշտական թատրոնների հետ։

- Արհեստագործական ուսումնարանների սովորողների ստեղծագործությունների ցուցահանդեսների կազմակերպում:
- Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հմագործակցությամբ բնապահպանական միջոցառումների իրականացում:
- Նշված միջոցառումները լուսաբանել զանգվածային լրատվական միջոցներով:

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքում ազգաբնակչության ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է 98 առողջապահական կազմակերպությունների կողմից: Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվում են թվով 25 առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններ՝ 5 հիվանդանոց, 15 պոլիկլինիկա, 2 բուժսանմաս, 2 դիսպանսեր և շտապբուժօգնության ծառայությունը:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած տուբերկուլյոզի դեմ պայքարի 2007-2015թթ. ազգային ծրագրի շրջանակներում 2010թ. Երևան քաղաքն ամբողջությամբ ընդգրկվել է ԴԿ (դեղակայուն) տուբերկուլյոզի դեմ բուժման ծրագրի մեջ: Երևանում գործում է ԴԿՏ բուժմամբ զբաղվող 5 կաբինետ:

«Աջակցություն առողջապահական կազմակերպություններին բժշկական սարքավորումների և շտապօգնության մեքենաների ձեռք բերման համար» ծրագրի շրջանակներում 9 ընկերությունների տրամադրվել են 37.0 մլն դրամ արժողությամբ բժշկական սարքավորումներ:

Երևանի զարգացման 2010 թվականի ծրագրով նախատեսված «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Նոր Արաբկիր» ԱԿ» ԴՓԲԸ-ում 61.0 մլն դրամ արժողությամբ կաթսայատան և ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ: Ընթացքի մեջ է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 1-ին մասնաշենքի կցակառույցի 99.7 մլն դրամ արժողությամբ շինարարական աշխատանքները: Նախատեսվում է իրականացնել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի 72.9 մլն դրամ շինարարական աշխատանքները:

## Հիմնախնդիրներ

Առողջության առաջնային պահպանման ծառայությունների բարելավման գործում անհրաժեշտ է ապահովել ախտորոշիչ ծառայությունների մատչելիությունը:

Առողջապահության բնագավառում առողջապահական տեղեկատվական համակարգի կարևորությունն անգնահատելի է, ուստի նպատակահարմար է ստեղծել առողջապահական ընկերություններ-քաղաքապետարան համակարգչային ցանց, առողջապահության ոլորտի տեղեկատվական, վերլուծական, մոնիթորինգի բաժին, որը կվերլուծի և կգնահատի բնակչության առողջության ցուցանիշները:

Անհրաժեշտ է մշակել և սկսել բուժօգնության որակի վերահսկման չափանիշների, ինչպես նաև վերանայված սանիտարական նորմերի ու կանոնների ներդրման գործընթացը:

2010թ. ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բժիշկների անհատական և խմբային անկախ պրակտիկաների իրականացման կարգը հաստատելու մասին» հ.497-Ն որոշման համաձայն նախատեսվում էր անկախ պրակտիկայի ներդրում, սակայն այն չի կատարվել և արդիական է նաև 2011թ. համար:

Բուժօգնության հիվանդանոցային համակարգում կշարունակվի բարձրացնել բուժման որակը՝ ժամանակակից բուժման մեթոդների և սարքավորումների կիրառմամբ, որի արդյունքում կնվազի բուժման միջին տևողությունը և կբարձրանա մեկ մահճակալի շրջապտույտը:

Հիվանդանոցային բուժօգնության մակարդակում արդյունավետության բարձրացման առանցքային ուղղություն է հանդիսանալու առկա սահմանափակ պետական միջոցների կենտրոնացումը՝ հնարավորին չափ փոքր թվով բուժհիմնարկներում:

## 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Ազգաբնակչության բուժկանխարգելիչ օգնությունը և սպասարկումն ապահովելու նպատակով նախատեսվում է Երևան քաղաքում սկսած 2011 թվականից առաջիկա 3 տարիներին առողջապահության ոլորտի զարգացման գերակա ուղղություն ընդունել ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության վիճակի բարելավումը՝ հիմնական շեշտը դնելով մատուցվող ծառայությունների ծավալների ավելացման և որակի կտրուկ բարձրացման վրա: Այդ հարցերի լուծման համար նախատեսվում է իրականացնել միջոցառումների համալիր ծրագիր:

3. Առողջապահական հիմնարկների տեղային ջեռուցման համակարգերի ներդրման աշխատանքներ:

4. Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների վերազինում նորագույն բժշկական սարքավորումներով և գործիքներով:

5. Ընկերությունների կադրային համալրում երիտասարդ մասնագետներով, հին կադրերի պարբերաբար վերապատրաստում և մասնագիտացում:

6. Ընկերությունների շենքային պայմանների բարելավում:

7. Առողջապահական ընկերություններ – քաղաքապետարան համակարգչային ցանցի ստեղծում:

8. Երևան քաղաքի շտապ օգնության ծառայության արդիականացում և զարգացում:

9. Երևան քաղաքի գյուղատիպ և ծայրամասային թաղամասերում ընտանեկան բժշկության գրասենյակների ստեղծում:

ՀՀ կառավարության թվականի մարտի 30-ի «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ գրանցման կարգը հաստատելու մասին» հ.420-Ն որոշման համաձայն կշարունակվի առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ գրանցման գործընթացը, որով անցում կկատարվի տեղամասային սկզբունքից բժշկի ազատ ընտրությանը: Շարունակվելու է ընտանեկան բժշկության համակարգի ներդնումը, ինչը ենթադրվում է ընտանիքի ամբուլատոր սպասարկում մեկ կառույցի կողմից և աստիճանաբար տեղամասային մանկաբույժների, թերապևտների և նեղ մասնագետների փոխարինում ընտանեկան բժիշկներով: Ընտանեկան բժշկության անհատական (խմբային) պրակտիկայի ներդրումը սկզբնական շրջանում նախատեսվում է կազմակերպել Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող գյուղական բնակավայրերում և տարածքային առումով առանձնացված թաղամասերում՝ ձևավորելով ընտանեկան բժշկության գրասենյակներ, որոնց համար բազա կարող են հանդիսանալ նաև գործող պոլիկլինիկաները: Այնուհետև ընտանեկան բժշկության գրասենյակների կարող են վերածվել 10000-ից պակաս թվով ազգաբնակչություն սպասարկող պոլիկլինիկաները: Վերջիններս աստիճանաբար պետք է ստանան ինքնուրույն կարգավիճակ՝ հիմնված սպասարկվող (գրանցված) բնակչության թվի

ֆինանսավորման, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների վրա:

Միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ նախատեսվում է Երևանում 2011թ. բացել ԴԿՏ բուժմամբ զբաղվող ևս 3 կաբինետ՝ «Քանաքեռ-Զեյթուն», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ներում և Հակատուբերկուլյոզային դիսպանսերում: Հակատուբերկուլյոզային ծառայությունը Երևան քաղաքի ազգաբնակչությանն ավելի մատչելի դարձնելու համար, նախատեսվում է այն պոլիկլինիկաներում, որտեղ չկան ԴԿՏ կաբինետներ, ստեղծել խորխի հավաքման կետեր, հավաքված նմուշները կենտրոնացված կարգով կտեղափոխվեն դիսպանսեր և ազգային ռեֆերենս լաբորատորիա:

2011 թվականին նախատեսվում է շարունակել շենքերի պահպանմանն ու վերականգնմանն ուղղված ընթացիկ, մասնակի վերանորոգման աշխատանքները և ջեռուցման համակարգերի տեղակայումը:

Շտապօգնության ծառայության ոլորտում նախատեսվում է բուժսարքավորումների, կապի համակարգի և ավտոմոբիլային պարկի արդիականացում:

Շարունակական բնույթ է կրելու հեռուստահաղորդումների միջոցով հանրության իրազեկման բարձրացումը՝ ուղղված շաքարային դիաբետի կանխարգելմանը (ռիսկի գործոններ, առողջ ապրելակերպ և այլն):

Ընթացքի մեջ են տարափոխիկ հիվանդությունների՝ տուբերկուլյոզի (պալարախտ), սեռավարակների և ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ հայտնաբերման և լիարժեք բուժման աշխատանքները:

Քրոնիկ հիվանդների դիսպանսեր հսկողության արդյունավետության բարձրացման և աշխատանքների գնահատման նպատակով նախատեսվում է ստեղծել տվյալների ավտոմատացված բազա:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ապահովության վարչության հիմնական գործառույթը 12 ՍԾՏԲ-ների միջոցով կարիքավոր բնակչության հաշվառումն է և պետական նպաստների նշանակումը:

## Վիճակի բնութագիր

2010թ. ութ ամիսների ընթացքում Երևան քաղաքում՝ ընտանեկան նպաստներ և հրատապ դրամական օգնություն են ստացել շուրջ 19380 ընտանիքներ, փաստացի ծախսը կազմել է շուրջ 3162,0 մլն դրամ: Երեխայի ծննդյան նպաստներ են ստացել 8430 ընտանիքներ, 2010 թվականի ութ ամիսների ընթացքում փաստացի ծախսը կազմել է 798.6 մլն դրամ:

Առաջին դասարան հաճախելու կապակցությամբ նպաստներ կստանան շուրջ 1475 ընտանիքներ (յուրաքանչյուրը 25000դր):

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստներ են նշանակվել 3500 երեխաների աշխատող մայրերի (ամսական 18000 դրամ), 2010 թվականի ութ ամիսների ընթացքում փաստացի ծախսը կազմել է 695,0 մլն դրամ:

Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ Հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց ՍԾՏԲ-ներից փոխհատուցում են ստացել 1300 քաղաքացիներ, նրանց վճարվել է 340.0 մլն դրամ:

Երևան քաղաքում կենսաթոշակ են ստանում շուրջ 170000 կոնսաթոշակառուներ, ութ ամիսների ընթացքում նրանց ՀՀ պետբյուջեից և սոց հիմնադրամի միջոցներից վճարվել է շուրջ 40.0մլրդ դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի. հ.1523-Ն և 2009 թվականի հունիսի 26-ի հ.723-Ն՝ ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա ավելի վճարված գումարներից 2010 թվականի. ութ ամիսների ընթացքում ՀՀ պետ բյուջե է հետգանձվել շուրջ 23.4 մլն դրամ, իսկ 2009 թվականի ընթացքում՝ 16.6 մլն դրամ (ընդամենը 40 մլն. դրամ): Վարչության կողմից ՍԾՏԲ-ներում անցկացված ուսումնասիրությունների արդյունքում տարաբնույթ խախտումների պատճառով

հայտնաբերվել է շուրջ 107000 դրամ նպաստի ավելի վճարում, որն աբողջությամբ հետգանձվել է ՀՀ պետ բյուջե:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության ոլորտի գործունեության կարևորագույն մասն են կազմում նաև սոցիալական խավերի համար իրականացվող միջոցառումները, որոնք որոշակիորեն մեղմում են քաղաքացիների սոցիալական դժվարությունները:

1. Մայրաքաղաքի Հ.Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Ստանիսլավսկու անվան թատրոնների հետ համատեղ վարչությունը կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված 3550 անձանց անվճար, թատերական ներկայացումների տոմսեր է տրամադրել:

2. Կանանց միջազգային օրվա կապակցությամբ մարտի 8-ին՝ կազմակերպվել է միջոցառում նվիրված կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող շուրջ 1000 կանանց համար: Երևանի բյուջեից տոմսերի ձեռքբերման և նվերների համար ծախսվել է 3.0 մլն դրամ:

3. Սուրբ Զատիկի կապակցությամբ երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ, կարիքավոր ընտանիքների երեխաների համար Սուրբ Սարգիս եկեղեցում կազմակերպվել է Զատկական տոն և ճաշկերույթ «Հարսնաքար» ռեստորանում, միջոցառման համար Երևանի բյուջեից ծախսվել է 2,5 մլն դրամ: Միջոցառմանը մասնակից երեխաների համար Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ Սրբազանի մասնակցությամբ կազմակերպվել է մանուկների օրհնության կարգ և Զատկական փոքրիկ պատարագ:

4. Մայրության օրվա՝ ապրիլի 7-ի կապակցությամբ մայրության խրախուսման նպատակով կազմակերպվել է ընդունելություն քաղաքապետի կողմից մասնակցությամբ 4 և ավելի երեխաներ ունեցող, ինչպես նաև երեխայի սպասող (հղի) մայրերի, որոնց մատուցվել են նվերներ: Երևանի բյուջեից միջոցառման համար ծախսվել է 1,5 մլն դրամ:

5. Հաղթանակի 65- ամյակի կապակցությամբ՝

5.1 Հայրենական պատերազմի 18 վետերանների համար կազմակերպվել է հանգստի ծրագիր Դիլիջանի «Լեռնային Հայաստան» առողջարանում: Երևանի բյուջեի միջոցների հաշվին ծրագրի համար ծախսվել է շուրջ 3.0 մլն դրամ:

5.2 Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 6-ի հ.312-Ա կարգադրությամբ Հայրենական պատերազմի երևանաբնակ 1394 վետերանների Երևանի բյուջեի միջոցների հաշվին հատկացվել է դրամական օժանդակություն 11.6 մլն. դրամի շրջանակներում:

6. Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների 120 մանուկներ հունիսի 1-ին՝ երեխաների միջազգային օրվա կապակցությամբ ծնողների հետ այցելել են Երևանի կենդանաբանական այգի, որտեղ նրանց համար կազմակերպվել են միջոցառումներ:

7. Ծնելիության խրախուսման և նորածիններ ունեցող ընտանիքներին աջակցելու նպատակով, վարչության կողմից, ՍԾՏԲ-ների միջոցով, կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով շուրջ 480 ընտանիքների տրամադրվել են մանկասայլակներ:

8. ՀՀ վարչապետի 2010 թվականի հունիսի 1-ի հ.395-Ա որոշմամբ՝ ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 850 երեխաներ ամառային հանգիստն անցկացրել են մանկական առողջարարական ճամբարներում:

9. Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ, վարչական շրջանների և քաղաքապետարանի կողմից 2010-2011թթ. ուսումնական տարվա կապակցությամբ կարիքավոր ընտանիքների 4445 երեխաների հատկացվել են պայուսակներ և գրենական պիտույքներ՝ 26.5 մլն. դրամի արժողությամբ (Երևանի Բյուջե):

10. ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով Երևանում իրականացվել և իրականացվում են 7 սոցիալ-կենցաղային նշանակության ծրագրեր, որոնցում ժամանակավոր աշխատանքով են ապահովվել շուրջ 150 քաղաքացիներ: Պետության բյուջեից նրանց որպես աշխատավարձ վճարվելու է շուրջ 26.8 մլն դրամ աշխատավարձ:

11. Չնայած պետության կողմից հասցեավորված սոցիալական աջակցությանը, դեռևս կան տարեցներ, ովքեր կարիք ունեն լրացուցիչ օգնության և հոգածության կարիք: Դրանք հիմնականում միայնակ, անժառանգ կամ ծայրահեղ կարիքի մեջ

գտնվող տարեցներն են, որոնց աջակցելու, կերակրելու և հոգածությամբ շրջապատելու համար Երևան քաղաքի վարչական շրջանների հետ համատեղ «Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպությունը բացել է բարեգործական ճաշարաններ, որտեղ ամենօրյա տաք ճաշ են ճաշակում շուրջ 2105_տարեցներ։

12. Հոկտեմբերի 1-ին՝Տարեցների օրվա կապակցությամբ, նախատեսվում է միջոցառում, որի համար Երևանի բյուջեից կծախսվի 1,0 մլն. դրամ։

13. Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ, նախատեսվում են այցելություններ կույրերի և խուլերի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ. նրանց կնվիրվեն լիակազմ համակարգիչներ։

14. Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի և Ծննդյան տոների կապակցությամբ Երևանի քաղաքապետի անունից նախատեսվում են միջոցառումներ, որոնցից հետո նրանք կստանան տոնական նվերներ

15. 17 երեխաներ ունեցող Ա. Կիրակոսյանի ընտանիքին քաղաքապետարանի կողմից նվիրաբերվել են 2 բնակարան։

## Հիմնախնդիրները

Սոցիալական ապահովության ոլորտի պետական և Երևանի քաղաքային բյուջեի ֆինանսավորման ծավալների աստիճանական աճը և իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացումը և օրենսդրական դաշտի կարելագործումը դիտվելու է որպես առաջնահերթ խնդիր։ Ոլորտի ռազմավարությունը նպատակաուղղվելու է առկա. ներքոհիշյալ հիմնախնդիրների լուծմանը.

1. Պետական նպաստների համակարգի կատարելագործում և հասցեականության մեծացում, ընտանեկան նպաստների համակարգը՝ որպես աղքատության հաղթահարման արդյունավետ գործիք, կարիք ունի կատարելագործման։ Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով պետք է շարունակական լինի

ընտանեկան նպաստի հասցեականության մեծացումը, ինչպես նաև պետք է հստակեցվեն հարակից բազաներից ստացվող տեղեկատվության մեխանիզմները:

2. Հաշմանդամների սոցիալական ինտեգրումը - Երևան քաղաքում հաշվառված են շուրջ 63000 սահմանափակ կարողություններով հաշմանդամներ: Նրանց զգալի մասը չի կարողանում ազատ տեղաշարժվել և ինտեգրվել հասարակությանը՝ սոցիալական մեկուսացվածության պատճառով:

3. Զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորում և գործազրկության մակարդակի նվազում:

4. Հայաստանի Հանրապետությունը, որպես ազգային անվտանգության սպառնալիք է դիտում ցածր ծնելիությունը: Ուստի Երևանում անհրաժեշտ է ծնելիության խթանման նպատակով երեխաներ ունենալու և մեծացնելու համար ստեղծել բարենպաստ պայմաններ: Ծնելիության ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից մեկն էլ ամուսնությունների դեռևս ոչ բավարար, ինչպես նաև ամուսանալուծությունների բարձր մակարդակն է, որի վրա ուղղակի ազդեցություն ունեն նյութական, բնակարանային, կենցաղային պայմանները: Այս հանգամանքներն ազդեցություն ունեն նաև ամուսնալուծությունների վրա:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ շարունակական բնույթ է ունենալու 10 և ավելի երեխաներ ունեցող, բնակարանի կարիք ունեցող երևանցի ընտանիքների համար բնակարանային խնդիրների լուծումը:

## 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումները

Սոցիալական ապահովության բնագավառում Երևանի քաղաքապետարանի ռազմավարությունը ուղղված է քաղաքացիների իրավունքների, տնտեսական, սոցիալական և իրավական երաշխիքների պաշտպանությանն ու իրականացմանը, սոցիալական ռիսկերի արդյունավետ կառավարմանը և դրանց նվազեցմանը: Հաշվի առնելով, որ հասարակության ավելի կարիքավոր կամ աղքատ խավը, որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի 2011 թվականի զարգացման ծրագրում նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են լինելու ռիսկերի կրճատմանն ու կանխարգելմանը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված

անձանց դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջմունքները բավարարելու, հասարակությանն ինտեգրվելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու նպատակով տրամադրվող սոցիալական ծառայությունների մատուցմանը:

Երևանի քաղաքապետարանի սոցիալական ոլորտի զարգացման ծրագիրը նպատակային սոցիալական քաղաքականության ազդեցիկ գործիք է՝ աղքատության հաղթահարման և մայրաքաղաքի բնակչության կենսամակարդակի զգալի բարձրացման համար: 2011 թվականին նախատեսվում են

***Պետական նպաստների համակարգի կատարելագործում և հասցեականության մեծացում***

Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով պետք է շարունակական լինի, ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով նպաստառության իրավունք ձեռք բերած ընտանիքների զտումը համակարգից և քաղաքացիներին ավելի վճարված գումարների ետգանձումը ՀՀ պետբյուջե:

2011 ընթացքում Երևան քաղաքում՝ պետական նպաստներից կօգտվեն միջին հաշվով 19000 ընտանիքներ, և ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ կլինի շուրջ 5.0-5.5 մլրդ դրամ գումար:

Կանանց միջազգային օրվա կապակցությամբ 2011թ. մարտի 8-ին՝ կազմակերպվելու է միջոցառում նվիրված կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող շուրջ 900 կանանց համար: Տոմսերի ձեռքբերման և նվերների համար անհրաժեշտ կլինի 4.0 մլն դրամ (Երևանի բյուջեից):

Մայրության օրվա՝ ապրիլի 7-ի կապակցությամբ մայրության խրախուսման նպատակով կազմակերպվելու է միջոցառում մասնակցությամբ 4 և ավելի երեխաներ ունեցող, ինչպես նաև երեխայի սպասող (հղի) մայրերի, որոնց մատուցվելու են նվերներ: Միջոցառման համար անհրաժեշտ կլինի 2.0 մլն դրամ (Երևանի բյուջեից): Տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի կապակցությամբ նախատեսվող միջոցառման համար անհրաժեշտ կլինի 2.0 մլն դրամ (Երևանի բյուջեից):

Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ, նախատեսվում է այցելություններ հաշմանդամների խնդիրներով զբաղվող

հասարակական կազմակերպություններ. նրանց կցուցաբերվի համապատասխան օժանդակություն: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի 3.0 մլն դրամ (Երևանի բյուջեից):

Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի և Ծննդյան տոների կապակցությամբ Երևանի քաղաքապետի անունից նախատեսվում են միջոցառումներ, երեխաները կստանան տոնական նվերներ, այդ նպատակով անհրաժեշտ կլինի 2.0 մլն դրամ (Երևանի բյուջեից):

Մայրաքաղաքի Հ.Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Ստանիսլավսկու անվան թատրոնների հետ համատեղ վարչությունը կշարունակի կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված 5000 անձանց անվճար, թատերական ներկայացումների մասնակից դարձնել, ինչը հրաշալի միջոց է նրանց սոցիալական լարվածությունը մեղմելու և մշակութային կյանքին ինտեգրելու համար

ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով 2011թ. Երևանի 8 վարչական շրջաններում (2010թ. 4 վարչական շրջանի փոխարեն) իրականացվելու են 15 սոցիալ-կենցաղային նշանակության ծրագրեր (2010թ 7 ծրագրերի փոխարեն) որոնցում ժամանակավոր աշխատանքով կապահովվեն շուրջ 180-250 քաղաքացիներ: Պետության բյուջեից նրանց որպես աշխատավարձ նախատեսվում է հատկացնել շուրջ 47.0 մլն դրամ

Երևան քաղաքում կենսաթոշակներ կստանան շուրջ 172000 կենսաթոշակառուներ, 12 ամիսների ընթացքում նրանց ՀՀ պետբյուջեից և սոց հիմնադրամի միջոցներից նախատեսվում է վճարել 63000.0 մլն դրամ գումար:

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքում գործում են 4 մանկատներ, որոնցից մեկը բարեգործական, որտեղ խնամվում են առանց ծնողական խնամքի մնացած 260 երեխա: Գործում են նաև 8 հատուկ դպրոց, 3 հատուկ կրթահամալիր և 2 գիշերօթիկ հաստատություն, որտեղ սովորում, խնամք և դաստիարակություն են ստանում առողջական և վարքային խնդիրներ ունեցող, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 1500 երեխաներ:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնում սոցիալական պաշտպանության նպատակով հաշվառված են առանց ծնողական խնամքի մնացած և դրանց թվին պատկանող շուրջ 500 երեխաներ և անձինք, ստեղծված է նրանց տվյալների տեղեկատվական շտեմարան, առանձին հաշվառում է իրականացվում իրավախախտ, մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների համար:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

2009 թվականի 4-րդ եռամսյակից մինչև 2010 թվականի հուլիս ամիսը ՄԱԿ–ի մանկական հիմնադրամի հետ համատեղ Երևան քաղաքում իրականացվեց «Ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը երեխաների վրա» փորձնական ծրագիրը:

Ընթացիկ տարում ուսումնասիրություններ են կատարվել Երևան քաղաքի 6 վարչական շրջաններում, հանրակրթական և հատուկ դպրոցներում, գիշերօթիկ խնամքի հաստատություններում, նախադպրոցական հիմնարկներում, առողջապահական հաստատություններում, սոցիալական ծառայության տարածքային բաժիններում, հավաքագրվել անհրաժեշտ տվյալներ իրավիճակի վերլուծության և գնահատման համար:

Իրականացվել է ծրագիր՝ ուղղված անչափահասների կողմից իրավախախտումների կանխարգելմանը, մուրացկանության և թափառաշրջիկության

երևույթի նվազեցմանը, երեխաների նկատմամբ բռնության, թրաֆիքինգի դեպքերի բացահայտմանը:

Հետևողական աշխատանք է տարվել մանկատներում տեղավորված երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու կամ որդեգրության և խնամատարության հանձնելու համար՝ ապահովելով ընտանիքում նրանց գտնվելու առաջնայնությունը և մանկատների բեռնաթափման ռազմավարական խնդրի աստիճանական լուծումը:

Իրականացվում է դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության խնդիրների համալիր լուծման նպատակով ներդրված տեղեկատվական համակարգի շահագործման ծրագիրը՝ համացանց են մուտքագրվում այդ խմբի երեխաների մանրամասն տվյալները:

Ի հայտ են բերվել Երևան քաղաքում բնակվող, ծննդյան վկայաններ չունեցող երեխաները և ձեռնարկված միջոցառումների շնորհիվ լուծվել են որոշակի թվով երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերման կամ վերականգնման խնդիրները:

## Հիմնախնդիրներ

- *Երեխային մատուցվող ծառայությունների ապակենտրոնացում և համայնքների առաջնային ներգրավման սկզբունքի կիրառում՝ կարևորելով համայնքների դերը երեխայի հիմնահարցերի լուծման, ծառայությունների մատչելիության և հասցեականության ապահովման գործում:*
- *Մանկատների և հատուկ դպրոցների բեռնաթափում՝ մանկատան սաներին կենսաբանական ընտանիք, որդեգրման կամ խնամատարության հանձնելու, իսկ հատուկ դպրոցների սովորողներին ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներ ընդգրկելու միջոցով:*
- *Անչափահասների շրջանում իրավախախտումների, թափառաշրջիկության և մուրացկանության երևույթի նվազեցում, կանխարգելում, այդ գործում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության, հասարակական կազմակերպությունների համագործակցված աշխատանք:*
- *Կարևոր է առողջ ապրելակերպի հետ կապված իրազեկության բարձրացման խնդիրը, ինչպես դեռահասների, այնպես էլ նորաստեղծ*

*ընտանիքների, երիտասարդ ծնողների շրջանում, առկա է այդ ուղղությամբ հատուկ ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտությունը:*

- *Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների բազմամասնագիտական ծառայություններ մատուցող կառույցների, հասարակական կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների և այլ հաստատությունների կողմից իրականացվող աշխատանքների համադրում, իրավիճակի վերլուծություն:*

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

▪ Ոլորտի օրենսդրական պահանջներին համապատասխան ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում.

ա/ Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ամբողջական շտեմարանի ստեղծում, տվյալների վերլուծություն և արդյունքների հիման վրա աշխատանքի հիմնական ուղղությունների նախանշում:

բ/ Մասնագիտական աջակցության և օգնության կազմակերպում սոցիալապես անապահով ընտանիքներին, կարիքների գնահատում, ծրագրերի կազմում և իրականացում:

գ/ Մուրացիկ, թափառաշրջիկ և իրավախախտ անչափահասների հետ անհատական աշխատանքի կազմակերպում, նրանց կողմից հանցագործությունների կանխարգելման նպատակով շահագրգիռ բոլոր կառույցների համագործակցված աշխատանքի կազմակերպում:

▪ Խնամակալության և հոգաբարձության մարմինների, բուժհաստատու–թյունների, մանկատների և շահագրգիռ այլ կառույցների հետ համատեղ միջոցառումների իրականացում՝ մանկալքության դեպքերը կանխելու, մանկատներում գտնվող երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու կամ որդեգրող ու խնամատար ընտանիք հանձնելու համար:

▪ Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կառույցների հետ սեմինարների, խորհրդակցությունների, աշխատանքային հանդիպում–քննարկումների կազմակերպում:

# ՄՇԱԿՈՒՅԹ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքում գործում են 31 գրադարաններ, որոնցից 19–ը՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ: Երևանի 57 թանգարաններից 4-ը Երևանի քաղաքապետարանի ենթակայության են: Դրանք են՝ Երևան քաղաքի պատմության, Ժամանակակից արվեստի, Կարեն Դեմիրճյանի և Պատմահնագիտական թանգարանները: Երևանում գործում են 18 թատրոններ, որոնցից 3-ը գործում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ՝ Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնները:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են երաժշտական և արվեստի 25 դպրոցներ, 17 մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» և Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը և« Հայ-Արտ» ՓԲԸ-ն:

ՀՀ կառավարության 19.08.2010թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. մայիսի 29-ի հ.604-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հ.1047-Ն որոշման համաձայն «Էրեբունի պատմահնագիտական արգելոց թանգարան» ՊՈԱԿ-ն անցել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը և նախապատրաստվում է ընդունման աշխատանքները:

Հայաստանի Հանրապետությունում 2010թ. տուրիզմը ճանաչվել է տնտեսության գերակա ճյուղ:

Այդ հանգամանքից են բխում նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժնի աշխատանքային ծրագրերը: Բաժնի ծրագրերում հաշվի են առնվում նաև հրապարակված պաշտոնական տվյալները, ըստ որոնց Հայաստան այցելող զբոսաշրջիկների 80-85 %–ը հանգրվանում է մայրաքաղաքում, մայրաքաղաք են այցելում նաև ՀՀ մարզերի բազմաթիվ քաղաքացիներ, իսկ մայրաքաղաքցիների մեծ մասը, ելնելով սոցիալական հնարավորություններից, ցանկանում է հանգիստը կազմակերպել ՀՀ մարզերում:

Բաժնի գործառույթների մեջ գերակա տեղ է տրված Երևանի քաղաքապետարանի զբոսաշրջային քաղաքականության հայեցակարգի և հեռանկարային ծրագրերի մշակմանն ու կազմմանը:

Բաժինն իր ծրագրերում մեծ ուշադրություն է նվիրում օտարերկրյա և տեղացի զբոսաշրջիկներին հետաքրքրող սոցիալական, բնապահպանական, ավանդույթային, մրցութային, մշակութային, մարզական ու հետիոտն զբոսաշրջության զարգացմանն ու մայրաքաղաքում սպասարկման ոլորտի միջազգային չափորոշիչներին համապատասխանեցմանը:

Հայաստանի Հանրապետության կենդանաբանական այգին գործում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ, այն Եվրասիայի կեդանաբանական այգիների ասոցիացիայի անդամ է:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010թ. գրադարաններում անցկացվել են գրական, գրական–երաժշտական, հուշ-երեկոներ՝ նվիրված հայտնի մարդկանց, հանդիպումներ արվեստի անվանի գործիչների հետ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ:

2010թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Ա.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում կազմակերպվել են 69 գրքային ցուցահանդեսներ և տարբեր բնույթի միջոցառումներ: Հոկտեմբեր ամսին անցկացվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված գրադարանի ստեղծման 75, անվանակոչման 55 և Ավետիք Իսահակյանի ծննդյան 135 ամյակներին: Գրադարանային համակարգը «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակներում անցկացրել է գրքային ցուցահանդեսներ և բազմաբնույթ միջոցառումներ: Նույն ամսին տոնվել է նաև գրադարանավարի օրը:

2010թ. երաժշտական և արվեստի դպրոցների լավագույն սաները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային փառատոնների, ինչպիսիք են՝ «Վերածնունդ» միջազգային մրցույթը, Ա. Բաբաջանյանի պատանի դաշնակահարների, «Նոր անուններ» միջազգային, Ազգային նվագարանների և ժողովրդական երգի անհատ կատարողների հանրապետական մրցույթները, «Նռան հատիկ» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնը, Ա. Գաբրիելյանի և Ս. Ասլամազյանի անվան պատանի ջութակահարների և թավջութակահարների մրցույթ-փառատոնները, «Դելֆյան խաղեր» միջազգային մրցույթը, որտեղ շատ երեխաներ դարձել են դափնեկիրներ:

Ամանորի տոնակատարությունների շրջանակներում Հանրապետության հրապարակում դեկտեմբերի 31-ին կազմակերպվել է տոնական համերգային ծրագիր, իսկ հունվարի 1-ից 10-ը՝ մանկական միջոցառումներ:

Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կազմակերպվել է համերգ՝ համակարգի երաժշտական և արվեստի դպրոցների ուժերով Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում:

Փետրվարի 9-ին Կոմիտասի անվան պանթեոնում Վ. Տերյանի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ կազմակերպվել է հիշատակի արարողություն:

Մարտի 27-ին մեծ հանդիսությամբ նշվել է թատրոնի միջազգային օրը: «Թատրոնի միջազգային օրվա» կապակցությամբ 18 թատրոնի գործիչներ ներկացվել են պարգևատրման Երևանի քաղաքապետի ոսկե մեդալով, «Երևան զինանշան» հուշամեդալով և պատվոգրերով:

Ապրիլի 1-ին Խորեն Աբրահամյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Կոմիտասի անվան պանթեոնում կազմակերպվել է հիշատակի արարողություն:

«Մայրության և գեղեցկության տոնին» նվիրված ապրիլի 6-ին և 7-ին Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում կազմակերպվել է ընդունելություն, ինչպես նաև գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես:

Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում պատշաճ մակարդակով անցկացվել է Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրվան նվիրված արարողությունը:

«Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 65-րդ տարեդարձին նվիրված» ազգային ծրագրի շրջանակներում անց են կացվել «Աշխարհն առանց պատերազմի» կավճանկարների մրցույթը, «Հաղթական հնչյուններ» փողային նվագախմբերի փառատոն մայրաքաղաքի 5 հատվածներում: Երևան քաղաքի պատմության թանգարանում կազմակերպվել են մի շարք թեմատիկ ցուցահանդեսներ՝ «Սփյուռքը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին», «Հայրենական պատերազմը երևանյան հուշակոթողներում» և «Երևանը հայրենական մեծ պատերազմի տարիներին» խորագրերով: Հրազդանի կիրճում նշվել է Սովետական Միության երիտասարդ հերոսների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձանի վերաբացման արարողությունը:

Մայիսի 21-ին Հանրապետության հրապարակում կազմակերպվել է «Դպրոցականների վերջին զանգ» միջոցառումը:

Մայիսի 24-ից անց է կացվել Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների երաժշտական փառատոնը (2 փուլով): 2-րդ փուլում

մասնագիտական խորհրդի կողմից 1-ին փուլում ընտրված լավագույն մասնակիցները ելույթ են ունեցել 3 համերգաշարերում: Փառատոնի եզրափակիչ համերգին՝ հունիսի 23-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում ելույթ ունեցան համերգաշարերից ընտրված լավագույն աշակերտները: Լավագույն մասնակիցները և նրանց դասատուները պարգևատրվեցին Երևանի քաղաքապետի պատվոգրերով:

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ հունիսի 1-ին «Կիրովի» անվան մանկական զբոսայգում կազմակերպվել է մանկական տոնական միջոցառում:

Հունիսի 6-ին կազմակերպվել է Արամ Խաչատրյանի ծննդյան 107-րդ տարելիցին նվիրված պատանի ստեղծագործողների ամենամյա 32-րդ ստուգատես-փառատոնը:

Ազատության հրապարակի վերաբացման կապակցությամբ կազմակերպվել է մանկական միջոցառումներ վարչության ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպությունների մասնակցությամբ:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ ձեռք բերված փողային գործիքների հանդիսավոր հանձնման արարողությունը կազմակերպվել է հունիսի 28-ին «Կիրովի» անվան մանկական զբոսայգում:

Իրականացվել են դպրոց–թատրոն–քաղաքապետարան եռակողմ գեղարվեստական խորհրդի ստեղծման աշխատանքները, որի արդյունքում մայրաքաղաքի թատրոններում դպրոցականների համար իրականացվել է անվճար ներկայացումներ, դիտումներ:

Կազմակերպվել է քաղաքապետարանի մասնակցությունը «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրերին, «Ոսկե Ծիրան» մրցանակաբաշխությանը:

2010 թվականի սեպտեմբերի 21-ին Հանրապետության հրապարակում տոնական համերգով և հրավառությամբ նշվեց ՀՀ անկախության 19-րդ տարելիցը:

Հոկտեմբերի 10-ին մեծ շուքով նշվեց «Էրեբունի Երևան» տոնակատարությունը, որի նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս սեպտեմբեր ամսից: «Ազատության» հրապարակում սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 9-ը ամենօրյա փորձեր են արվել, որի արդյունքում ընտրված լավագույն համարները մասնակցել են գլխավոր տոնին:

Զբոսաշրջիկներին մայրաքաղաքի պատմությանը, մշակույթին, մարզական առօրյային ծանոթացնելու նպատակով Երևանում տեղակայված զբոսաշրջային կազմակերպությունների հետ քննարկվել են մայրաքաղաքի զբոսաշրջային պարտադիր երթուղիները:

Սպասարկման ոլորտի բարելավման և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման նպատակով կազմակերպվել են քննարկումներ մայրաքաղաքում գործող համապատասխան մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Կատարվել են նախապատրաստական աշխատանքներ 2011 թվականի ընթացքում մայրաքաղաքում ավանդական տոների կազմակերպման ուղղությամբ:

Բաժնի աշխատակիցները բազմիցս մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված միջոցառումներին, խորհրդակցություններին ու քննարկումներին:

Անցկացվել են զբոսաշրջության վերաբերյալ քննարկումներ տուրիզմի ինստիտուտի ռեկտորի հետ:

Կազմակերպվել է բազմաթիվ զբոսաշրջիկների մասնակիցությունը «Էրեբունի–Երևան» միջոցառմանը:

# Հիմնախնդիրներ

➢ *Առաջին անհրաժեշտության խնդիր է դարձել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը:*

➢ *Գրադարաններում դեռևս ցածր է ժամանակակից ընթերցողական պահանջարկին համապատասխան համալրվող գրականության, էլեկտրոնային սպասարկմանն անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերումների քանակը: Անհրաժեշտ է ֆինանսական միջոցներն ուղղել գրադարանների նյութատեխնիկական հենքի վերազինման, արդի ժամանակաշրջանի գրականության համալրման, գրադարանային հավաքածուների պահպանման գործընթացներին:*

➢ *Թանգարանների կարևորագույն հիմնախնդիրներն առնչվում են թանգարաններում պահվող մշակութային ժառանգության պահպանությանը և հանրության պատշաճ ներկայացմանը, ցուցասրահներում և ֆոնդապահոցներում կայուն ջերմաստիճանի ապահովմանը, թանգարանային նմուշների անվտանգության ապահովմանը:*

➢ *1980-ական թվականներից սկսած երաժշտական և արվեստի դպրոցների շենքերը չեն վերանորոգվել, որոշ դպրոցներում առկա են ջեռուցման համակարգերի ներդրման խնդիրներ:*

- *Առկա խնդիր է դարձել մշակույթի օջախների շենքային պայմանների բարելավումը, հիմնանորոգումը և ընթացիկ վերանորոգումը, ինչպես նաև ջեռուցման համակարգերի ներդրումը:*
- *Կենդանաբանական այգու հիմնական խնդիրներից են գիշատիչների կացարանների կառուցումը, փղանոցի տարածքի ընդլայնումը, գետաձիու երկրորդ ջրավազանի և ձմեռանոց–կացարանի կառուցումը, գիշատիչ թռչունների ազատավանդակի կառուցումը, ջրավազանների մաքրման համակարգերի ներդրումը:*
- *մայրաքաղաքում տեղեկատվական համակարգի հիմնումը,*
- *փոքր կենտրոնում տրանսպորտային երթուղիների, զվարճանքի կենտրոնների, հատակագծի և այլնի վերաբերյալ տեղեկատվական բազմալեզու սարքավորումների տեղադրումը,*
- *Երևան քաղաքում զբոսաշրջային ֆորումների կազմակերպումը՝ Երևան քաղաքի հետ համագործակցող բոլոր քաղաքներում գործող շահագրգիռ զբոսաշրջային կազմակերպությունների մասնակցությամբ,*
- *զբոսաշրջիկների առաջարկներին և գանգատներին օպերատիվ կերպով արձագանքելու նպատակով քաղաքապետարանում զբոսաշրջային «թեժ» գծի ստեղծումը,*
- *միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին Երևան քաղաքի մասնակցությունը,*
- *մայրաքաղաքի տրանսպորտի աշխատանքի, հյուրանոցների, ռեստորանների և ընդհանրապես սպասարկման ու զվարճանքի ոլորտի բարելավումը, որի համար առաջարկվում է սահմանել Երևանի քաղաքապետի մրցանակներ՝ «Տրանսպորտային լավագույն երթուղի», «Լավագույն տաքսի ծառայություն», «Լավագույն հյուրանոց», «Լավագույն ռեստորան», «Լավագույն տուրոպերատոր» և այլն:*

## 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումները

2011 թվականին նախատեսվում է ջեռուցման համակարգեր տեղադրել ջեռուցման խնդիր ունեցող երաժշտական և արվեստի դպրոցներում,

գրադարաններում, մշակույթի կենտրոններում, տներում և մշակույթի այլ օջախներում:

Երևանի զարգացման 2010-2013 թվականների ծրագրով 2011 թվականի համար նախատեսվում է կազմակերպել համերգներ, մրցույթներ, փառատոններ երաժշտական և արվեստի դպրոցներում, մասնակցություն Ա. Գաբրիելյանի և Ս. Ասլամազյանի անվան մրցույթ–փառատոներին: Նախատեսվում է Ա. Սպենդիարյանի անվան պատանի երաժիշտ–կատարողների հանրապետական երրորդ մրցույթ–փառատոնի կազմակերպում մայիսի 21-ից մինչև 31-ը:

2011 թվականի ընթացքում նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ նվիրված Ամանորին, Բանակի օրվան, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, «Սուրբ զատիկ» տոնին, «Վերջին զանգին», Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ–փառատոնին, ՀՀ Անկախության օրվան, «Էրեբունի–Երևան» տոնակատարությանը, պարարվեստի փառատոնին, «Ուսուցչի օրվան», «Գրադարանավարի օրվան» և հիշարժան այլ տարեթվերին:

- Երևանի ազգաբնակչության սոցիալական հանգստի կազմակերպում ՀՀ մարզերում:
- Երևանում գործող թատերական ու երաժշտական խմբերի հյուրախաղերի կազմակերպում ՀՀ մարզերում և ՀՀ մարզերում գործող թատերական ու երաժշտական խմբերի հյուրախաղերի կազմակերպում մայրաքաղաքում:
- Երևանում գործող մարզական խմբերի ընկերական հանդիպումների կազմակերպում ՀՀ մարզերում և ՀՀ մարզերում գործող մարզական խմբերի ընկերական հանդիպումների կազմակերպում մայրաքաղաքում:
- ՀՀ գյուղական համայնքներում գտնվող լքված տներում երևանցիների ամառային հանգստի կազմակերպում, ինչը մեծ խթան է սոցիալական, բնապահպանական ու ավանդույթային զբոսաշրջության զարգացմանը:
- Երևան քաղաքում զբոսաշրջային պարտադիր երթուղիների մշակում՝ կարևորագույն հուշարձանների և տեսարժան վայրերի ընդգրկմամբ:
- Տուրօպերատորների կողմից մայրաքաղաքում իրականացվող զբոսաշրջային երթուղիների ուսումնասիրություն և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում:

- Ամսեկան մեկ անգամ մայրաքաղաքի զբոսաշրջային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ թռուցքաժողովի կազմակերպում:
- Երևան քաղաքում ազգային ավանդական տոների /Տրընդեզ, Համբարձում, Վարդավառ, Նավասարդ/ որպես համաքաղաքային միջոցառում կազմակերպում:
- Երիտասարդության համար բնապահպանական, առողջարարական և ճանաչողական հետիոտն արշավների կազմակերպում:
- «Հրազդանի կիրճի վրա մայրաքաղաքցիների ուշադրությունը բևեռելու նպատակով ձկնորսական զբոսաշրջային մրցույթի կազմակերպում:
- Տուրիզմի միջազգային օրվան նվիրված համաքաղաքային միջոցառման կազմակերպում սեպտեմբերի 26-ին:
- Տուրիզմի միջազգային օրվան նվիրված Երևանի քաղաքապետի մրցանակների հանձնման հանդիսավոր արարողության կազմակերպում:
- Օտարերկրյա զբոսաշրջիկների մասնակցության ապահովվում «Էրեբունի–Երևան» ամենամյա տոնակատարությանը /2010թ. բաժնի կողմից այդ ուղղությամբ կատարվեցին լայնածավալ աշխատանքներ/:
- Համագործակցություն պետական և մասնավոր կազմակերպությունների հետ՝ սպասարկման ոլորտի բարելաման և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման համար:
- Համագործակցության նպատակով Երևանի քույր և եղբայրացած քաղաքների, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների համապատասխան ստորաբաժանումների մասնագետների հետ հաճախակի հանդիպումների կազմակերպում:

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

## Վիճակի բնութագիր

Երևան քաղաքում տեղակայված են 4 մարզական միություններ, 12 մարզական ակումբներ, 14 լողավազաններ, 11 ֆուտբոլի մարզադաշտեր, 24 թենիսի կորտեր, 3 հրաձգարաններ, 5 ստադիոններ, 37 մարզադահլիճներ, 1 նետաձգարան, 1 աթլետիկական մանեժ, 1 հեծանվահրապարակ, 3 թիավարության ու վինդսերֆինգի ջրամբարներ, 2 մարզամշակութային կենտրոններ, հավաքական թիմերի ուսումնամարզական 1 կենտրոն, 1 ձիարշավարան, 30 բազմագործառութային փոքր դաշտեր, շուրջ 120 պարզ տիպի մարզահրապարակներ և 52 մարզադպրոցներ (տարբեր գերատեսչությունների ենթակայությամբ)։

Երևան քաղաքում նշանակալի մարզական կառույցներ են «Մարզահամերգային» համալիրը, «Հրազդան» և «Հանրապետական» մարզադաշտերը, Տ. Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տունը։ Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների ենթակայությամբ գործում են 25 մարզադպրոցներ ու 2 մարզամշակութային կենտրոններ (Նուբարաշեն և Նոր Նորք վարչական շրջաններում)։

Հանրապետությունում գործում են մարզական ֆեդերացիաներ գրեթե բոլոր մարզաձևերից, սակայն որպես ինքնուրույն կազմակերպություններ Երևանում գործում են աթլետիկայի և վոլեյբոլի Երևան քաղաքի ֆեդերացիաները։

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

Յուրաքանչյուր տարի անցկացվում են 35 մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, որոնցից ՀՀ պետական բյուջեից Երևանի քաղաքապետարանի համաքաղաքային նշանակության ծախսերով ֆինանսավորվել են 20 մարզաձևերի առաջնություններ, 6 զանգվածային միջոցառումներ և 1 մարզական բակային փառատոն։

Կկազմակերպվի «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոն։

ՀՀ նախագահի մրցանակի համար կիրականացվեն «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական վարչական շրջան», «Լավագույն մարզական բակ», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզամշակութային միջոցառում, Հանրակրթական դպրոցների շախմատային օլիմպիադա, ՀՀ Անկախությանը նվիրված դպրոցականների 19-րդ մարզական խաղեր, Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր:

## Հիմնախնդիրները

- *Մայրաքաղաքի ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության մակարդակը պատշաճ մակարդակի չէ:*
- *Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժման հետ կապերի բացակայությունը:*
- *Մեթոդական ցուցումների, չափորոշիչների և համապատասխան ֆինանսավորման բացակայության հետևանքով մարզական ոլորտի մայրաքաղաքում միասնական կառավարման բացակայությունը:*
- *Լայն զանգվածների համար մատչելի մարզաբազաների (աթլետիկական վազքուղիներ, լողավազաններ, մարզադահլիճներ և այլն) բացակայությունը:*
- *Մարզադպրոցների մի մասի մարզաբազա չունենալու ու մյուս մասի մարզաբազաների անմխիթար վիճակում գտնվելու հանգամանքը:*

## 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2011 թվականին նախատեսվում է «Երևանի Սպորտ կոմիտե» ՀՈԱԿ–ի կազմում՝ ներգրավված 25 մարզադպրոցներին, մարզաբազանների տրամադրում և վերանորոգում:

Առաջնորդվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով՝ նախատեսվում է Երևանի բակերում պարզ տիպի խաղահրապարակների (յուրաքանչյուր 50 շենքերի համար 1 խաղահրապարակ կառուցելու ծրագիրը ընդգրկված է Երևանի գլխավոր հատակագծում) և արհեստական խոտածածկով մարզադաշտերի կառուցում:

2011 թվականի ընթացքում կիրականացվեն «Հրազդան» փակ մարզադահլիճի (Այասի փող. 1) նորոգում, ժամանակակից մարզագույքով վերազինում և մարզական միջոցառումների կենտրոնի վերածում:

Համայնքի 25 մարզադպրոցներից 5-ի ժամանակակից մարզագույքով կապահովվեն և կվերածվեն «Ավագ մարզադպրոց» ՀՈԱԿ–ների («Խաղային», «Մենապայքարային», «Զանգվածային», «Մարզատրամաբանական» և «Արևելյան» մարզաձևերի ավագ դպրոցներ), համագործակցելով ՀՀ հավաքականների կենտրոնի հետ:

Նախատեսվում է «Հրազդան» մարզադաշտից Հաղթանակի կամուրջն ընկած հատվածում խաղային մարզաձևերի խաղահրապարակներով, թիավարության ջրուղով, ժայռամագլցման ուղով և այլ մարզաառողջարարական համալիր կենտրոնի կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում (ծրագիրն ընդգրկված է Երևանի գլխավոր հատակագծում):

Կկազմակերպվեն Հանրապետական և միջազգային մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով երևանցի մարզիկների և Երևանի թիմերի համար բարձրակարգ մարզաբազաներում ուսումնամարզական հավաքներ:

«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնը կվերածվի միջազգայինի՝ համագործակցելով Երևանի քույր քաղաքների հետ:

# Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

## Վիճակի բնութագիր

Մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունեն հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները: ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված ՀԿ–ների 50 տոկոսը երիտասարդական է, կամ զբաղվում է երիտասարդության խնդիրներով, դրանց մեծամասնությունը գործում է Երևան քաղաքում: Երևանում գործում են մի քանի տասնյակ երիտասարդական հասարակական կազմակերպություններ (ՀԿ):

Երևան քաղաքում երիտասարդական դաշտը բաժանված է ուսումնական հաստատությունների (բուհեր) ուսանողական խորհուրդների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների միջև:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանում գործում են 12 խոշոր պետական և շուրջ 45 ոչ պետական բուհեր, ունենք նույն քանակությամբ ուսանողական խորհուրդներ: Գրեթե բոլոր քաղաքական ուժերը ունեն իրենց երիտասարդական թևերը:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010 թվականին «Էրեբունի–Երևան 2792» տոնակատարությունների շրջանակներում համատեղ աշխատանքներ են իրականացվել ուսանողական խորհուրդների հետ:

«Բազե 2010» երիտասարդական հավաքին «Երևան» ջոկատն ապահովել է իր մասնակցությունը և ցուցաբերել բարձր արդյունքներ:

## Հիմնախնդիրներ

- *Բավարար համագործակցություն չի ծավալվել մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ:*
- *Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության, ազգային և համամարդկային մշակույթի նկատմամբ բարձրաճաշակ պատկերացումների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները պատշաճ մակարդակի չեն:*
- *Երևանի վարչական շրջաններում չկան երիտասարդական կենտրոններ:*

## 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2011 թվականին նախատեսվում է ստեղծել երիտասարդների իրավաքաղաքական իրազեկվածության, աշխատանքային, սոցիալական խնդիրների ուսումնասիրման, առաջարկությունների, ծրագրերի քննարկման, տեղեկատվության

տրամադրման նպատակով Երևանի բուհերի ուսանողական խորհուրդների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբեր:

Երևանի վարչական շրջաններում երիտասարդական կենտրոնների հիմնում:

Հաշմանդամ երիտասարդներին մայրաքաղաքի երիտասարդական կյանքում ընդգրկելու նպատակով նախատեսվում է սերտ համագործակցություն ծավալել հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ:

2011 թվականի կկազմակերպվեն մայրաքաղաքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումներ, երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին իրազեկության ապահովմանը և կանխարգելմանն ուղղված զանգվածային մարզական, մշակութային միջոցառումներ, քարոզարշավներ, կլոր սեղաններ:

2011 թվականի ընթացքում կկազմակերպվեն տաղանդավոր երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսներ, համերգներ, Երևանի, քույր քաղաքների և Հայաստանի Հանրապետության այլ համայնքների երիտասարդների համատեղ մարզամշակութային միջոցառումներ:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Վիճակի բնութագիր

Ներկայումս Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 30 քաղաքների հետ և անդամակցում 5 միջազգային կազմակերպությունների՝ ունենալով լայն պայմանագրային դաշտ և համատեղ իրականացվող ծրագրեր: Վերջին շրջանում ծավալվող համագործակցությունն ամրագրվում է 3-4 տարվա կտրվածքով: Երևան քաղաքը եռամյա կամ քառամյա ծրագրային համագործակցություն է իրականացնում հատկապես Մոսկվայի, Լիոնի, Դոնի Ռոստովի, Սանկտ-Պետերբուրգի և այլ քաղաքների հետ: Կարելի է նշել, մասնավորապես, Մոսկվայի կառավարության կողմից իրականացրած և իրականացվող բազմաթիվ ծրագրեր և նախագծեր՝ Մոսկվայի տան բացումը Երևանում, Կենտրոն վարչական շրջանում «Մոսկվայի» և Ավան վարչական շրջանում «Հյուսիսային ճառագայթ» պուրակների բացումը, լայնածավալ շինարարական և ներդրումային նախագծերը, կրթական, մշակութային և սպորտային միջոցառումները, ֆինանսական և մեթոդական օգնությունը միջնակարգ և բարձրագույն կրթական հաստատություններին և այլն:

Բացի դրանից, ընդլայնվել կամ նոր գործընկերային հարաբերություններ են հաստատվել եվրոպական, ասիական և ԱՊՀ տասնյակ քաղաքների և տարբեր կազմակերպությունների հետ՝ ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների Միջազգային Ասամբլեայի, Ֆրանսախոս քաղաքների միջազգային ասոցիացիայի (AIMF), Միջազգային քաղաքային համայնքների Լուսավորում ասոցիացիայի /LUCI/, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Եվրոպական Հանձնաժողովի կողմից իրականացվող CIUDAD ծրագրի GOSPEL ենթածրագրի, Եվրոպական խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի, «Ստրասբուրգի ակումբի», Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության և այլն:

Միջազգային համագործակցության ոլորտում վերջին տարիների ընթացքում ակտիվացել են նաև երկկողմ փոխայցելությունները տարբեր ձևաչափերով: Ամենակարևորն այն է, որ միջազգային համագործակցությունը ընդլայնվել է ինչպես

բովանդակային մասով, այնպես էլ աշխարհագրությամբ, մասնավորապես՝ Սոֆիայի, Դելիի, Շիրազի, Ռիգայի, Կալինինգրադի, Սոչիի, Պլեսի-Ռոբինսոնի, Վարշավայի, Միլանի, Ստրասբուրգի, Նիցի, Բուսի Սենտ Ժորժի, Բուենոս-Այրեսի, Լոնդոնի հետ, թարմացվել՝ Կարարայի, Մոնրեալի, Մարսելի և Լիոնի հետ:

Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում մի շարք քաղաքների հետ համագործակցության պայմանագրեր կնքելու, կապեր հաստատելու ու խորացնելու, փոխայցելություններ իրականացնելու ուղղությամբ: Համագործակցությունը ընթանում է հետևյալ ոլորտներում՝ առևտրա-տնտեսական, գիտա-տեխնիկական, հումանիտար. առանձին ուշադրություն է դարձվում փորձի փոխանակմանը, ներդրումների խրախուսմանը, համատեղ քաղաքաշինական, սոցիալական, մշակութային, սպորտային ծրագրերի և միջոցառումների իրականացմանը և այլն:

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

2010թ. հունվարի 29-30-ը Մոսկվայի քաղաքապետ Յու. Լուժկովի գլխավորած պատվիրակությունը գտնվում էր Երևանում՝ երկկողմ համագործակցության հարցերը քննարկելու նպատակով: Հունվարի 29-ին կնքվեց համաձայնագիր Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև առևտրա-տնտեսական, գիտա-տեխնիկական, հումանիտար-մշակութային բնագավառներում համագործակցության մասին: Կնքվեցին նաև համագործակցության ծրագրեր Երևանի Կենտրոն վարչական շրջանի և Մոսկվայի Կենտրոնական վարչական շրջանի միջև և Երևանի Ավան վարչական շրջանի և Մոսկվայի Հյուսիսային վարչական շրջանի միջև:

Փետրվարի 17-19-ը և մարտի 24-26-ը տեղի ունեցան Լիոնի քաղաքապետարանի պատվիրակության աշխատանքային այցերը՝ Երևանում Լիոնի այգի հիմնելու մրցույթի անցկացման հետ կապված հարցերը քննարկելու նպատակով:

Փետրվարի 18-20-ը Ռիգայի քաղաքապետ Ն.Ուշակովի հրավերով Երևանի քաղաքապետ Գ.Բեգլարյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվում էր Ռիգայում՝ երկկողմ համագործակցության հարցերը քննարկելու նպատակով:

Մարտի 17-19-ը Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Սավիցկիի հրավերով Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվում էր Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի 18-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով:

Մայիսի 18-24-ը Շիրազի քաղաքապետ Մ. Էթեմադիի պաշտոնական հրավերով Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը գտնվում էր ԻԻՀ Շիրազ քաղաքում՝ Մետաքսի ճանապարհի քաղաքապետերի 5-րդ համաժողովին մասնակցելու և կանաչապատման ոլորտի ուսումնասիրման և փորձի փոխանակման նպատակով:

Երևանի քաղաքապետ Գ.Բեգլարյանի հրավերով հունիսի 29-30-ը պաշտոնական այցով Երևանում էր գտնվում Մոսկվայի կառավարությունում Մոսկվայի քաղաքապետի առաջին տեղակալ Վ.Ռեսինի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում քննարկվեցին Նորագյուղ թաղամասում քաղաքաշինական ներդրումային նախագծերի իրականացման հնարավորությունների հետ կապված և երկկողմ համագործակցության այլ հարցեր:

Սեպտեմբերի 1-3-ը Մոսկվա քաղաքի գլխավոր ճարտարապետ Ա. Կուզմինի հրավերով Երևանի քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս Դանիելյանն աշխատանքային այցով գտնվում էր Մոսկվայում՝ Երևանի Նորագյուղ թաղամասի քաղաքաշինական ծրագրի նախագծային առաջադրանքների ճշգրտման և համատեղ աշխատանքային խմբի ստեղծման հարցերը քննարկելու նպատակով:

Սեպտեմբերի 6-12-ը Երևանում էր գտնվում մոսկովյան ճարտարապետների աշխատանքային խումբը՝ Նորագյուղ թաղամասում Երևանի նոր միջազգային գործարարական կենտրոնի նախագծային առաջադրանքների հետ կապված հարցերի տեղում քննարկման նպատակով:

Սեպտեմբերի 5-12-ը Երևան էր ժամանել Կիևի Գոլոսևսկ վարչական շրջանի պատվիրակությունը՝ Երևան և Կիև քաղաքների միջև փոխհարաբերությունները գործնական հիմքերի վրա դնելու և ամրապնդելու համար: Այցի ընթացքում ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր Կիևի Գոլոսևսկ վարչական շրջանի և Երևանի Նոր Նորք վարչական շրջանի միջև:

# Հիմնախնդիրներ

- *Միջազգային և տարածաշրջանային ծրագրերի իրականացման համար ոչ բավարար ֆինանսական բազայի առկայությունը;*
- *Անհրաժեշտ խնդիր է Երևան քաղաքի պատմությանը, մշակույթին և սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող տեղեկատվության ներկայացումը և գովազդային բազայի ընդլայնումը:*
- *Կարևոր է Երևան քաղաքի՝ իբրև մշակութային խոշոր կենտրոնի ներկայացումը համաշխարհային հանրությանը;*

# 2011 թվականին նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2011 թվականի ընթացքում արտաքին կապերի ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ այց Շիրազ, որտեղ նախատեսվում է երկկողմ համագործակցության հաստատում և պայմանագրի ստորագրում:

Նախատեսվում է այց Մոսկվա՝ երկկողմ համագործակցության զարգացման, համատեղ ծրագրերի իրականացման, ինչպես նաև համագործակցության ծրագրով կատարված աշխատանքների արդյունքների ամփոփման համար:

Կիրականացվի այց Սպահան՝ երկկողմ համագործակցության զարգացման նպատակով: Կա կնքված պայմանագիր, սակայն անհրաժեշտ է գործնականում ակտիվացնել համագործակցությունը և համատեղ ծրագրերը:

Նախատեսվում է Լիոնի պատվիրակության այցը Երևան՝ համատեղ ծրագրերի զարգացման և ընդլայնման համար, նախկինում ձեռքբերված պայմանավորվածությունների շուրջ բանակցությունների նպատակով:

Նախատեսվում է Թեհրանի քաղաքապետի այցը Երևան՝ երկկողմ համագործակցության հաստատման և համապատասխան պայմանագրի ստորագրման համար, այնուհետև պատասխան այց Թեհրան:

Սանկտ-Պետերբուրգ և Դոնի Ռոստով նախատեսված այցերը կնպաստեն երկկողմ համագործակցության զարգացմանը, համատեղ ծրագրերի իրականացմանը:

Կիրականցվի այց Կիև, Կրասնոդար, Օդեսա, Վոլգոգրադ, Մինսկ, Թբիլիսի, Օրենբուրգ, Խարկով, Կալինինգրադ, Քիշնև, Աստանա, որտեղ Երևանի

քաղաքապետարանի պատվիրակությունը կմասնակցի այդ քաղաքներում քաղաքի օրվան նվիրված տոնակատարություններին:

Երևան քաղաքի օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում Երևանի քույր և գործընկեր քաղաքների պատվիրակությունների կմասնակցեն այդ տոնակատարությանը:

Կիրականացվի այց Լիոն՝ երկկողմ համատեղ ծրագրերի զարգացման և ընդլայնման, ձեռք բերված պայմանավորվածությունների շուրջ բանակցությունների և հետագա անելիքների ճշգրտման համար:

LUCI հավաքներ և AIMF նստաշրջաններ, որի շրջանակներում կքննարկվեն համապատասխան ասոցիացիաների ընդհանուր հետաքրքրություն ունեցող ծրագրերը:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

## Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ներդրողների կողմից իրականացվող ծրագրեր

**1.Ասիական զարգացման բանկի կայուն քաղաքային տրանսպորտի ծրագիր։**

ՀՀ վարչապետի ստեղծած խումբը բանակցություններ է վարում բանկի հետ վարկային գծի առաջին մասնաբաժնի շուրջ, որը ներառում է «Երիտասարդական» կայարանի նոր մուտքի շինարարությունը։

Հայաստանի Հանրապետության կողմից ծրագրի համաֆինանսավորման հարցը կարգավորելուց հետո ծրագիրը 2011թ. կդրվի բանկի տնօրեններիխորհրդի հաստատմանը։ Ծրագրի 2-րդ մասնաբաժնի վերաբերյալ խորհրդատվական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են։

**2. Եվրոպական բանկերի և Եվրամիության մետրոյի վերականգման ծրագիր։**

Ծրագրի 15 մլն եվրոյից 5 մլն եվրոն դրամաշնորհ է, որը տրամադրելու է Եվրամիությունը։

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի 5 մլն եվրո վարկը ստորագրված է և ակտիվացել է։ Հայտարարված է մրցույթ տեխնիկական գնացքի և սայլակների ձեռք բերման համար։

ԵԻԲ – 5 մլն եվրո վարկի պայմանագիրը նույնպես ստորագրված է։ Վավերացված չէ ՀՀ Ազգային Ժողովի կողմից։

Խորհրդատուների հետ ներկայումս քննարկվում է մետրոյի սուբսիդավորման (ծառայությունների մատուցման) պայմանագրի նախագիծը, որը վարկային պայմանագրի պայման է։

Եվրամիությունը, բանկերի հետ համատեղ, պատրաստ է մետրոյի 2-րդ տրանշի՝ ևս 15 մլն եվրո ծրագրի (դրենաժային թունել) ֆինանսավորմանը։ Սկսվել են ծրագրի իրագործելիության ուսումնասիրությունները։

**3. Ճապոնական «Շիմիձու» ընկերության Նուբարաշենի աղբավայրում բիոգազերի հավաքման և այրման ծրագիր:**

Այս ծրագիրը գործում է 2009թ. հոկտեմբեր ամսից: 2009-2010թթ. մարտ ժամանակահատվածում հավաքվել և այրվել է 12022 տոննա $CO_2$ գազեր:

**4. Համաշխարհային բանկի քաղաքային կոշտ թափոնների կառավարման ծրագիր:**

Ներկա փուլում բանկի խորհրդատվական աջակցությամբ իրականացվում են ոլորտի կառավարման օպերատորի միջազգային մրցույթի փաթեթի նախապատրաստման աշխատանքներ: Ըստ ժամանակացույցի մրցույթ կհայտարարվի 2011թ.:

**5. Եվրոխորհրդի էներգախնայողության ծրագիր:**

Երևանի քաղաքապետարանը ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ բնապահպանության նախարարության հետ քննարկում է Եվրոպական քաղաքների Համաձայնագրին միանալու նպատակահարմարության հարցը:

**6. Ավտոկայանատեղիների ծրագիր:**

Բանակցություններ են տարվում Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի

# ՀՀ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

## Առողջապահության նախարարություն

2010 թվականի հունվարի 1-ից Երևանի ԱԱՊ (առողջության առաջնային պահպանություն) ծառայություններ մատուցող բոլոր բուժհաստատություններում գործարկված բնակչության այցերի հաշվառման նոր ձևի և դրանով հավաքվող տվյալների վերլուծության ու ԱԱՊ բժիշկների գործունեության ցուցանիշների հիման վրա 2011 թվականին իրականացվելու է կատարողականի վրա հիմնված խրախուսական ֆինանսավորում:

2010 թվականին Երևանի բոլոր պոլիկլինիկաներում ներդրվել է որակի բարելավման 4 գործիք: 2011 թվականին ներդրված գործիքների հետևողական կիրառումը պիտի շարունակվի:

Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում 2011-2013թթ. ընթացքում նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության հետ համատեղ իրականացնել մանկաբարձագինեկոլոգիական ամբուլատոր պոլիկլինիկական բուժօգնության իրավիճակի և կարիքների գնահատում, հղիության զապգածման պատմագրի ձևանմուշի և վարման չափորոշիչների մշակում, կրծքով կերակրման ռազմավարության ներդրման աշխատանքների ընդլայնում և այլն: Այս ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել մի շարք գիտական աշխատանքներ:

## Կրթության և գիտության նախարարություն

2010/2011 ուս. տարում ավագ դպրոցների թիվը Երևան քաղաքում հասել է 31-ի: Ծրագրերի սկզբունքներին համապատասխան՝ լրամշակվել են ավագ դպրոցի առարկայական ծրագրերն ու չափորոշիչները: 12-ամյա կրթակարգի ներդրմանը համահունչ՝ Երևան քաղաքում շարունակաբար իրականացվելու են ծրագրեր՝

ուսուցիչների, գնահատման նոր համակարգի և ուսուցման նոր մեթոդների ուղղությամբ:

2011 թվականին կիրականացվեն միջոցառումներ՝ լավագույն մանկավարժների խրախուսման ուղղությամբ: Կազմակերպվելու են ամենամյա՝ «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթները:

Հայաստանի աշխատաշուկայի պահանջներից ելնելով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվել և հաստատվել է 61 պետական կրթական չափորոշիչ, որոնցից 22-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) մասնագիտությունների գծով: 2010/2011 ուսումնական տարվանից այդ չափորոշիչները ներդրվել են ուսումնական հաստատություններում:

2011 թվականին ՀՀ պետական բյուջեում ևս նախատեսված են հատկացումներ շենքերի և կառույցների վերանորոգման աշխատանքների իրականացման, ԵՄ տեխնիկական պահանջներին համապատասխան գույքի ձեռքբերման, սարքավորումների, նոր տեխնիկայով զինված լաբորատորիաների ստեղծման համար: Ծրագրով կշարունակվեն նաև վերապատրաստման դասընթացները, այդ թվում՝ Երևան քաղաքի բոլոր ՄԿՈՒ հաստատություններում:

Մշակվել է «Հայստանի որակավորումների ազգային շրջանակի» նախագիծը. 2010/2011 ուսումնական տարվանից ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում (հետազոտողի կրթական ծրագրով) ներդրվել է կրեդիտային համակարգ: Հաստատվել է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի մասին» ուղեցույցը:

## Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

Սպորտի բնագավառում 2011 թվականին անցկացվելու են մի շարք մրցաշարեր և միջոցառումներ՝

1. ՀՀ նախագահի մրցանակի համար՝

- «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ՝ հունիսի 1-ից 30–ը
- «Լավագույն մարզական բակ» ստուգատեսը՝ հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներ

2. «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր»՝ սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներ

3. «Սպորտլանդիա–2011» մարզական միջոցառում նախադպրոցական հիմնարկների միջև՝ մարտ–մայիս ամիսներ

4. ՀՀ մանկատների և գիշերօթիկ դպրոցների միջև մարզական խաղեր՝ ապրիլ–մայիս

5. Համաշխարհային խաղեր՝ օգոստոսի 16-27–ը

6. «Համաշխարհային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով՝

- Խուլերի Եվրոպայի ըմբշամարտի առաջնություն՝ հոկտեմբերի 10-15-ը
- Խուլերի շախմատի ՀՀ առաջնություն՝ ապրիլ ամիս
- Խուլերի սեղանի թենիսի ՀՀ առաջնություն ՝ օգոստոս ամիս
- Ազատ ոճի և հունա–հռոմեական ըմբշամարտի ՀՀ առաջնություն՝ նոյեմբեր ամիս
- Հայաստանի կույրերի շախմատի տղամարդկանց հանրապետական անհատական առաջնություն՝ օգոստոս ամիս
- «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության կողմից՝ «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ»՝ ապրիլ ամսին
- Հայաստանի ազգային պարօլիմպիկ կոմիտեի կողմից՝ հաշմանդամների մարզական փառատոն՝ հունիսի 6-8-ը

7. 2011 թվականին հունիս ամսին Երևանում նախատեսվում է անցկացնել թաեքվոնդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնություն, օգոստոս ամսին՝ համահայկական խաղեր և բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդների առաջնություն։ Անցկացվելու են հունա–հռոմեական ըմբշամարտից միջազգային մրցաշարեր՝ նվիրված Զորավար Անդրանիկին, մարշալ Բաղրամյանին, սպորտային մարմնամարզությունից՝ «Ալբերտ Ազարյանի գավաթ» միջազգային մրցաշար և տարբեր մարզաձևերից 63 ՀՀ առաջնություններ և 30 ուսումնամարզական հավաքներ։

8. Համաձայն ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրության 4-րդ կետի՝ Երևան քաղաքում իրականացվող երիտասարդական քաղաքականության շրջանակներում աշխատանքներ իրականացնելու և համապատասխան հաշվետվություն և առաջարկություններ մշակելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկված է նաև խորհրդի անդամ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Է. Թումանյանը: Աշխատանքային խմբի կողմից համապատասխան առաջարկությունների ներկայացումից հետո դրանք կներառվեն երիտասարդական քաղաքականության ոլորտում Երևան քաղաքում իրականացվող ծրագրերի մեջ:

9. Միևնույն ժամանակ 2011 թվականին կշարունակվի գործել դրամաշնորհային ծրագրերի ներկայացման և գնահատման առցանց համակարգը, ինչպես նաև կիրականացվի «Երիտասարդների գիտատեխնիկական և գիտահետազոտական նախագծերի ամենամյա մրցույթ» ծրագիրը:

## Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտին առնչվող 2010 թվականի թվականի, ինչպես նաև 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ներառված բոլոր ծրագրերը համապետական բնույթ ունեն և իրականացվում են հանրապետության ողջ տարածքում: Դրանց քաղաքականությունը կանխորոշվում է ՀՀ տկառավարության (2008-2012թթ.) ծրագրով, Կայուն զարգացման ծրագրով և դրանք ՀՀ կառավարություն են ներկայացվում ամբողջական (ամբողջ հանրապետության համար):

Սոցիալական աջակցության բնագավառի ծրագրերը պետական նպաստներն են և նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդի դիմաց տրվող փոխհատուցումն է: Երևանում դրանք ամբողջությամբ ֆինանսավորվում են ՀՀ

պետական բյուջեի միջոցներով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Երևանի զարգացման 2010 թվականի ծրագրում ընդգրկված միջոցառումների շրջանակներում իրականացվել են համապետական ծրագրեր՝ կապված ընտանեկան նպաստի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, երեխայի ծննդյան միանվագ նպաստի, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման հետ:

Մշակույթի նախարարություն

2011 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները

ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպություններում տոների և հիշատակի օրերի նվիրված միջոցառումների կազմակերպում, այդ թվում ՝ Բանակի օր, Մայրենի լեզվի օր, Կանանց տոն, Մայրության և գեղեցկության տոն, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Հանրապետության օր, Երեխաների իրավունքների պաշտպանության օր, Սահմանադրության օր, Գիտելիքի և դպրության օր, Անկախության տոն, Թարգմանչաց տոն, Երկրաշարժի զոհերի հիշատակի օր:

Մշակութային ժառանգության ոլորտի շրջանակներում՝ Մայրենի լեզվի օր, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Մանկապատանեկան գրքի միջազգային օր, գիրք նվիրաբերելու օր (Հ. Թումանյանի ծննդյան կապակցությամբ), ազգային գրադարանային շաբաթ, Գրքի և հեղինակային իրավունքի պաշտպանության օր, Գիտելիքի և դպրության օր, Երաժշտության միջազգային օր, Գրադարանավարի օր, Դպրոցական գրադարանների միջազգային օր:

Թանգարանների և հուշարձանների հետ կապված նախատեսվում է իրականացնել միջոցառումներ նվիրված թանգարանների միջազգային օրվան , Եվրոպական ժառանգության օրերին ու Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան:

Ոչ նյութական մշակութային ժառանգության շրջանակներում նախատեսվում է նշել «Էպոսի օր», բանասացների գրական և բարբառային կատարումների

փառատոնի կազմակերպում (Հ. Թումանյանի թանգարան), լարախաղացների հանրապետական փառատոնի կազմակերպում, խաչքարագործության նվիրված միջազգային կոնֆերանս:

Արվեստի ոլորտում նախատեսվում է թատերական հետևյալ փառատոնները՝ «Արմմոնո», «Հայֆեստ» և Շեքսպիրյան միջազգային փառատոնները, «Թատրոն X» հանրապետական թատերական փառատոն՝ թատրոնի միջազգային օրվան նվիրված թատերական շաբաթ, երիտասարդ ռեժիսուրայի թատերական փառատոն: Երաժշտական հետևյալ փառատոններն ու մրցույթները՝ Ա. Խաչատրյանի անվան միջազգային մրցույթ, «Ազգային պատկերասրահ» երաժշտական փառատոն, «XXI-ի հեռանկարներ» միջազգային դասական երաժշտական փառատոն, Երևանյան փառատոն նվիրված Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադրման 85 ամյակին, «Avant-Garde Folk Musik» էթնո–ջազ փառատոն, Թալալյան եղբայրների անվան ալտի և թավջութակի փառատոն, Սայաթ–Նովային նվիրված համերգաշար Երևանում և Թբիլիսիում, «Դեբյուտ» երիտասարդ ստեղծագործողների ստուգատես, Մեներգիչների հանրապետական մրցույթ նվիրված Պավել Լիսիցյանի 100 և Տաթևիկ Սազանդարյանի 95 ամյակներին, փողային նվագարանների հանրապետական մրցույթ:

Տարբեր միջոցառումներ են նախատեսվում իրականացնել նաև պարարվեստի, կերպարվեստի, կինոարվեստի, գրահրատարակչության և հեղինակային իրավունքի ոլորտներում, ինչպես նաև մանկապատանեկան բազմաթիվ միջոցառումներ:

## Սփյուռքի նախարարություն

2011 թվականին նախատեսվում է հետևյալ միջոցառումները.

- Երևան քաղաքի Օղակաձև զբոսայգու 4-րդ հատվածում նախատեսվում է հիմնել «Հայ բարերարների ճեմուղի», որն իրենից ներկայացնելու է հայ բարերարի հավաքական կերպարը խորհրդանշող հիմնական հուշակոթող, ինչպես նաև առանձին բարերարներին նվիրված՝ իրար նմանատիպ 6 հուշակոթողներ, որոնք չափերով ավելի փոքր են, քան հիմնական հուշակոթողը:

▪ Նախատեսվում է սկսել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված աշխարհի տարբեր երկրներում հուշակոթողների մանրակերտերի պատրաստումն ու տեղադրումը Ծիծեռնակաբերդի համալիրում՝ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի հարևանությամբ:

## Քաղաքաշինության նախարարություն

2011 թվականին Երևան քաղաքում նախատեսվում է իրականացնել.

- Մշակութային հետևյալ օբյեկտների հիմնանորագման աշխատանքներ՝ Հայաստանի ազգային գրադարան, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ալ. Սպենդիարյանի տուն–թանգարան, Պարարվեստի պետական քոլեջ:
- Կրթական հետյալ օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ՝ թվով 24 դպրոցներում ՝ հ.հ. 174, 100, 99, 108, 160, 189, 158, 79, 185, 196, 53, 93, 132, 11, 67, 192, 52, 87, 197, 51, 14, 96, Պետական տեխնոլոգիական քոլեջն ու «Երևանի հենաշարժային համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ–ը:
- Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից հիմնանորոգման աշխատանքներ կիրականացվեն Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի պետական քոլեջում:
- Երևան քաղաքի հետևյալ ավագ դպրոցներում նախատեսվում է իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ՝ հ.հ. 198, 195, 29, 62, 118 և 119:
- Հատուկ կրթական օբյեկտներից հիմնանորոգման աշխատանքներ նախատեսվում են իրականացնել հ.հ. 2, 12 և 18 հատուկ դպրոցներում:
- Մարզական օբյեկտներից 2011 թվականին հիմնանորոգման աշխատանքներ նախատեսվում է իրականացնել «Տորք Անգեղ» մարզական միության շենքում:

## Բնապահպանության նախարարություն

2011 թվականին Երևան քաղաքում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական–տեղեկատվական ծառայությունների կատարում: Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգ: Թափոնների ուսումնասիրության

ծառայություններ, ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական ուսումնասիրություն: Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսների կազմակերպում, ինչպես նաև բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման ծառայություններ

## Գյուղատնտեսության նախարարություն

2010 թվականին Երևանում իրականացվել են գյուղատնտեսության ոլորտին առնչվող հետևյալ միջոցառումները՝

1. «Հայանտառ» ՊՈԱԿ–ի «Երևանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառային հողերում իրականացվել են խնամքի, ոռոգման և պահպանության աշխատանքներ: 2011 թվականին նախատեսվում է շարունակել վերը նշված աշխատանքների իրականացումը:

2. Երևան քաղաքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2010 թվականին պետական բյուջեով նախատեսված «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություն» ծրագրերի շրջանակներում 2010 թվականի հոկտեմբերի 1–ի դրությամբ կատարվել է անասնահամաճարակային կանխարգելիչ և ախտորոշիչ 19927 միջոցառում՝ 2.13 մլն դրամ ընդհանուր գումարով, կատարած աշխատանքների համար վարչական շրջանի անասնաբույժ մասնագետներին վճարվել է 3.15 մլն դրամի չափով աշխատավարձ, ինչպես նաև սննդամերքի անվտանգությանն ուղղված 173 լաբորատոր փորձաքննություն՝ 2.25 մլն դրամ ընդհանուր գումարով: Ծրագրով նախատեսված աշխատանքները շարունակվում են: Նշված ծրագրերը կշարունակվեն իրականացվել առաջիկայում և ներկայացված են 2011-2013 թթ. ՄԺԾԾ–ում:

3. Ներկայումս քննարկվում է Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի օժանդակությամբ գյուղատնտեսական շուկա ստեղծելու առաջարկը:

# ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Աջափնյակ վարչական շրջանում գործում են 16 նախադպրոցական հաստատություն (2694 երեխա, 568 աշխատող), 20 հանրակրթական դպրոց (4 ավագ, 14 հիմնական, 2 միջնակարգ, 9360 աշակերտ, 834 մանկավարժ), 3 բուհ, 1 արհեստակցական ուսումնարան, 2 մասնավոր վարժարան, 1 գիշերօթիկ կրթահամալիր, 1 արտադպրոցական հիմնարկ՝ ՄՊՍԿ, 2 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ (3 մասնաճյուղով), 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց (31 խմբակ, 397 երեխա), 4 գիտահետազոտական ինստիտուտ։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Աջափնյակ վարչական շրջանի տարածքում գործում են հանրապետական նշանակության 5 հիվանդանոց, 1 ամբուլատոր պոլիկլինիկա։

Վարչական շրջանում բնակվում են մոտ 1200 փախստականներ։

Գերմանական Կարմիր Խաչի և Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ի բարեգործական 2 ճաշարանները սպասարկում են Աջափնյակ վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին։

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Վարչական շրջանի ճանապարհային ցանցը 77,5 կմ է, մակերեսը՝ 1150 հազ. քմ։

Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված են 419 բազմաբնակարան շենքեր, որտեղ կան 302 վերելակներ։ Հիմնական վերանորոգման կարիք ունեն 46 վերելակ, իսկ ընթացիկ վերանորոգման՝ 130-ը։

Աջափնյակ վարչական շրջանում առկա են երկրորդ կարգի վնասվածության 71 շենք, երրորդ կարգի՝ 50 շենք, չորրորդ կարգի՝ 4 շենք։

Վարչական շրջանն ունի անավարտ՝ մինչև 30%-ով կառուցված, տասնյակ բնակելի շենքեր, որոնք հիմնականում տեղաբաշխված են Նորաշեն և Գ-3 թաղամասերում։

Սանմաքրման և աղբահանության մեքենայական պարկը կազմում է 28 միավոր մեքենա-սարքավորում, որոնցից շահագործման համար պիտանի են 20-ը: Մաքրման ենթակա տարածքը 73942 քմ է:

***Բնապահպանություն***

Աջափնյակ վարչական շրջանում այգիներն ու պուրակները կազմում են 61.743 քմ, սիզամարգերը՝ 3550 քմ: Ոռոգման ցանցը շուրջ 79214 գծմ է:

***Առևտուր և սպասարկում***

Աջափնյակ վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 702 փոքր և միջին օբյեկտներ: Կան 21 արդյունաբերական, 6 շինարարական, 1 տրանսպորտային, 3 գյուղատնտեսական ձեռնարկություններ: Գրանցված են մոտ 1700 արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ և անհատ ձեռներեցներ:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010 թվականին Աջափնյակ վարչական շրջանում կազմակերպվել են մի շարք կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներ՝ նվիրված տոներին և հիշատակի օրերին, անցկացվել են միջմանկապարտեզային մրցույթներ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Երևանի քաղաքապետի որոշմամբ 2010 թվականին Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 37 հասցեի 4-րդ կարգի վթարային շենքի 44 ընտանիքներ ապահովվել են նոր, ժամանակակից հարմարություններ ունեցող բնակարաններով: Այդ ընտանիքներին բնակարաններ են հատկացվել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի 14-րդ փողոցի 38/1 շենք հասցեում:

2010 թվականին վարչական շրջանի սոցիալապես անապահով 26 ընտանիքների տրվել են պետպատվերի շրջանակներում բուժսպասարկման միջնորդագրեր, 6 ընտանիքի հատկացվել է անվճար դեղորայք:

2010 թվականին Ամանորի և Սուրբ Ջատկի տոների կապակցությամբ իրականացվել են տոնական ճաշկերույթներ 2 բարեգործական ճաշարանների թվով

300 շահառուների համար: Տոնական միջոցառումների իրականացման համար ծախսվել է 1755,0 հազ. դրամ գումար:

«Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագրի շրջանակներում վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 1-4 դասարաններում սովորող թվով 600 երեխաներին հատկացվել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ: Ծրագիրն իրականացնելու համար ծախսվել է 3,0 մլն դրամ:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

«Բարեկարգ Երևան» ծրագրի շրջանակներում 2010 թվականին Աջափնյակ վարչական շրջանում իրականացվել են 10837քմ ասֆալտապատման աշխատանքներ, որի համար ծախսվել է 59475 հազ. դրամ: Փողոցներում ուղղվել և վերականգնվել են 325 գծմ երկարությամբ եզրաքարեր (2.7 մլն դրամ): Ավարտվել են Լենինգրադյան փող. հ.2 վթարային շենքի ամրացման աշխատանքները:

Աջափնյակ վարչական շրջանում նորոգվել է բազմաբնակարան 44 շենքերի տանիքներ 13664քմ մակերեսով (47268 հազ. դրամ): Բազմաբնակարան շենքերի թեք լանջավոր տանիքների վերանորոգման համար ձեռք է բերվել 7000 հատ (14000 քմ) ազբոհերձաքար 21 մլն դրամ արժողությամբ:

Նույն ծրագրի շրջանակներում տեղադրվել են թվով 7 խաղեր Արզումանյան 16/1 շենքի բակում (3 հատ), Հալաբյան 37-39 շենքերի բակում (1 հատ), Շինարարների 14-16 շենքերի բակում (1 հատ), Գ-3 թաղ. 1-ին շենքի բակում (1 հատ), 16 թաղ. 1-ին շղթայի հարակից տարածքում (1 հատ):

2010 թվականի ընթացքում արդիականացվել է Բեկնազարյան փողոցի լուսավորությունը, վերականգնվել 7-րդ թաղամասի 12 բակերի արտաքին լուսավորության ցանցը:

***Բնապահպանություն***

2010 թվականին «Կանաչ Երևան» ծրագրի շրջանակներում կառուցվել է 2 այգի՝ Սիսակյան 6, 8, 10 շենքերի բակում 150քմ մակերեսով (25.0 մլն դրամ) և Լենինգրադյան 50շ. բակում 150քմ մակերեսով (4.0 մլն դրամ): Ստեղծվել է 7 հազ. քմ ծաղկային գոտի, կատարվել են 12 հազ. քմ գազոնային տարածքների վերականգման և պահպանության աշխատանքներ: Կատարվել են ձևավորման, չոր ծառերի հատման և բուժման (տարեկան 2 անգամ) աշխատանքներ:

Կանաչապատ տարածքների խնամքն ու պահպանությունն ապահովելու համար իրականացվել է 1700 գծմ ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքներ:

«Կանաչ Երևան» ծրագրի շրջանակներում Աջափնյակ վարչական շրջանում իրականացված աշխատանքների համար Երևանի բյուջեից ծախսվել է 101.0 մլն դրամ:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Աջափնյակ վարչական շրջանում հիմնանորոգման կարիք ունեն հ.հ. 36, 39, 40, 41, 43, 44, 48, 50 նախադպրոցական հաստատությունները: Վերանորոգման կարիք ունեն հ.հ. 35, 37, 38, 40, 42, 45, 46, 47, 49 նախադպրոցական հաստատությունների, «Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոնի և գրադարանային կենտրոնացված համակարգի տանիքները: Հարկավոր է հարթ տանիքները վերափոխել թեք լանջավոր տանիքների:

Վերանորոգման կարիք ունեն հ.հ. 36, 38, 39, 40, 41, 42, 44, 45, 47, 48, 49, 50 նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցները:

Մշակութային հիմնարկներում Ա. Գաբրիելյանի անվ. արվեստի դպրոցում, գրադարանների կենտրոնացված համակարգում, մանկապատենական ստեղծագործությունների կենտրոնում հիմնանորոգման, լոկալ ջեռուցման առանձին համակարգի անցկացման խնդիր կա:

«Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոնը, Մ.Միրզոյանի, Ց. Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոցները, հ.հ. 44, 46, 48 և 49 նախադպրոցական ուսումնական հաստատությունները ջեռուցվում են համատեղ, ունեն ջեռուցման համակարգի առանձնացման խնդիր:

Մարզադպրոցը չունի դահլիճ, որի պատճառով պարապմունքներն անցկացվում են վարչական շրջանի հանրակրթական տարբեր դպրոցներում, շենքային պայմանները անբավարար վիճակում են, մասնավորապես չկա կենտրոնական ջեռուցում: Անհրաժեշտություն է առաջացել կառուցել մարզադպրոցի նոր շենք:

Հ.հ. 37, 39 և 48 նախադպրոցական հաստատությունները ոռոգման ցանցի անցկացման կարիք ունեն: Մասնակի վերանորոգման անհրաժեշտություն է կա հ.հ.

35, 36, 38, 40, 41, 42, 43, 44, 46, 47 և 50 նախադպրոցական հաստատությունների ոռոգման ցանցում:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Աջափնյակ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական, բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանների բարելավումը առաջնային խնդիր է:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Վարչական շրջանի 4-րդ կարգի վթարային շենքերի քանդման, բնակիչների վերաբնակեցման և 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքները շարունակելու խնդիր կա:

Վարչական շրջանի հրատապ լուծում պահանջող խնդիրներից է շենքերի խմելու ջրի և կոյուղու ջրագծերի հիմնանորոգումը: Վարչական շրջանի որոշ բնակավայրերում առկա է գազաֆիկացման և լուսավորության ցանցի արդիականացման խնդիրներ, ինչպես նաև վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցման անհրաժեշտություն:

***Բնապահպանություն***

Կանաչապատման և ոռոգման բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման, ոռոգման ջրագծերի կապիտալ վերանորոգման և նորերի անցկացման խիստ պահանջ կա:

***Առևտուր և սպասարկում***

Վարչական շրջանի տարածքում չկա գյուղատնտեսական մթերքների մեծ շուկա, առևտրա-արդյունաբերական ապրանքների տոնավաճառ:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել մշակութային միջոցառումներ՝ նվիրված Կանանց միջազգային օրվան, Հումորի օրվան, Մայրության և գեղեցկության տոնին, Եղեռնի զոհերի հիշատակի տարելիցին, Հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվան, Վերջին զանգին, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Գիտելիքի օրվան, ՀՀ Անկախության օրվան, Տարեցների

միջազգային օրվան, Գրադարանավարի օրվան, Ուսուցչի տոնին, Էրեբունի-Երևան 2793-ամյակին, Ամանորին: Կիրականացվեն միջոցառումներ՝ նվիրված Սուրբ Ծննդի, Տիառնընդառաջի, Սուրբ Զատկի տոններին:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շրջանակում կանցկացվեն Շաշկու միջմանկապարտեզային մրցույթ, «Գիտունիկ» միջմանկապարտեզային մրցույթ:

Առողջ սերունդ ունենալու և սպորտը մասսայականացնելու նպատակով 2011 թվականին նախատեսվում է կազմակերպել և անցկացնել 7 մարզական միջոցառումներ, մասնավորապես, բակային փառատոններ, ավանդական մրցաշարեր, որից 2 մարզական միջոցառումը՝ սեփական նախաձեռնությամբ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2011 թվականին առողջապահության բնագավառում նախատեսվում է շարունակել և իրականացնել սոցիալապես անապահով բնակիչներին պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժսպասարկման աջակցությունը, ինչպես նաև անվճար դեղորայքի հատկացումը: Աջափնյակ վարչական շրջանի տարածքում գործող առողջապահական հիմնարկների հետ համատեղ իրականացվելու են սանիտարահիգիենիկ, համաճարակային և կարանտինային միջոցառումների ծրագիր:

2011 թվականին հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, նախատեսվում է իրականացնել տարատեսակ սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ սոցիալապես խոցելի խմբերի, մասնավորապես, ուղղված Աջափնյակ վարչական շրջանում գործող բարեգործական 2 ճաշարանների շահառուների, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը և բարելավմանը: Նախատեսվում է կազմակերպել և անցկացնել տոնական միջոցառումներ 2 բարեգործական ճաշարանների շահառուների համար:

2011 թվականին նախատեսվում է իրականացնել «Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագիրը՝ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին աջակցելու համար: Ֆինանսական աջակցություն կհատկացվի սոցիալապես առավել կարիքավոր ընտանիքներին: Ամանորյա տոների կապակցությամբ վարչական շրջանի առավել կարիքավոր ընտանիքներին (մոտ 3400 ընտանիք) կհատկացվեն սննդի փաթեթներ:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2011 թվականին նախատեսվում է քանդել Սիսակյան փ. 3, Շինարարների փ. 15, Շինարարների փ. 35շ. 1-3 մուտքերի հասցեներով 4-րդ կարգի վթարային շենքերը և բնակիչներին վերաբնակեցնել:

Նախատեսվում է ամրացման աշխատանքներ կատարել համայնքի երրորդ կարգի վթարային 5 շենքերում՝ Շինարարների փ. 3, Շինարարների փ. 11, Շինարարների փ. 27, Աբելյան փ. 5 և Արզումանյան 8ա:

2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել Հալաբյան-Լենինգրադյան փողոցների խաչմերուկում գտնվող գետնանցումի ամրացման և վերանորոգման աշխատանքներ:

Կվերանորոգվեն բազմաբնակարան բնակելի շենքերի լանջավոր տանիքները, հարթ տանիքները, շքապատշգամբների և շքամուտքերի ծածկասալերը:

«Երևաննախագիծ» ՓԲ ընկերության կողմից կազմվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերը Հալաբյան 55-57 շշ., Սիսակյան 10-6 շշ., Նազարբեկյան թաղ. 11, 12շշ. և Լենինգրադյան 50շ. բակային տարածքների: Սկսված են Սիսակյան 10-6շշ. և Լենինգրադյան 50շ. բակային տարածքների կազմակերպման շինարարական աշխատանքները:

Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի փողոցների երթևեկելի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, Չաուշի փողոցի եզրաքարերի շարում և մայթի կառուցում, Շինարարների փողոցի սկզբնամասում (Լենինգրադյան փողոցից Արզումանյան փողոց) եզրաքարերի կառուցում, Սիլիկյան թաղ. տանող ճանապարհի կառուցում, Հասրաթյան և Հալաբյան փողոցների հենապատի վերականգնում:

«Նազարբեկյան» (Գ-3) թաղամասում մարզադպրոցի կառուցման: հարցը բարձրացվել է ՀՀ վարչապետի 15.04.07թ. 10 մարզեր կատարած այցելությունների ընթացքում: Կազմվել է էսքիզային նախագիծ:

2004 - 2005 թվականներից կառուցապատվող Գ-1, Գ-3 թաղամասերում կոմունիկացիոն գծերի (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում) անցկացում, միջթաղամասային ճանապարհների կառուցում:

Հալաբյան-Մարգարյան փողոցների խաչմերկուկին հարող հանգստի գոտում սահադաշտի, լողավազանի, բեմահարթակի և նստատեղերի կառուցում:

Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման բակային տարածքներում օրինակելի բակեր կկազմակերպվեն հետևյալ հասցեներում՝ Մարգարյան փող. 20/1 և 20/2 շենքերի բակ, 16 թաղ. 3-րդ շղթա, Հալաբյան 55 շենք և 42/198 / մ/մ հարևանությամբ, Հալաբյան 9 -11 շենքերի բակ, Ֆուչիկի 1-ին նրբ. թիվ 9 շենք, Գ-3թաղ. 11, 12, 13 շենքերի բակ, Էստոնական 7,9 շենքերի բակ, Էստոնական 11-13շ. բակ., Լենինգրադյան փող.40, 40ա, 42 շենքերի բակ, Շինարարների փող. 6 և 8 /Արզումանյան փող. 10-12/, Շինարարների 10/1շ. բնակ, Շինարարների 2-4 շենքերի բակ, Շինարարների 15/2շ.,Բաշինջաղյան 173-175շ. բակ, Գ-3 թաղ. ծառուղի-հանգստի գոտի, Շիրազի փող, 22-26, 28-30շ.բակ, Շիրազի փող.18շ. բակ, Գ-3թաղ. 14 շենք:

Կկառուցվեն ստորգետնյա կամ վերգետնյա անցումներ Լենինգրադյան 50շ. դիմաց, Հասրաթյան փող. «Շիրակ» հանրախանութի հատվածում, Շիրազի փող. հհ. 20-26 շենքերի դիմաց, Ֆուչիկ-Մարգարյան փողոցների խաչմերուկին հարող հատվածում, Լենինգրադյան-Սեբաստիա-Հասրաթյան փողոցների հատման մասում ավտոճանապարհային ժապավենների էստակադային անցում: Բակային տարածքներում նախատեսվում է ավտոտնակների վերակառուցում ստորգետնյա տարբերակով՝ երեխաների համար խաղահրապարակներ ձևավորելու նպատակով,

***Բնապահպանություն***

2011թ. նախատեսվում է վարչական շրջանում ընդարձակել կանաչ տարածքները: Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում բակային այգիների վերանորոգում, գազոնային տարածքի վերականգնում, ծաղկային տարածության ընդարձակում, ծառատունկ, թփերի տնկում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում՝ տարվա մեջ 2 անգամ: Նախատեսվում է նաև չոր և առավել վտանգավոր ծառերի հատում: Սիզամարգերի մակերեսը կհասցվի 7800քմ,նոր ոռոգման ջրագծերը կկազմեն 4210գծմ:

# ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Ավան վարչական շրջանում գործում են 7 նախադպրոցական հաստատություն (1470 երեխա, 202 աշխատող), 8 հանրակրթական դպրոց (5 հիմնական, 1 միջնակարգ, 1 ավագ, 4121 աշակերտ, 339 մանկավարժ) և 2 հատուկ դպրոցներ, 1 գրադարան, 1 մարզադպրոց, 1 մշակույթի տուն, 1 արվեստի դպրոց, 1 շախմատի մասնագիտացված մարզադպրոց։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Ավան վարչական շրջանում գործում են 11 առողջապահական հիմնարկներ և 1 պոլիկլինիկա։ Անապահով ընտանիքների թիվը 1080 է։

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Ավան վարչական շրջանում հաշվառված է 237 բազմաբնակարան շենք, որոնցից 212-ն ունեն հարթ, 24-ը՝ թեք տանիքներ՝ 14000 քմ ընդհանուր մակերեսով։ Շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերում առկա է թվով 330 մարդատար և բեռնատար վերելակներ։

***Բնապահպանություն***

Ավան վարչական շրջանի տարածքում է Երևանի բուսաբանական այգին։

***Առևտուր և սպասարկում***

Վարչական շրջանի տարածքում գտնվում են թվով 24 արդյունաբերական ձեռնարկություն, որոնցից աշխատում են 21-ը։ Վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկման 148 օբյեկտներ։ Դրանցից 100-ը հիմնական շինություններ են, իսկ 48-ը՝ ոչ հիմնական շինություններ։

Վարչական շրջանի տարածքում գործում են հեղուկ վառելիքի 10 լցակայաններ, հասարակական՝ 27 և կենցաղային սպասարկման՝ 15 օբյեկտներ։

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ և սպորտ***

2010 թվականի ընթացքում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում անցկացվել են միջդպրոցական օլիմպիադաներ, բակային միջոցառումներ, ՀՀ պետական և եկեղեցական տոների, ծեսերի և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Բնակչության անվճար բուժսպասարկումը կազմակերպելու համար միջնորդագրերով պետպատվերի շրջանակում կազմակերպվել է սոցիալապես անապահով ընտանիքների թվով 60 բնակիչների բուժհետազոտություն, բուժում և վիրահատություն:

2010 թվականի ընթացքում շարունակվել է անապահով ընտանիքների և սոցիալապես խոցելի խմբերին պատկանող մարդկանց մասին տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և տեղական նշանակություն ունեցող ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ աշխատանքները:

2010 թվականին Գ. Բուդաղյանի անվան արվեստի դպրոց հաճախող անապահով ընտանիքների թվով 24 երեխաներ ազատվել են վարձավճարից: Սոցիալական ռիսկի խմբի 70 դպրոցահասակ երեխաներ իրենց ամառային հանգիստը անցկացրել են Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում: Անապահով ընտանիքների 345 դպրոցականների Գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ տրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ: Արցախյան պատերազմի մասնակիցներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, տարեց միայնակ թոշակառուներին պարբերաբար ցուցաբերվել է դրամական և նյութական աջակցություն: Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 65-ամյակի առթիվ վետերաններին տրվել է դրամական օգնություն և կազմակերպվել են տոնական միջոցառումներ: 2010 թվականին Սուրբ Զատկի տոնի կապակցությամբ շուրջ 2000 ընտանիքի բնամթերային օգնություն է տրվել:

ՀՀ տոներին և հիշատակի օրերին կազմակերպվել են տոնական միջոցառումներ, տրվել են նվերներ «Արևիկ», «Տաթև», «Փիլատելփիա» հաշմանդամ երեխաների հասարակական կազմակերպություններին (250 հոգի) և երկու բարեգործական ճաշարանների 250 շահառուներին:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2010թ. Ավան վարչական շրջանում իրականացվել են 11090 քմ ասֆալտապատման աշխատանքներ: Իրականացվել է Գետառ գետի հունի մաքրման աշխատանքներ (3,0 մլն դրամ): Վարչական շրջանի փողոցների 680000 քմ սանիտարական մաքրման համար ծախսվել է 170,0 մլն դրամ: Բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման համար 2010թ. ձեռք է բերվել 39.0 մլն դրամ ընդհանուր արժողությամբ շինանյութ, վերանորոգվել են 5000 քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիքներ (16,0 մլն դրամ):

***Բնապահպանության ոլորտ***

Ավան վարչական շրջանի տարածքում կատարվել են ագրոտեխնիկական կանոններին համապատասխան կանաչապատման աշխատանքներ:

Կանաչ տարածքների պահպանման համար 2010 թվականին ծախսվել է 76,6 մլն. դրամ: «Կանաչ Երևան» ծրագրի շրջանակներում Ավան վարչական շրջանի տարածքում շահագործման է հանձնվել Նարեկացի թաղամասի այգի-պուրակը՝ ձևավորված ծառերով և թփերով, ծաղիկներով և սիզամարգերով: Սկսվել և շարունակվում են Թումանյան թաղամասի կանաչապատման աշխատանքները: Աճառյան 1-ին ուղետարի շրջակա տարածքում սկսվել է ոռոգման ցանցի կառուցումը:

***Առևտուր և սպասարկում***

2010 թվականին հաշվառվել, գույքագրվել և տվյալների բազա են մուտքագրվել վարչական շրջանում գործող առևտրի, սպասարկման և հանրային սննդի 427 օբյեկտներ, որոնցից 215 հիմնական շինություններ են, իսկ 212-ը՝ ոչ հիմնական:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Ավան վարչական շրջանում վերանորոգման կարիք ունեն հ.հ. 53, 55 նախադպրոցական հաստատությունները տանիքները և հ.հ. 53, 56 նուհ-երում սանհանգույցները:

Ավան վարչական շրջանում չեն ջեռուցվում Մշակույթի տունը, հ.3 մարզադպրոցը, հ.1 գրադարանը, հ.16 հատուկ գիշերօթիկ դպրոցը և շախմատի

մասնագիտացված դպրոցը: Գրադարանում ինտերնետ կապի անցկացման անհրաժեշտություն կա:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Ազգաբնակչության առողջության հետ կապված խնդիրների արագ արձագանքման համար հարկավոր է Ավան վարչական շրջանում ունենալ «Շտապ օգնություն» ծառայության տարածքային կենտրոն: Անհրաժեշտ է կազմակերպել սիրտանոթային կամ նմանատիպ բարդ հիվանդությունների վիրահատությունը պետպատվերի շրջանակներում:

***Բնապահպանություն***

Բնապահպանության ոլորտում առաջնային է ինքնավար ոռոգման ջրի խնդիրը:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Վերանորոգման կարիք ունեն վարչական շրջանի շուրջ 10 վերելակներ: Թեք տանիքներ ունեցող թվով 24 բնակելի շենքերը հիմնանորոգման կարիք ունեն:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումները

***Կրթություն, մշակույթ և սպորտ***

2011 թվականին նախատեսվում է ստեղծել թատերական, խեցեգործության, բատիկայի, գոբելենի, տիկնիկայինի և լրագրողական խմբակներ, արվեստի դպրոցում՝ սինթեզատորի, ժողովրդական գործիքների, ջազային երաժշտության, էստրադային վոկալի դասարաններ: Թիվ 3 մարզադպրոցում նախատեսվում է ավելացնել ձյուդո, բասկետբոլ, ծանրամարտ, ըմբշամարտ մարզաձևերի դասավանդումը, ստեղծել վարժասարքերի սրահ (համապատասխան սարքավորումներով):

Նախատեսվում է անցկացնել վարչական շրջանների միջև մի շարք մարզաառողջարարական ու զանգվածային սպորտային միջոցառումներ: 2011 թվականին թիվ 2 շախմատի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցում նախատեսվում է անցկացնել բակային խաղերի մրցաշարեր (շաշկի, շախմատ, ռենձյու, դոմինո և նարդի,) Նախատեսվում է անցկացնել Կարեն Ասրյանի հիշատակին նվիրված շախմատի բաց առաջնություն: Թիվ 2 շախմատի

մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցում նախատեսվում է իրականացնել վերանորոգման աշխատանքներ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Ավան վարչական շրջանի բնակչության սոցիալական խնդիրների լուծման նպատակով սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինը շարունակելու է առողջապահության ոլորտում աջակցություն ազգաբնակչության սանիտարական վիճակի բարելավմանը, սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը: Նախատեսվում է համագործակցություն առողջապահական հիմնարկների և դեղատների հետ՝ սոցիալապես անապահով խավերին անվճար բուժօգնություն ցուցաբերելու և կարիքավորներին անհրաժեշտ անվճար դեղորայք տրամադրելու տուղղությամբ:

Նախատեսվում է բուժհիմնարկներում կազմակերպել «Բաց դռների օրեր», խորհրդատվություններ, մասնակի հետազոտություններ, ինչպես նաև նախադպրոցական հաստատությունների աշխատակազմի բուժպրոֆիլակտիկ հետազոտություններ:

Վարչական շրջանի սոցիալապես անապահով և հաշմանդամության կարգ ունեցող բնակիչներին ՀՀ-ում գործող առողջարանների ուղեգրեր ձեռք բերելու հարցում կցուցաբերվի աջակցություն:

2011 թվականին այս ոլորտում նախատեսվում է Ավան վարչական շրջանի բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրներ իրականացնող հիմնարկ-ձեռնարկությունների, հասարակական, ինչպես նաև մի շարք բարեգործական կազմակերպությունների հետ իրականացնել տեղական նշանակության բարեգործական ծրագրեր, շարունակական դարձնել ՀՀ կառավարության «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագիրը:

Նախատեսվում է սոցիալապես անապահով խմբի ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը կազմակերպել հանրապետության տարբեր ճամբարներում, նոր ուսումնական տարվա կապակցությամբ աջակցել վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին՝ գրենական պիտույքների տրամադրման հարցում:

2011 թվականին կշարունակվի համագործակցությունը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ (2 բարեգործական ճաշարաններ՝ «Ծերապարտեզ», «Սոցկենտրոն»՝ շուրջ 300 շահառու)։

Նախատեսվում է ՀՀ տոների և հիշատակի օրերի կապակցությամբ դրամական, նյութական աջակցություն ցուցաբերել պատերազմի, աշխատանքի, ոստիկանության վետերանների, միայնակ տարեցների, զոհված և վիրավոր ազատամարտիկների, հաշմանդամ երեխաների միություններին և նման այլ կազմակերպություններին։

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2011 թվականին նախատեսվում է իրականացնել 11200 քմ ասֆալտապատման աշխատանքներ (61,6 մլն. դրամ)։ Կիրականացվի Գետառ գետի հունի մաքրման աշխատանքներ (3,0 մլն դրամ)։ Նախատեսվում է սանիտարական մաքրման աշխատանքներ շրջանի փողոցներում, որի ընդհանուր մակերեսը կկազմի 720000 քմ (180,0 մլն. դրամ)։

Տարվա ընթացքում պետք է իրականացվեն խաղահրապարակների, զբոսայգիների, բակերի, աստիճանավանդակների, բազրիքների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ։

2011թ. նախատեսվում է վերանորոգել 5000ք.մ. ընդհանուր մակերեսով հարթ տանիքներ (18,0 մլն. դրամ)։ 2011թ. նախատեսվում է վերանորոգել 10 շենքի տանիք և 8 բեռնատար վերելակ։ Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան բնակելի շենքերում դեռատիզացիոն և շրջանի տարածքում թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքներ։

***Բնապահպանություն***

Կանաչ տարածքների պահպանման համար 2011թ. նախատեսում է իրականացնել 76.6 մլն դրամի աշխատանքներ։

***Առևտուր և սպասարկում***

2011թ. առևտրի և սպասարկումների ոլորտում նախատեսվում է յուրաքանչյուր ամիս թարմացնել հիմնական և ժամանակավոր օբյեկտների և տնտեսվարող սուբյեկտների 2010թ. ընթացքում կատարված գույքագրման ցուցակը, ամենօրյա աշխատանքներ տանել վարչական շրջանի տարածքում բացօթյա առևտուրը կանոնակարգելու ուղղությամբ։

# ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Արաբկիր վարչական շրջանում գործում են 13 նախադպրոցական հաստատություն (2377 երեխա, 72 խումբ, 358 աշխատող), 22 հանրակրթական դպրոց (18 հիմնական, 4 ավագ, 11007 աշակերտ. 1028 մանկավարժ), 4 մարզադպրոց (111 խմբակ, 1401 սան, 13 մարզաձև), 2 գրադարան:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Արաբկիր վարչական շրջանում գործում է «Արաբկիր» բարեգործական հիմնադրամը, որի միջոցներով պարբերաբար դրամական և այլ օգնություն է ցուցաբերվում կարիքավոր ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին (147 անձ), ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին, բնակչության սոցիալապես անպաշտպան այլ խավերին:

Արաբկիրում վարչական շրջանում գործում են 2 բարեգործական ճաշարաններ, որից օգտվում են 300 շահառու:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Արաբկիր վարչական շրջանում հաշվառված են 664 բազմաբնակարան շենքեր, որոնցում առկա են 460 վերելակներ: Վարչական շրջանում հաշվառված է 2-րդ կարգի վթարայնության 25 շենքեր:

Վարչական շրջանի տարածքում գտնվում են 2 խոշոր կամուրջներ. Կինյան կամուրջը՝ երկարությունը 352մ, լայնությունը՝ 26մ, բեռնատարությունը՝ 60տ և Լամբադա կամուրջը՝ երկարությունը 180մ, լայնությունը՝ 50մ, բեռնատարությունը՝ 60տ:

Աղբահանությունը տարեկան կազմում է մոտ 100000 տոննա: Փաստացի գործում են մոտավորապես 30-40 աղբատար մեքենաներ:

Վարչական շրջանում գործում է 3 ջրամբար: Գործող ոռոգման համակարգը 710000 գծմ է:

***Բնապահպանություն***

Արաբկիր վարչական շրջանի կողմից սպասարկվում է 52 հա կանաչ տարածք, այդ թվում՝ 38.85 հա այգիներ, 6.35 հա պուրակներ, 6.8 հա սիզամարգեր, որտեղ առկա են 26740 հատ հատատունկ ծառեր:

***Առևտուր և սպասարկում***

Արաբկիր վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և բնակչությանը սպասարկող թվով 850 կրպակներ և տաղավարներ: Գործում է 3 գազալցման կետ և 20 բենզինի լցակայաններ:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010 թվականին Արաբկիր վարչական շրջանի հ.հ. 24, 25, 26 և 29 նախադպրոցական հաստատություններում անցկացվել է ջեռուցման համակարգ: Հ.հ. 34 և 22 նախադպրոցական հաստատություններն ապահովվել են սալօջախով և սառնարանով: «Խաղերի մարզադպրոց»-ը ձեռք է բերել մարզահագուստ, իսկ «3-րդ մարզադպրոցում»-ը՝ արտադրատնտեսական գույք:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2010 թվականին տոնական օրերի կապակցությամբ սոցիալապես կարիքավոր ընտանիքներին և անձանց աջակցություն է ցուցաբերվել: Սեպտեմբերի 1-ին 200 դպրոցահասակ երեխաների տրվել են գրենական պիտույքներ: 2 հասարակական կազմակերպությունների ցուցաբերվել է աջակցություն:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2010 թվականին Արաբկիր վարչական շրջանում իրականացվել են փողոցների ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման (84500 քմ), եզրաքարերի վերանորոգում(70 գծմ), սանմաքրման աշխատանքներ, բազմաբնակարան շենքերի հարթ (5812 քմ) և թեք (3836 քմ) տանիքների հիմնանորոգում: Գետնանցումներում կառուցվել են թեքահարթակներ: Իրականացվել են փողոցների արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքներ: 53 շենքերի մուտքերում տեղադրվել են դռներ:

***Բնապահպանություն***

Բնապահպանության ոլորտում 2010 թվականին իրականացվել է ծառատունկ, 52 հա կանաչ տարածքների պահպանություն, կառուցվել է 1 զբոսայգի:

***Առևտուր և սպասարկում***

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Արաբկիր վարչական շրջանում հիմնանորոգման կարիք ունեն հ.հ. 24, 26 նախադպրոցական հաստատությունները, տանիքների վերանորոգման՝ հ.հ. 22, 23, 25, 26 նուհ-երը, սանհանգույցի վերանորոգման՝ հ.հ. 22, 23, 25, 29, 30, 31, 32 նուհ-երը:

Արաբկիր վարչական շրջանի գրադարաններն ունեն վերանորոգման, նոր գույքով ապահովելու կարիք: Վարչական շրջանի մարզադպրոցների հիմնական խնդիրներից է վերանորոգումը, սպորտային գույքի և համազգեստի ձեռքբերումը: Վարչական շրջանի նախադպրոցական հաստատություններում առաջնային խնդիր է նաև ոռոգման ջրի, գույքի և բակային խաղերի հարցը:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Այս ոլորտի կարևորագույն խնդիրը կարիքավոր ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին, բնակչության սոցիալապես անպաշտպան այլ խավերին դրամական և այլ օգնություն ցուցաբերելն է:

***Բնապահպանություն***

Վերջին տարիներին իրականացվող ակտիվ շինարարական աշխատանքների պատճառով պակասել են կանաչապատ հատվածները, ջրածածկ մակերևույթներ գրեթե չկան: Ավտոտնակների և այլ շինությունների անկանոն կառուցապատման պատճառով Արաբկիր վարչական շրջանում առաջացել է բարեկարգման և կանաչապատման կարիք: Հիմնական խնդիրներից է այգիների, պուրակների, ծառուղիների ավելացումը:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառում ունեցած հիմնախնդիրներն են՝ փողոցների և բակերի արտաքին լուսավորությունը: Տրանսպորտային միջոցների քանակի ավելացման պատճառով շրջանի մի շարք հատվածներում կարիք կա նոր տրանսպորտային հանգույցների և հետիոտնային անցումների ստեղծման: Վարչական շրջանի հիմնախնդիրներից է նաև եզրաքարերի վերանորոգումը: Շենքերի տանիքները գտնվում են խիստ անմխիթար վիճակում:

***Առևտուր և սպասարկում***

Այս բնագավառում առաջնահերթ խնդիր է առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխումը վարչական շրջանի տարածքում, սպասարկման օբյեկտների արտաքին տեսքը, փողոցային առևտուրը:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականին նախադպրոցական ուսումնական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում նախատեսված է կատարել վերանորոգման աշխատանքներ և ձեռք բերել նոր գույք:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

«Արաբկիր» բարեգործական հիմնադրամին Երևանի բյուջեից, վարչական շրջանի կազմակերպություններից, ձեռնարկություններից փոխանցված միջոցներով նախատեսվում է պարբերաբար դրամական և այլ օգնություն ցուցաբերել կարիքավոր ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին, բնակչության սոցիալապես անպաշտպան այլ խավերին:

***Բնապահպանություն***

2011 թվականին Արաբկիր վարչական շրջանում նախատեսվում է կանաչ տարածքները ընդարձակել մինչև 150 հա, խիտ բնակեցված թաղամասերում նոր այգիները, պուրակները հիմնել, գազոնային տարածքները վերականգնել, ծառեր և թփեր տնկել և ծաղկային տարածություններն ընդարձակել:

### *Բնակարանային-կոմունալ տնտեսություն*

Նախատեսվում է ավելացնել վարչական շրջանի բնակչության կողմից արտադրվող կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը:

Վարչական շրջանում կանաչ տարածքների ընդարձակման համար համար անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգը (710000 գծմ երկարությամբ) և կառուցել նոր խողովակաշարեր:

Նախատեսվում է ապահովել վարչական շրջանին պատկանող փողոցների արտաքին լուսավորությունը:

Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանին պատկանող փողոցների երթևեկելի ու մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ: Խնդիր է դրվում նաև նորոգել փողոցների եզրաքարերը (տարեկան մոտ 800 գծմ), մայթերի սալերը և դիտահորերը (տարեկան մոտ 35 հատ):

### *Առևտուր և սպասարկում*

2011 թվականին անհրաժեշտ է շրջանի տարբեր փողոցների ճարտարապետական նորմերին համապատասխան վայրերում կազմակերպել մինի շուկաներ՝ տեղադրելով թեթև կոնստրուկտիվ էլեմենտներով բացօթյա տաղավարներ՝ փողոցի կողմից գովազդային վահանակներով երեսպատված:

# ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Վարչական շրջանում գործում են 5 նախադպրոցական հաստատություն (875 երեխա, 146 աշխատող), 6 հանրակրթական դպրոց՝ 5 միջնակարգ և 1 ավագ դպրոցներ (3183 աշակերտ, 288 մանկավարժ), 1 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն (22 խումբ, 425 աշակերտ), Ավետ Տերտերյանի անվան երաժշտական դպրոց (5 բաժին, 154 աշակերտ), 1 գրադարան։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Դավթաշեն վարչական շրջանում գործում է 1 ամբուլատոր բժշկական կենտրոն՝ հ.20 պոլիկլինիկան։

Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված են 14000 աշխատունակ, 1656 աշխատանք փնտրողներ, 6000 զբաղվածներ, 1596 գործազուրկներ, 503 նպաստառու գործազուրկներ, 2119 թոշակառուներ, 1974 ծերության կենսաթոշակ ստացողներ, 939 աղքատներ, 817 հաշմանդամներ, որից 189-ը՝ հաշմանդամ երեխաներ, 657 անապահով ընտանիք, 28 փախստական ընտանիք, 939 «Փարոս» համակարգից օգտվող ընտանիք, 56 միայնակ անժառանգ թոշակառուներ և 31 հայրենական պատերազմի մասնակիցներ։

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Վարչական շրջանում հաշվառված է 186 բնակելի շենք, որոնցից 7-ը՝ 1-ին և 2-րդ կարգի վթարային շենքեր են։ Վարչական շրջանի բնակարանների ընդանուր մակերեսը 862 հազ. քմ է, որից 353 հազ. քմ-ը՝ բնակելի մակերես։ Ներկայումս վարչական շրջանում գործող 22 համատիրությունների հանձնված են 181 շենքեր։ Շրջանի 186 բարձրահարկ շենքերում կան 385 վերելակներ։ Աղբահանությունը տարեկան կազմում է մոտ 35 հազ. խմ, այդ թվում բնակչությունից՝ մոտ 28 հազ. խմ։

***Բնապահպանություն***

Կանաչապատման կազմակերպության կողմից սպասարկվում է շրջանի 25հա տարածքը: կանաչապատ տարածք, **ծաղկապատ տարածք, այգի, պուրակ, ոռոգման ցանց**

***Առևտուր և սպասարկում***

Վարչական շրջանում գործում են առևտրի և սպասարկումների 150 փոքր և միջին օբյեկտներ (9-ը բենզինի և գազի լիցքավորման կետեր են), 16 արտադրական, 16 տրանսպորտային, սպասարկման 66 ընկերություն-ձեռնարկություններ, 3 կապի հանգույց, 1 բաղնիք, 3 շինարարական ձեռնարկություններ:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Դավթաշեն վարչական շրջանում 2010 թվականին իրականացվել է ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ թվով 4 նախադպրոցական հաստատություններում, 5 նախադպրոցական հաստատություններում իրականացվել է ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Տրվել է անկողնային պարագաներ, սրբիչներ, խալաթներ, փափուկ և կոշտ կահույք, սառնարան ու սալօջախ:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում 2010թ. իրականացվել են կրթական, մշակութային և սպորտային 14 միջոցառում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և Երևանի տոներին ու հիշատակի օրերին:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2010թ. «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում «Լույս Հայի աչքերին» ծրագրի շրջանակներում իրականացվել է հանրակրթական դպրոցների 1-4 դասարանի աշակերտների, նախադպրոցական հաստատությունների սաների, «Հույսի ավան» թաղամասի բնակչության և Դավթաշեն վարչական շրջանի սոցիալապես կարիքավոր բնակիչների ակնային զննում և ակնոցների տրամադրում: Պետ.պատվերի շրջանակում անվճար բուժօգնություն ստանալու նպատակով սոցիալապես կարիքավոր քաղաքացիներին տրվել են միջնորդագրեր: Համագործակցելով Հայկական բժշկական կենտրոնի հետ՝ անվճար բուժզննման և վիրահատության են ենթարկվել զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամները:

2010թ. պարենային ծրագրի շրջանակներում ամանորյա փաթեթ են ստացել սոցիալապես անապահով 496 ընտանիք: Հայրենական պատերազմի 65-ամյակի կապակցությամբ թվով 31 վետերանի տրվել է դրամական պարգևատրում:

2010 թվականի ամռային արձակուրդների ընթացքում 2 հերթափոխով 90 սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ իրենց ամառային հանգիստն անցկացրել են Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:

Գիտելիքի օրվա կապակցությամբ իրականացվել է դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների բաշխում սոցիալապես անապահով 1–4 դասարաններում սովորող 200 երեխաների: Իրականացվել է սոցիալապես անապահով ընտանիքների քարտեզագրում և տվյալների բազան թարմացվել է:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Վարչական շրջանում իրականացվել են փողոցների երթևեկելի հատվածի և մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, նորոգվել են փողոցների եզրաքարերը: Այգիներում տեղադրվել են տաղավարներ, մանկական խաղեր: Իրականացվել է հարթ տանիքների վերանորոգում:

Վարչական շրջանի տարածքում կառուցվում է «Հույսի ավան» թաղամասը, որը զբաղեցնելու է 15.9 հա տարածք: Կառուցապատումը իրականացվում է քոթեջային տիպի ցածրահարկ շենքերով: Թաղամասը բաղկացած է լինելու թվով 200 1-2 հարկանի տներից, սոցիալ–մշակութային, առևտրի և հանգստի օբյեկտներից: Առաջիկա չորս տարիներին կավարտվի ամբողջ աշխատանքները:

***Բնապահպանություն***

2010թ. Դավթաշեն վարչական շրջանի 25 հա կանաչ տարածքի խնամքն ապահովվել է 15280 գծմ ոռոգման ցանցով: Կատարվել է գազոնային տարածքի վերականգնում, ծառատնկում, ծառերի երիտասարդացում, թփերի տնկում, ծաղկային տարածության ընդարձակում, ծառերի և թփերի բուժում: Իրականացվել է ծառատունկ վարչական շրջանի 1–2-րդ թաղամասերի վերջնամասում և Եղվարդի խճուղու որոշ հատվածներում:

***Առևտուր և սպասարկում***

2010թ. արգելվել է փողոցային առևտուրը, անօրինական օբյեկտների տեղադրումը վարչական շրջանի տարածքում: Իրականացվել է վերահսկողություն

ժամկետանց սննդամթերքի վաճառքի նկատմամբ: Կազմակերպվել է ստուգայցեր՝ առևտուրը կանոնակարգելու և սանիտարական նորմերն ապահովելու նպատակով:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ և սպորտ***

Վարչական շրջանում գրադարանի վերանորոգման, ջեռուցման համակարգի անցկացման, գրքային ֆոնդի ավելացման և թարմացման խնդիր կա: Երաժշտական դպրոցի, մանկապատենեկան ստեղծագործական կենտրոնի կապիտալ վերանորոգումը և ջեռուցման համակարգի անցկացումը կնպաստեն մշակութային կենտրոնների նորմալ գործնեության կազմակերպմանը: Վարչական շրջանում մարզամշակութային դպրոցի կառուցման անհրաժեշտություն կա: Կառուցված ֆուտբոլի դաշտերը բարեկարգման և սպասարկման կարիք ունեն:

Դավթաշեն վարչական շրջանում հիմնանորոգման խնդիր ունեն հ.հ. 58, 61, 62 նախադպրոցական հաստատությունները, տանիքների նորոգման՝ հ.հ. 59, 61 նուհ-երը, սանհանգույցների վերանորոգման՝ հ.հ. 58, 60, 62 նուհ-երը:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Դավթաշեն վարչական շրջանի բժշկական կենտրոնի շենքը վերանորոգման և բժշկական սարքավորումների արդիականացման կարիք ունի:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Դավթաշեն վարչական շրջանում լուրջ խնդիր կա բնակֆոնդի պահպանման և շահագործման հարցում. բազմաբնակարան բնակելի շենքերի նկուղներում ջրամատակարարման և ջրահեռացման ցանցը մաշված է:

Դավթաշեն վարչական շրջանի 16-րդ թաղամասի դիմաց աճուրդային հողակտորների, Ազատամարտիկների, Զոր-1, Զոր-2, Զոր-3 թաղամասերի, 3-րդ թաղամասի մասնավոր սեկտորի կոյուղու կոլեկտորի կառուցման կարիք կա: Աղբահան և ջրցան մեքենաների ձեռքբերումը հնարավորություն կտա վարչական շրջանի սանմաքրման աշխատանքներն ավելի արդյունավետ կազմկերպել: Գլխավոր փողոցներում գտնվող աղբամաները հին. դրանց նորացման և ավելացման կարիք կա:

Դավթաշենի կամուրջը հիմնանորոգման կարիք ունի: Դավթաշեն վարչական շրջանի որոշ հատվածներում տորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների անհրաժեշտություն կա:

***Բնապահպանություն***

Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ոռոգման գործող ցանցը: այն հնարավորություն կտա ընդլայնելու կանաչ տարածքները:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ և սպորտ***

2011 թվականին կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ նվիված տոն և հիշատակի օրերին: Կանցկացվեն Սամվել Գևորգյանի անվան հուշամրցաշար, Անկախության 20-րդ տարեդարձին նվիրված մարզական խաղեր, 1-6 դասարանների միջև ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» բակային առաջնություն, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական խաղեր:

2011 թվականին նախատեսված է ջեռուցման համակարգ անցկացնել թիվ 59 նախադպրոցական հաստատությունում:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում 2011 թվականին ևս վարչական շրջանը շարունակելու է իրականացնել պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը՝ վարչական շրջանի տարածքում կկազմակերպի սոցիալական օգնության ծառայության գործունեությունը: 2011թ. նախատեսվում է իրականացնել աշխատանքներ առաջնային օղակում՝ բնակչության բուժսպասարկումը դարձնել որակյալ, հասանելի և մատչելի, աջակցել կանխարգելիչ և ամբուլատոր բուժօգնության աշխատանքներին:

Այս ոլորտում 2011թ. նախատեսվում է իրականացնել պարենային ծրագրի շրջանակներում ամանորյա փաթեթների տրամադրում, Հայրենական պատերազմի 66-ամյակի կապակցությամբ վետերանների մեծարման ցերեկույթ և պարգևատրում, սոցիալապես անապահով ընտանիքների քարտեզագրում և տվյալների բազայի թարմացում:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ամառային հանգստի կազմակերպման աշխատանքները 2011 թվականին շարունակական բնույթ կկրեն: Նախատեսվում է գիտելիքի օրվա կապակցությամբ իրականացնել դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների բաշխում սոցիալապես անապահով դպրոցահասակ երեխաներին:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Բնակարանային ֆոնդի պահպանումը, շահագործումը և նորոգումը վարչական շրջանում իրականացնում են համատիրությունները: Մշակվել է ծրագրային փաթեթ, որի շնորհիվ կստեղծվեն համատիրությունների միավորումներ: Այն թույլ կտա ժամանակակից խնդիրները լուծել օպտիմալ և արդյունավետ: Մրցակցության պայմաններում ի հայտ կբերվեն այս կառույցների գործունեության արդյունավետությունը: Քայլեր կձեռնարկվեն բնակելի ֆոնդի պահպանումն ու շահագործումն ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

2011թ. ընթացքում այս ոլորտում նախատեսվում է լուծել մի շարքառաջնահերթ խնդիրները՝ հիմնական նորոգման ենթարկել բնակելի շենքերի հարթ տանիքները (իզոգամ), վարչական շենքի արտաքին տեսքի վերանորոգում, մասնակի և հիմնական վերանորոգման աշխատանքներ կատարել շենքերի վերելակային տնտեսությունում, վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերում, ապահովել վարչական շրջանի բյուջեի մուտքերը ոչ բնակելի և ավտոտնակների զբաղեցրած տարածքներից, Դավթաշեն կամուրջի հիմնանորոգում:

2011թ. նախատեսվում է իրականացնել Դավթաշեն վարչական շրջանի առաջին և երկրորդ թաղամասերի միջև գտնվող այգու բարեկարգման և հրապարակի կառուցման աշխատանքներ, վարչական շրջանի 11 բակերում տեղադրել խաղեր, խաղահրապարակներ և 4 մինի ֆուտբոլի դաշտ:

Նախատեսվում է վարչական շրջանում ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգերը: Կառուցել և վերանորոգել խողովակաշարեր Փիրումյան և Տիգրան Պետրոսյան փողոցներում՝ համապատասխանաբար 2300 գծմ և 2200 գծմ երկարությամբ:

Դավթաշեն վարչական շրջանի բնակչության կողմից արտադրվող կենցաղային աղբի և փոշու հավաքման ու տեղափոխման հաճախականությունը նախատեսվում է

ավելացնել: Կենցաղային աղբի տեղափոխումը կկատարվի ռիթմիկ, ըստ մշակված աշխատանքային երկհերթ գրաֆիկների՝ 1 երթուղիով:

Նախատեսվում է ապահովել Փիրումյան, Աղաբաբյան փողոցների և վարչական շրջանի բակային տարածքների արտաքին լուսավորությունը ամբողջությամբ, Դավթաշեն սեփական սեկտորի (գյուղի) 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ փողոցների, Դավթաշեն վարչական շրջանի 16-րդ թաղամասի դիմաց աճուրդային հողակտորների, Ազատամարտիկների, Զոր-1, Զոր-2, Զոր-3 թաղամասերի, 3-րդ թաղամասի մասնավոր սեկտորի արտաքին լուսավորության ցանցի ստեղծումը:

Նախատեսվում է իրականացնել փողոցների երթևեկելի հատվածի և մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ: Խնդիր է դրվում նաև նորոգել փողոցների եզրաքարերը (տարեկան 1920զծմ) մայթերի սալեր, դիտահորեր, (տարեկան մոտ 12հատ) բարեկարգել մայթերին հարող գազոնները: Նախատեսվում է կառուցել ավտոճանապարհ 2-րդ և 1-ին թաղամասերի այգու վերջնամասում:

***Բնապահպանություն***

2011թ. նախատեսվում է թաղամասերում նոր այգիների ստեղծում, գազոնային տարածքի վերականգնում, ծառատնկում՝ 300 ծառ, ծառերի երիտասարդացում՝ 500 ծառ, թփերի տնկում՝ 600 թուփ, ծաղկային տարածության ընդարձակում է 400 քմ-ով, ծառերի և թփերի բուժում՝ տարեկան 2 անգամ: Նախատեսվում են իրականացնել 25 հա կանաչ գոտու խնամք, բարեկարգում և պահպանում, ոռոգման գործող ցանցի վերանորոգում և ընդլայնում:

***Առևտուր և սպասարկում***

2011 թվականին կշարունակվի վերասհոկողությունը ժամկետանց սննդամթերքի վաճառքի նկատմամբ: Կկազմակերպվեն ստուգայցեր՝ առևտուրը կանոնակարգելու և սանիտարական նորմերն ապահովելու նպատակով:

# ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Վարչական շրջանի տարածքում գործում է 13 նախադպրոցական հաստատություն (1833 երեխա, 373 աշխատող), 22 հանրակրթական դպրոց (2 ավագ, 20 հիմնական, 11430 աշակերտ, 926 մանկավարժ), 4 գրադարան, 1 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Վարչական շրջանի տարածքում գործում են հանրապետական նշանակության «Էրեբունի» և «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնները, որոնք ընդգրկում են 2 ծննդատուն, 6 ամբուլատոր պոլիկլինիկա:

Վարչական շրջանի թոշակառուների թիվը կազմում է 21345 մարդ, անապահով ընտանիքներինը՝ 2927, գործազուրկներինը՝ 4036, հաշմանդամները՝ 6237:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Էրեբունի վարչական շրջանում հաշվառված է 261 բազմաբնակարան շենք, որոնցից բարձրահարկ՝ 80: Գործում է թվով 211 վերելակ, որոնցից հիմնանորոգված են 178-ը: Վարչական շրջանում կա մինի ֆուտբոլի արհեստական 2 դաշտ:

***Բնապահպանություն***

Էրեբունի վարչական շրջանում կանաչ տարածքների մակերեսը կազմում է 13.3 հա, ծաղկապատ տարածքները՝ 1.6 հա: Շրջանի տարածքում կա 2 զբոսայգի, 5 պուրակ:

***Առևտուր և սպասարկում***

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում են 37 արդյունաբերական ձեռնարկություն, 15 շինարարական կազմակերպություն, 20 տրանսպորտային ձեռնարկություն, առևտրային և սպասարկման 700-ից ավելի փոքր ու միջին օբյեկտ:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010 թվականի ընթացքում 9 նախադպրոցական հաստատություններում (h.h. 64, 65, 66, 68, 69, 70, 71, 74, 75) անցկացվել է ջեռուցման համակարգ: **Ավելացնել տանիքներ, կանաչապատում**

Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում 2010 թվականի ընթացքում իրականացվել են մշակութային և սպորտային միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին Անցկացվել են «Լավագույն մարզական ընտանիք», «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» մրցույթները:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2010 թվականի փետրվարի 15-ից մինչև մարտի 19-ը «Հայկական ակնաբուժական նախագիծ» (ՀԱՆ) բարեգործական կազմակերպությունը «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակներում անվճար ծառայություններ է մատուցել Էրեբունի վարչական շրջանի մանկապարտեզների երեխաներին, դպրոցների 1-6-րդ դասարանների աշակերտներին, վետերաններին, հաշմանդամներին, ազատամարտիկներին: Ծրագրի շրջանակներում վարչական շրջանի 6396 բնակիչ հետազոտվել է, թվով 53 անձ ստացել է ակնոց, 2-ը՝ վիրահատվել:

2010 թվականի հունիսից «Աճեմյան ատամնաբուժական կլինիկա» բարեգործական ծրագրի շրջանակներում վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներն ստանում են անվճար բուժօգնություն:

Էրեբունի վարչական շրջանում 2010 թվականին հաշմանդամ կարիքավոր թվով 14 բնակիչների տրամադրվել են 14 հատ սայլակներ:

2010թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում Էրեբունի վարչական շրջանում «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Էրեբունու թանգարանի համալիրի և հարող տարածքի բարեկարգման, կանաչապատման տարածքների խնամքի և պահպանման օժանդակ աշխատանքներ» ծրագիրը: Մասնակցել են 20 հոգի:

2010թ. մայիսի 8-ին «Հաղթանակի օր» միջոցառման շրջանակներում վարչական շրջանի Հայրենական պատերազմի մասնակիցները ստացել են դրամական պարգևներ: Հունիսին մեկնարկել էր ՀՀ սփյուռքի նախարարության

կազմակերպած «Արի տուն» ծրագիրը: Վարչական շրջանի 22 ընտանիքներ ներկայացրել են 22 հայտ՝ սփյուռքահայ երեխաներին հյուրընկալելու համար:

2010թ. հուլիս-օգոստոս ամիսներին վարչական շրջանի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ՝ 7-13 տարեկան շուրջ 60 դպրոցականներ, այդ թվում նաև սոցիալապե

ս անապահով և բազմազավակ ընտանիքների դպրոցականներն իրենց ամառային արձակուրդի 20-օրյա հանգիստն անցկացրել են Կոտայքի մարզի Մարմարիկի «Հեքիաթների կիրճ» մանկական առողջարարական ճամբարում:

«Գիտելիքի օր» միջոցառման շրջանակներում վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 134 դպրոցահասակ երեխաների տրամադրվել են 134 պայուսակներ՝ գրենական պիտույքներով:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2010 թվականի ընթացքում վերանորոգվել է շուրջ 10670 քմ ճանապարհ, որի համրա ծախսվել է 64 մլն դրամ: 2010թ. սանիտարական մաքրման աշխատանքների համար ծախսվել է 426 մլն դրամ: Հեղեղատար ցանցի և գետերի հուների (4800 գծմ) մաքրման ամենամյա աշխատանքները կատարելու նպատակով ծախսվել է 18 մլն դրամ: Վարչական շրջանում նորոգվել են փողոցների և բակերի լուսավորության ցանցի շուրջ 3150 գծմ հատված, որի համար ծախսվել է 20 մլն դրամ:

2010թ. վերանորոգվել են շենքերի և շինությունների 5149 քմ հարթ (19.576 մլն) և 1701 քմ թեք լանջավոր տանիքները (5.7 մլն դրամ), ապակեպատվել է 100 քմ շենքերի մուտքերն ու աստիճանավանդակները (1.7 մլն դրամ), նորոգվել է 2926 քմ մուտքեր (1.6 մլն դրամ), 653 գծմ ջրագիծ ու կոյուղագիծ, ջրթափ (1.8 մլն դրամ): Վերելակների վերանորոգման համար ծաշսվել է 11 մլն դրամ:

2010 թվականի բակային տարածքների բարեկարգման, նորոգման, ինչպես նաև խաղահրապարակների կառուցման և նորոգման աշխատանքների համար ծախսվել է 12.5 մլն դրամ:

***Բնապահպանություն***

2010թ. ստեղծվել է 2417 քմ կանաչ գոտի, տնկվել է 25000 ծաղկասածիլներ, մշակվել է 8400 քմ գազոն, ծախսվել է 46 մլն դրամ:

2010 թվականին ապրիլ-հունիս ամիսներին «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Էրեբունու թանգարանի

համալիրի և հարող տարածքի բարեկարգման, կանաչապատման, տարածքների խնամքի և պահպանման օժանդակ աշխատանքներ» ծրագիրը: Ծրագրի ընթացքում կատարվել է՝ կանաչ տարածքների խնամք և պահպանում 2.3747 հա, 14.25 հա սիզամարգերի խնամք և 3.3 հա պահպանություն, 9.9 հա ծառերի բնաբաժակների քաղհան, փխրեցում 821 քմ, 2463 քմ ծառերի չորուկների և կոճղաշվերի էտ, կտրում: Ծրագրի ընդհանուր գումարը՝ 4 մլն:

***Առևտուր և սպասարկում***

Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքի համաձայն վերահսկողություն է իրականացվել վարչական շրջանի տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ (առևտրի, հասարակական սննդի և կենցաղ ծառայությունների օբյեկտներ): Հսկողության արդյունքնում մինչև 16.10.10թ. հայտնաբերվել է թվով 144 խախտում, որի հիման վրա կազմվել է արձանագրություններ:

Կանոնակարգվել է Սասունցի Դավթի հրապարակի (կայանամերձ) բացօթյա առևտուրը, հիմնվել է այժմ գործող պտուղ-բանջարեղենի մինի շուկա: Մինի շուկաներ են ձևավորվել Նոր Արեշ 3 փ. հարակից տարածքում (Մուրացան 113 շենքի դիմաց), ինչպես նաև Խաղաղ Դոնի, Տիտոգրադյան փողոցների հատման մասում:

Բարեկարգվել է վարչական շրջանի տարածքում գործող թվով 52 խանութների բացօթյա տարածքները:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Էրեբունի վարչական շրջանում վերանորոգման կարիք ունեն հ.հ. 65, 68, 69, 71 նախադպրոցական հաստատությունների շենքերը և հ.հ. 63, 65, 66, 70, 73, 74, 75 նուհ-երի տանիքները և հ.հ. 63, 74, 75 նուհ-երի սանհանգույցները: Գրադարանների, կրթական և մշակութային այլ ձեռնարկությունների ու կազմակերպությունների կառուցման, շահագործման և նորոգման աշխատանքներին աջակցելու անհրաժեշտություն կա: Առաջնային խնդիր է մանկապատենական ստեղծագործական կենտրոնի համերգային դահլիճի նորոգումը, պատուհանների և դռների վերանորոգումը, շենքի ջեռուցումը:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Էրեբունի վարչական շրջանում մեծ թիվ են կազմում միայնակ թոշակառուները, սոցիալապես անապահով ընտանիքները, ցածր եկամուտ ունեցողները: Վարչական շրջանի տարածքում գտնվող համատիրությունների համակարգը զգալի աջակցության և բարեփոխումների կարիք է զգում:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Սողանցքային տարածքների մակերեսի մեծության պատճառով ավելանում են ոչ միայն վթարային շենքերի, այլ նաև ճանապարհների վթարային հատվածների թիվը: Այդ պատճառով հիմնական և մասնակի նորոգման ու բարելավման կարիք ունի վարչական շրջանին պատկանող ճանապարհային ցանցը: Փողոցների արտաքին լուսավորության ցանցը բարելավման կարիք ունի:

***Բնապահպանություն***

Կարևոր խնդիր է վարչական շրջանի կանաչ տարածքների (Էրեբունի արգելոց թանգարանի այգին, կենտրոնական փողոցներին հարող կանաչ տարածքները) ընդլայնումը, որի համար անհրաժեշտ է վերականգնել ոռոգման ցանցի 60-70%-ը:

***Առևտուր և սպասարկում***

Առևտրի և սպասարկման ոլորտում անհրաժեշտ է կանոնակարգել բացօթյա առևտուրը: Էրեբունու զանգվածում, Վարդաշենում, կայարանամերձ հրապարակի մերձակայքում գյուղմթերքների վաճառքի շուկաների անհրաժեշտություն կա:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում նախատեսվում է իրականացնել մշակութային 12, սպորտային 9 միջոցառում՝ նվիրված տոն և հիշատակի օրերին:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Շարունակվելու է «Աճեմյան ատամնաբուժական կլինիկա» բարեգործական ծրագրի շրջանակում վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների անվճար բուժօգնությունը:

2011թ. նախատեսվում է առանձնակի ուշադրություն դարձնել բարեգործական ճաշարանի գործարկմանը: Նախատեսվում է կազմակերպել օգնություններ զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, բազմազավակ անապահով ընտանիքներին, Հայրենական պատերազմի վետերաններին, միայնակ տարեցներին և բնակչության սոցիալապես անապահով այլ խավերին:

2011թ . նախատեսվում է 3 մլն դրամ հատկացնել հարազատ չունեցող մարդկանց թաղման, նյութապես կարիքավոր ընտանիքների միանվագ օգնության, նաև բուժման ծախսերի նպատակով: 2011 թվականին «Հայ–շվեդական» բարեգործական կազմակերպության շրջանակներում վարչական շրջանի անապահով ընտանիքների 8-16 տարեկան երեխաների համար կազմակերպվելու են անգլերենի և համակարգչային ուսուցման անվճար դասընթացներ:

2011 թվականի ապրիլ-հունիս ժամանակահատվածում Էրեբունի վարչական շրջանում «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում իրականացվելու է «Մանկապարտեզների բակերի բարեկարգման և ցանկապատերի նորոգման օժանդակ աշխատանքներ» ծրագիրը:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2011թ. 11300քմ ճանապարհների վերանորոգման համար անհրաժեշտ է 70 մլն դրամ: Վարչական շրջանի բնակֆոնդի պահպանման և շահագործման ուղղությամբ 2011թ. նախատեսվում է հիմնանորոգել 3600 քմ շենքերի և շինությունների հարթ (20 մլն դրամ) և 7530 քմ թեք լանջավոր տանիքները (20 մլն դրամ), ապակեպատել շենքերի 150 քմ մուտքերն ու աստիճանավանդակները (2.5 մլն դրամ), նորոգել 4000 քմ մուտքերը (2.1 մլն դրամ), ջրագծերն ու կոյուղագծերը, ջրթափ (800 գծմ՝ 2.4 մլն դրամ), նորոգել վերելակները' 8 մլն դրամ:

Բակային տարածքների բարեկարգման, նորոգման, ինչպես նաև խաղահրապարակների կառուցման և նորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է 10 մլն դրամ:

***Բնապահպանություն***

2011թ կանաչ գոտիների ստեղծման, ծաղկասածիլների տնկման, գազոնների ավելացման համար նախատեսվում է 62 մլն դրամ:

***Առևտուր և սպասարկում***

Էրեբունի վարչական շրջանում 2011 թվականին նախատեսվում են Էրեբունի զանգվածում, Վարդաշենում, կայարանամերձ հրապարակում կազմակերպել գյուղմթերքների վաճառքի շուկաներ, հնացած առևտրի կրպակները փոխարինել նորառաճ, ժամանակակից կրպակներով ու խանութներով:

Բարեկարգվելու են վարչական շրջանի տարածքում գործող մինի շուկաների տարածքները, շարունակվելու խանութների, տնտեսվարող սուբյեկտների տարածքների բարեկարգման աշխատանքները,

# ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Վարչական շրջանի տարածքում գործում է 29 նախադպրոցական ուսումնական հաստատություն (21 համայնքային ենթակայության՝ 2551 երեխա և 436 աշխատող, 8-ը մասնավոր), 33 հանրակրթական դպրոց (5 ավագ, 28 հիմնական, 15491 աշակերտ, 1322 մանկավարժ), 35 ԲՈՒՀ, 4 արտադպրոցական հիմնարկ, 7 արվեստի դպրոց, 1 գեղագիտական դաստիրակության կենտրոն, 24 գրադարան, 2 մարզադպրոց։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Կենտրոն վարչական շրջանում անապահով ընտանիքների թիվը 5120 է։ Ավելացել է աշխատունակ բնակչության թիվը՝ 79.177 մարդ։ Զբաղվածների թիվը կազմում է 78.900 մարդ, գործազուրկները՝ 2594 մարդ։ «Փարոս» համակարգից օգտվում է 2550 մարդ։

Վարչական շրջանում գործում են 29 տարբեր նշանակության բուժհիմնարկներ, որոնցից 5-ը՝ քաղաքապետարանի, 21՝ առողջապահության նախարարության, 3-ը՝ կրթության նախարարության ենթակայության։ Կենտրոն վարչական շրջանում առողջապահական հաստատություններն են՝ հ.հ. 1, 4, 7, 17 պոլիկլինիկաները և «Շտապբուժօգնությունը»։

***Բնակարանային և կոմունալ տնտեսության ոլորտ***

Կենտրոն վարչական շրջանում հաշվառված է բնակելի 698 շենք, գերատեսչական՝ 14, վթարային՝ 2։ Բազմաբնակարանային շենքերի կառավարումը հանձնված է 19 համատիրություններին և 9 լիզորագրային կառավարման։ Առանձնատների թիվը 7800 է, որից 350 վթարային։ Բազմաբնակարան շենքերում բնակարանների թիվը 27204 է, վերելակներինը՝ 580։ Շրջանի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 2056013 քմ։ Աղբահանությունը տարեկան կազմում է 266.8 հազ.խմ., իսկ մեկ շնչին ընկնող կոշտ թափոնների քանակը 1.4 խմ.։

***Բնապահպանություն***

Կենտրոն վարչական շրջանում գտնվում է 11 զբոսայգի՝ 28,4 հա մակերեսով, 16 խաղահրապարակ (զբոսայգիներում)։ Կանաչ տարածությունները 600 հա են, մերձակա անտառային գոտին՝ 120 հա, սիզամարգերի մակերեսը՝ 11,6 հա։ «Կենտրոն կանաչապատում» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող կանաչապատ տարածքը կազմում է 40 հա, որը պարբերաբար խնամվում է։

Բնապահպանական առումով կարևոր նշանակություն է տրվում Ծիծեռնակաբերդի անտառապատ տարածքի, Հրազդանի կիրճի մաքրության և կանաչապատման աշխատանքներին։

***Առևտուր և սպասարկում***

Տարածքում գործում են առևտրի և սպասարկման 3325 փոքր և միջին օբյեկտներ, 542 հանրային սննդի օբյեկտներ, 484 կենցաղային սպասարկման օբյեկտներ։

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ,սպորտ***

Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ 2010 թվականի ընթացքում ջեռուցման համակարգեր են տեղադրվել հ.հ. 14, 3, 6, 16, 18 և 20 նախադպրոցական ուսումնական հաստատություններում։

Վերականգնվել է հ. 33 հանրակրթական դպրոցի ոռոգման ցանցը (տեղադրվել է նոր պոմպ), իրականացվել են հողային և կանաչապատման աշխատանքներ։

Թվով 18 նախադպրոցական ուսումնական հաստատություններ համալրվել են նոր գույքով (յուրանքանչյուրին ըստ կարիքի), ձեռք են բերվել մահճակալներ, զգեստապահարաններ, աթոռակներ և սառնարաններ։

Մշակույթի և սպորտի բնագավառում 2010թ. ընթացքում իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին, անցկացվել են սպորտային մրցույթներ և խաղեր։

### *Առողջապահություն և սոցիալական ապահովություն*

Կազմակերպվել է թվով 33 անապահով բնակիչների անվճար բուժօգնությունը (տարբեր տեսակի վիրահատություններ և բուժում ստացիոնար պայմաններում)։

2010 թվականին ընտանեկան նպաստների չափն ավելացել է 3500 դրամով։

1-4-րդ դասարանների անապահով ընտանիքների թվով 1570 երեխաներ ստացել են պայուսակներ և գրենական պիտույքներ՝ նոր ուսումնական տարվա կապակցությամբ։ Հայրենական Մեծ պատերազմի թվով 232 մասնակիցներ ստացել են դրամական պարգևատրում (10000-ական դրամ)։

### *Բնակարանային-կոմունալ տնտեսություն*

2010 թվականի ընթացքում Երևանի Կենտրոն վարչական շրջանի տարածքում իրականացվել են 95565քմ մակերեսով ասֆալտապատման աշխատանքներ, որից 46265քմ-ը (265.5մլն դրամ) նախատեսված էր Կենտրոն վարչական շրջանի աշխատանքային պլանով։

Վերանորոգվել է 7387քմ հարթ և 7934քմ թեք տանիք։

«Երևան Ջուր» ընկերությունը Մյասնիկյան պողոտայից մինչև Ավան վարչական շրջանը իրականացրել է 4.5կմ նոր ջրագծի անցկացման աշխատանքներ, որը հնարավորություն կտա Կենտրոն վարչական շրջանում ապահովել որակյալ ջրամատակարարում։ Նոր ջրատարի շինարարության ծրագիրն իրականացվում է Համաշխարհային բանկի տրամադրած շուրջ 300 մլն դրամ վարկային միջոցներով։

Ալ. Սպենդիարյանի անվ. Օպերայի և Բալետի ակադեմիական թատրոնի հարակից հրապարակում կառուցվել է եռհարկանի ստորգետնյա ավտոկայանատեղի, ամբողջությամբ վերանորոգվել է հրապարակը, Հ. Թումանյանի և Ալ. Սպենդիարյանի արձանները՝ պատվանդաններով։

Իտալական «Ռենկո» ընկերության կողմից կառուցվել և շահագործման է հանձնվել բազմաֆունկցիոնալ շենք Վ. Սարգսյան փողոցում, Հանրապետության և Տ. Մեծ փողոցների հատման վայրում։

Վերակառուցվել են թվով 46 խմելու ջրի դիտահորեր՝ ջրամատակարարման որակը բարելավելու նպատակով։

### *Առևտուր և սպասարկում*

2010թ. շահագործման են հանձնվել Մոսկովյան և Թումանյան փողոցներում գտնվող «Սթար» և Ե. Քոչար փողոցում գտնվող «ՍԱՍ» խոշոր առևտրի կենտրոնները։

***Բնապահպանություն***

«Կանաչ Երևան» ծրագրի շրջանակներում Կենտրոնվարչական շրջանում իրականացվել են ծաղկապատման և կանաչապատման աշխատանքներ: Ընդհանուր թվով տնկվել է 400 ծառ, որից 140-ը՝ Խորենացու փողոցում և 150 թուփ: Տնկվել է շուրջ 89000 հատ ծաղիկ, ծաղկապատվել՝ 8000քմ տարածք: Ավելացվել է 2500քմ սիզամարգ:

Տեղադրվել են 144 ծաղկամաններ՝ Հերացու փողոցի կամրջի վրա և Բրազիլիայի հրապարակում: 3000 քմ սիզամարգեր կանաչապատվել են, 8000 քմ տարածքներ՝ ծաղկապատվել: Ոռոգման ցանցի աշխատանքներ են սկսվել և կշարունակվեն Մյասնիկյան պողոտայում: Այս աշխատանքների իրականացման համար ծախսվել է 179.0 մլն դրամ:

2010 թվականին իրականացվել է Հրազդանի կիրճի սան.մաքրման համալիր ծրագիր, որին մասնակցել են տարբեր կազմակերպություններ: Գետառի հունի մաքրման

Խորենացու փողոցում 40 վթարային ծառեր հատվել են, արմատախիլ են արվել արմատային մասերը, փոսերը լցոնվել և տնկվել են նոր ծառեր: Ճոպանուղու շրջապատում տեղափոխվել, այնուհետև լցոնվել է 130 խ/մ հող՝ հետագա կանաչապատման նպատակով:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Կենտրոն վարչական շրջանում հիմնանորոգման կարիք ունեն հ.հ. 4, 5, 10, 12, 14 նախադպրոցական հաստատությունները, տանիքի վերանոոգման՝ հ.հ. 2, 5, 8, 10, 11, 15, 17, 18 նախադպրոցական հաստատությունները, սանհանգույցների վերանորոգման՝ 5, 7, 8, 10, 18, 21 նուհ-երը:

Մանկապարտեզները համապատասխան տարիքային գույքի թարմացման ու ավելացման խնդիր ունեն: Անհրաժեշտ է ավելացնել սննդի համար նախատեսված գումարների չափը: Կապիտալ և մասնակի վերանորոգման կարիք են զգում շրջանի դպրոցների մի մասը: Անհրաժեշտ է վերականգնել դպրոցների և մանկապարտեզների կանաչ տարածքների ոռոգման ցանցերը և իրականացնել կանաչապատում: Կան հաստատություններ, որոնք ունեն ոռոգման ցանցերի անցկացման և նոր համապատասխան գույքի ձեռքբերման խնդիրներ:

### *Առողջապահություն և սոցիալական ապահովություն*

Հատկապես թերի է իրականացվում բնակչության սոցիալապես անապահով և առաձին (հատուկ) խմբերում ընդգրկվածներին դեղորայքով ապահովումը: Սա առաջնահերթ խնդիր է հատկապես տեղամասային պոլիկլինիկաների համար, որոնք սպասարկում են ոչ միայն իրենց մոտ գրանցված հիվանդներին, այլև մյուս վարչական շրջաններից դիմողներին: Որոշ պոլիկլինիկաներում անհրաժեշտ է իրականացնել ներքին վերանորոգման, հարակից տարածքների կանաչապատման և ոռոգման խողովակների անցկացման, ցայտաղբյուրների վերականգնման աշխատանքներ:

Առաջարկվում է՝ վերանայել բարեկեցության չափանիշը, քանի որ կան շատ անապահով ընտանիքներ, որոնց չափանիշները չեն բավարարում նպաստ ստանալու համար: Իրականացված մոնիտորինգի արդյունքների ամփոփումից պարզվել է, որ շրջանում անհրաժեշտ է նախկինում գործող բարեգործական բաղնիքի վերաբացումը, որի կարիքը զգում են անապահով բնակիչները:

### *Բնակարանային-կոմունալ տնտեսություն*

Չնայած կատարված աշխատանքներին Կենտրոն վարչական շրջանում կան կապիտալ և մասնակի վերանորոգման ենթակա հեղեղատար և ջրմուղ–կոյուղու ցանցեր, շինություններ, ճանապարհներ և ոռոգման ցանց չունեցող կանաչ տարածքներ:

Կարգավորված չէ Մ. Խորենացու փողոցի կամրջից մինչև Նորք-Մարաշ շրջանի սահման հետիոտնի տեղաշարժը (դեպի ճանապարհի մյուս հատված), որը բավականին նեղ է:

Բակային տարածքների ոռոգման ցանցերի վերականգնումը հնարավորություն կտա արդյունավետկազմակերպել կանաչ տարածքների խնամքն ու պահպանությունը: Առաջարկվում է ավելացնել Մյասնիկյան պողոտայի վերգետնյա անցումների քանակը: Անմխիթար վիճակում են բազմաբնակարան մի շարք շենքերի տանիքները, վերելակները, էլեկտրական մալուխները, փողոցների էլեկտրական փայտե սյուները: Կապիտալ և մասնակի վերանորոգման կարիք են զգում շրջանային ենթակայության փողոցների մայթերը:

Սանմաքրման աշխատանքների համար հարկավոր է ավելացնել աշխատողների և անհրաժեշտ տեխնիկայի քանակը: Խմելու ջրի որակը և մատակարարման հաճախականությունը ցածր է:

Հեղեղատար ցանցերը վերանորոգման և նորերի կառուցման կարիք ունեն. Գետառի հունի բաց հատվածը հեղեղումների վտանգ կարող է առաջացնել:

***Բնապահպանություն***

Ոռոգման ցանցի վերականգնմանը զուգահեռ հարկավոր է ավելացնել կանաչ և ծաղկապատ տարածքների մակերեսը:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականին կրթության ոլորտի թվով 9 միջոցառումների վրա նախատեսվում է ծախսել 13.5 մլն. դրամ (մանկապարտեզների տարեվերջյան հանդեսներ, «Վերջին զանգ», շրջանի անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպում, Ամանորի և Սուրբ ծննդյան տոնակատարություն մանկապարտեզներում, բարձր առաջադիմություն ունեցող հանրակրթական դպրոցների աշակերտների ամառային հանգստի կազմակերպում ք. Մոսկվայի «Դրուժբա» ճամբարում, Ուսուցչի օր, Մասնակցություն Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրին, Սեպտեմբերի 1 «Գիտելիքի օր»:

Մշակույթի ոլորտի թվով 12 միջոցառումների վրա կծախսվի 13.5 մլն. դրամ («Բանակի օր», «Մարտի 8», Մայրության և գեղեցկության օր, Մեծ Եղեռնի 96-րդ տարելից, Համբարձում, Հաղթանակի օր, Հարության տոն, Երեխաների պաշտպանության միջազգային օր, «Վարդեվառ», Էրեբունի-Երևան 2793-ամյակ, Աշնան օր՝ Նավասարդ, Անկախության օր:

Սպորտի ոլորտի թվով 9 միջոցառումների վրա կծախսվի 3.5 մլն. դրամ (Անկախության 19-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 19-րդ մարզական խաղեր, «Ազգային ժողովի գավաթի խաղարկություն», Նախազորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր, Օլիմպիական օրվան նվիրված կրոսսվազք, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան

նվիրված մարզահամերգային տոնահանդես, «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ փառատոն, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոն (ներգրավելով սայլակավոր հաշմանդամ երեխաներին), Տարեվերջյան արդյունքների ամփոփում և պարգևատրում, Դպրոցականներին 9-րդ մարզական խաղեր:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2011 թվականին Կենտրոն վարչական շրջանի և «Աճեմյան» հիմնադրամի համագործակցության արդյունքում շրջանի անապահով բնակիչները անվճար ատամնաբուժական ծառայություններ կստանան հիմնադրամի միջոցներով գործող ատամնաբուժական պոլիկլինիկայում: Կենտրոն վարչական շրջանի առողջապահության խնդիրներ ունեցող անապահով բնակիչներին կտրվեն միջնորդագրեր անվճար վիրահատություններ կազմակերպելու և ստացիոնար բուժում ստանալու նպատակով:

Սոցիալական ապահովության ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել շուրջ 57.7 մլն.դրամի աշխատանքներ: Թվով 2 հասարակական կազմակերպություններ կստանան 1.2 մլն. դրամ (յուրաքանչյուրին 0.6 մլն դրամ): Բարեգործական ճաշարանի ծառայությունից կօգտվեն թվով 200 ծերեր:

2011 թվականին միանվագ դրամական օգնություն կհատկացվի շրջանի թվով 2220 անապահով ընտանիքների (22.2 մլն. դրամ): Շրջանի թվով 1570 անապահով ընտանիքների տարրական դասարանների աշակերտներ կստանան գրենական պիտույքներ և պայուսակներ (9.420 մլն դրամ): Թվով 5120 անապահով ընտանիքների կտրամադրվեն Ամանորյա նվերներ (11.776 մլն դրամ): Հայրենական Մեծ պատերազմի թվով 240 մասնակիցներ կստանան դրամական պարգևատրում 4.8 մլն. դրամի չափով:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Բնակարանային–կոմունալ տնտեսության բնագավառում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել 30000 քմ ասֆալտբետոնե ծածկերի վերանորոգում (185.0 մլն. դրամ):

Կիրականացվեն արտաքին լուսավորության վերականգնման աշխատանքներ (70.0 մլն դրամ):

Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման և վերանորոգման համար նախատեսվում է տրամադրել ֆինանսական աջակցություն (սուբսիդիա) համատիրություններին 260 մլն դրամի չափով, որը հնավորություն կտա՝ իրականացնել 840 քմ հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ (5.0 մլն դրամ), 500 քմ թեք տանիքների վերանորոգման աշխատանքներ (5.0 մլն. դրամ)։ Մանկապարտեզների բարեկարգման և խաղամիջոցների տեղադրման աշխատանքների համար նախատեսվում է 106.5 մլն դրամ

***Բնապահպանության ոլորտ***

2011 թվականին Գետառի հունի մաքրման աշխատանքների համար կծախսվի 10.0 մլն. դրամ։ Յուրաքանչյուր օր կիրականացվեն 3162 հազ. քմ սանիտարական մաքրման աշխատանք, որի համար անհրաժեշտ է 859.5 մլն. դրամ։ Կիրականացվեն 40 հա կանաչ տարածքների ընդլայնման, պահպանման և ոռոգման աշխատանքներ (200.0 մլն. դրամ)։

***Առևտուր և սպասարկում***

2011 թվականին կշարունակվեն աշխատանքները ապօրինի առևտրի արգելման, շինանյութի, հեղուկ գազի, վառելիքաքսայուղերի, հեղուկ վառելիքի և գյուղատնտեսական մթերքների վաճառքը մշակված և հաստատված առևտրի համայնքային կանոններին համապատասխանեցնելու ուղղությամբ։ Նախատեսվում է ապամոնտաժել և արդիականացնել վարչական շրջանի տարածքում գտնվող չօգտագործվող, լքյալ և հնաոճ տեսք ունեցող ժամանակավոր կրպակ-տաղավարները։ Հսկողություն սահմանել Կենտրոն վարչական շրջանի տարածքում տեղադրվող գովազդների որակի նկատմամբ՝ համապատասխանեցնելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքին։

# ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է 22 նախադպրոցական հաստատություն (3583 երեխաներ, 596 աշխատող), 17 հանրակրթական դպրոց (12583 աշակերտ, 899 մանկավարժ, 3 ավագ դպրոց, 1 կրթահամալիր), 1 գրադարանային համակարգ՝ 2 գրադարանով, 1 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 մշակութային կենտրոն, 1 գեղագիտական կենտրոն, 1 համալիր մարզադպրոց և 1 մարզական ակումբ (42 խմբակ, 608 սան, 36 աշխատող), 1 օլիմպիական հերթափոխի մարզադպրոց (49 խմբակ, 526 սան, 170 աշխատող)։

Ջեռուցվում է միայն «Սեբաստիա» մշակույթի կենտրոնը։ Երաժշտական և արվեստի դպրոցներում, կենտրոնական գրադարանում ջեռուցման աշխատանքները նախագծման փուլում են։ Մալաթիա մարզակումբը ջեռուցվում է, ջրագծերը և էլեկտրագծերը նորոգված են։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է 6 պոլիկլինիկա, 2 ծննդատուն և «Մալաթիա» ԲԿ-ում։

2010թ. անապահովության գնահատման համակարգում հաշվառված են 3213 ընտանիք, 438 միայնակ անժառանգ թոշակառու, 451 ծնողազուրկ երեխա, 11 երկկողմանի ծնողազուրկ երեխա, ընտանեկան նպաստ է ստանում 2451 ընտանիք։

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում տեղակայված են 575 բազմաբնակարան շենքեր, որոնցից 546-ը սպասարկվում են 28 համատիրությունների, 53-ը՝ լիազորագրային կառավարիչների և 6-ը՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից։ Շենքերի բնակարանների ընդհանուր քանակը 26913 է, այդ թվում՝ համատիրությունների կողմից սպասարկվում է 24016–ը, լիազորագրային կառավարիչների կողմից՝ 2594 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից՝ 303 բնակարաններ։

Բազմաբնակարան շենքերից 83-ի տանիքները թեք լանջավոր են, ընդհանուր մակերեսը մոտ 64.3 հազ. քմ է: 492 շենք ունեն հարթ տանիքներ՝ 245,5 հազ. քմ ընդհանուր մակերեսով: Վարչական շրջանի բարձրահարկ շենքերում առկա են թվով 958 վերելակներ:

***Բնապահպանություն***

Վարչական շրջանում բազմամյա տնկարկները զբաղեցնում են 430.4 հա, որից 100 հա՝ տնամերձ: Գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են 335,9 հա տարածություն: Կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը 77 հա է: Սիզամարգերը զբաղեցնում են 18,8 հա, անտառներն ու պուրակները՝ 37,5 հա, այգիները՝ 14,7 հա, ծաղկապատ տարածքները՝ 1,5 հա:

***Առևտուր և սպասարկում***

Շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 1232 օբյեկտներ:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Նախադպրոցական հաստատությունների գույքի նորացման համար ներդրվել է 75.000.000 դրամ՝ կոշտ գույք (սեղան, աթոռ, պահարան, մահճակալ, սառնարան և սալօջախ) ձեռք բերելու համար:

2010 թվականին հիմնանորոգվել են հ.հ. 11, 174 և 181 հիմնական դպրոցների մասնաշենքերը, հ.184 ավագ դպրոցի սպորտ հրապարակը: Հ. 174 դպրոցի բակում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, հ.176 դպրոցում՝ ջեռուցման համակարգի տեղադրման:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ 2010 թվականին ջեռուցման համակարգ է տեղադրվել հ.հ. 77, 80, 82, 83, 84, 87, 88, 92, 93, 95, 97 նախադպրոցական հաստատություններում:

Կանաչապատման նպատակով թվով 8 նախադպրոցական հաստատություններում տնկվել են 145 պտղատու և 210 դեկորատիվ ծառեր:

Արվեստի դպրոցում 2010թ. ընթացքում կատարվել է մասնակի վերանորոգում, գույքի ձեռքբերում, երաժշտական դպրոցում՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի մասնակի վերանորոգում: Գրադարանային համակարգը 2010թ. ընթացքում ձեռք է բերել 184 կտոր գիրք, նվիրատվությամբ ստացել է 232-ը:

2010թ. Մալաթիա-Սեբաբտիա վարչական շրջանում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: Կազմակերպվել են բարեգործական համերգ տարեցների համար:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի 45 քաղաքացիների տրվել են միջնորդագրեր՝ բուժումը պետպատվերի շրջանակներում կազմակերպելու համար, ինչպես նաև 21 քաղաքացիների ՝ անվճար ստոմատոլոգիական բուժում ստանալու նպատակով:

2010թ. ընթացքում հրատապ օգնություն է ստացել 528 ընտանիք: Սոցիալապես անապահով 1300 ընտանիքների Զատկի տոնի կապակցությամբ ցուցաբերվել է սոցիալական օգնություն:

Մայիսի 9-ին Հայրենական Պատերազմի 104 վետերաններ պարգևատրվել են 10000-ական դրամի չափով: Սեպտեմբերի 1-ին 200 ընտանիքների տրվել է գրենական պիտույքների փաթեթներ:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2010թ. ընթացքում ասֆալտապատվել է 19086քմ տարածք (86806 հազ. դրամ), տեղադրվել են 625 գծմ (7669 հազ.դրամ) եզրաքարեր, վերանորոգվել՝ 2121գծմ (9925 հազ.դրամ):

«Բարեկարգ Երևան» ծրագրի շրջանակներում հիմնվել է 2 բակ, որի համար Երևանի բյուջեից ծախսվել է 21823 հազ. դրամ: Տեղադրվել են թվով 100 նստարաններ:

***Բնապահպանություն***

77 հա կանաչապատ տարածքների խնամքի ու պահպանության համար ծախսվել է 107516 հազ.դրամ:

Ավելացվել է կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը՝ կազմելով 77 հա, սիզամարգերինը՝ 18,8, ծաղկապատ տարածքներինը՝ 1,5:

***Առևտուր և սպասարկում***

2010թ. ընթացքում վարչական շրջանի տարածքից ապամոնտաժվել և տեղափոխվել է 14 հատ կրպակ և տաղավար:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում հիմնանորոգման կարիք ունեն հ.հ. 76, 80, 82, 83, 84, 86, 87, 88, 92 նախադպրոցական հաստատությունները, տանիքների նորոգման՝ հ.հ. 76, 77, 78, 80, 81, 85, 89, 90, 91, 95 նուհ-երը, սանհանգույցների՝ հ.հ. 78, 79, 85, 89, 93, 94, 96, 97 նուհ-երը:

Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների բակերում բարեկարգման, խաղահրապարակների ստեղծման, ջրամատակարարման և մալուխագծերի ներքին ցանցերի վերանորոգման խնդիր կա:

Հ.հ. 162, 179, 190 և 121 դպրոցները շուրջօրյա ջրամատակարարման խնդիր ունեն, անմխիթար վիճակում են մալուխագծերի ներքին ցանցերը:

Արվեստի և երաժշտական դպրոցներում առկա են նկուղի և տանիքի վերանորոգման, գույքի և երաժշտական գործիքների, համակարգչի ձեռքբերման խնդիրներ: «Ժամանց» մշակութային կենտրոնում տարածքի տրամադրման, համակարգչի ձեռքբերման խնդիր կա: Գրադարանային համակարգում հարկավոր է իրականացնել տանիքի, ջրհորդանների վերանորոգման, շրջակա տարածքի ասֆալտապատման աշխատանքներ: Հ.1 գրադարանային մասնաճյուղում ջեռուցման համակարգ չկա, «Սեբաստիա» մշակույթի կենտրոնում՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցը քայքայված է, 1-ին հարկի դահլիճը վերանորոգման կարիք ունի:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Վարչական շրջանի սոցիալական ապահովության բնագավառում հիմնախնդիրներ են աղքատությունը, գործազրկության բարձր մակարդակը: Տրամադրվող նպաստների հասցեականության մեծացումը կարելի է ապահովել սոցիալական ծառայությունների որակի բարելավման միջոցով:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Այս ոլորտում հիմնական խնդիր է համարվում բակային տարածքների բարեկարգումը, ինչը հնարավորություն կտա բակերը դարձնել յուրատեսակ հանգստի գոտիներ:

***Բնապահպանություն***

Առկա կանաչ տարածքների ու այգիների (Չինարի այգի, Իտալական այգի, Երիտասարդության այգի. Մայրության այգի, Վ.Զատիկյանի անվ. այգի և այլն) ոռոգման ցանցը ունեն վերականգման, արդիականացման կարիք:

Շրջանի տարածքով անցնող Ստորին Հրազդանի ջրանցքի սանիտարական վիճակը ոռոգման սեզոնից դուրս դառնում է անմխիթար: Ուստի, շրջակա միջավայրի պահպանման և վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելման նպատակով շատ կարևոր է ջրանցքի պարբերական, ամենամյա մաքրման աշխատանքների պատշաճ կազմակերպումը:

***Առևտուր և սպասարկում***

Առևտրի և սպասարկումների ոլորտում կարևոր խնդիր է վարչական շրջանի տարածքում առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխման կարգավորումը, փողոցային առևտուրի արգելումը:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականի ընթացքում կրթության և մշակույթի բնագավառում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: Կկազմակերպվի օլիմպիադա, դպրոցական քաղաքային 20-րդ մարզական խաղեր, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկություն, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոն և այլ միջոցառումներ, որոնց իրականացման համար անհրաժեշտ է 5,640 մլն դրամ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2011 թվականին նախատեսվում է տրատադրել միջնորդագրեր՝ բուժումը պետպատվերի շրջանակներում կազմակերպելու համար, ինչպես նաև անվճար ստոմատոլոգիական բուժում ստանալու համար:

Սոցիալական ապահովության բնագավառում 2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել միջոցառումներ կապված Հաղթանակի օրվան, Հաշմանդամների միջազգային օրվան, Տարեցների միջազգային օրվան, Ամանորի, Սուրբ Ծննդի ու Սուրբ Զատկի տոների հետ:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2011 թվականին նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, թեք լանջավոր տանիքների և ջրհորդանների վերանորոգում՝ 23140 քմ, շքամուտքերի դռների տեղադրում՝ 60 դուռ, ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգում՝ 2500գմ, ջրահեռացման համակարգի վերանորոգում՝ 2000 գծմ, անձրևատար խողովակների վերանորոգում՝ 2000 գծմ, կոյուղու ներքին ցանցի վերանորոգում՝ 2000 գծմ, աղբատար խողովակների վերանորոգում, աղբապատուհանների տեղադրում՝ 250, կախովի աղբախցիկների վերանորոգում և վերակառուցում՝ 400 աղբախցիկ, ջերմամեկուսացման ապահովում՝ 2000 գծմ, շքամուտքերի վերանորոգում՝ 3500 քմ, շքամուտքերի ծածկերի վերականգնում՝ 500 քմ և վերելակների պահպանում և վերանորոգում՝ 19,0 մլն. դրամ:

***Բնապահպանություն***

2011 թվականին նախատեսվում է ընդլայնել Իսակովի և Բաբաջանյան փողոցների հարող տարածքը: Պետք է ընդլայնվի, կանաչապատվի ամբողջ Բաբաջանյան փողոցների մեջտեղում գտնվող սիզամարգերը:

***Առևտուր և սպասարկում***

2011թ. առաջնորդվելով Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 31-ի h.1943-Ա որոշմամբ, ծրագրվում է ապամոնտաժել և տեղափոխել 30 հատ կրպակ և տաղավար, իսկ արդիականացվող օբյեկտների թիվը կկազմի մոտ 60:

Նախատեսվում է մշտական վերահսկման և հաշվառման արդյունքների համադրման միջոցով հայտնաբերել լքյալ, ժամկետանց որոշումներով գործող և չգործող, առանց համապատասխան թույլտվությունների և պայմանագրերի, ապօրինի գործող գովազդային վահանակների դաշտը:

# ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Վարչական շրջանի տարածքում կա 22 նախադպրոցական հաստատություն (3637 երեխա, 601 աշխատող), 19 հանրակրթական դպրոց (4 ավագ, 15 հիմնական, 11409 աշակերտ, 947 մանկավարժ), 1 հատուկ գիշերօթիկ դպրոց, «Անանիա Շիրակացու» անվան ճեմարան, 2 քոլեջ, 1 ատաղծագործական ուսումնարան, կենտրոնական գրադարան, մշակույթի կենտրոն, 2 երաժշտական և 1 արվեստի կենտրոն, Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա, 2 մարզադպրոց (14 մարզաձև, 97 խումբ, 32 մարզիչ, 1570 սան), մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործական կենտրոն, 3 բուհ, ուսումնական հանրակացարան (2 մասնաշենք)։

Վարչական շրջանում կա 29 հուշարձան, 10 կոթող, 15 արձան, 6 տապանաքար, 4 խաչքար և 1 ջրանցք։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Նոր Նորք վարչական շրջանում գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն (500 մահճակալ) և 6 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 1 մարզաառողջարարական կենտրոն։

Վարչական շրջանի տարածքում գործում են 4 բարեգործական ճաշարան։

2010թ, սեպտեմբերի 1-ի դրությամբ Նոր Նորք վարչական շրջանի զբաղվածության կենտրոնում գրանցված է 2781 գործազուրկ։ Ընտանիքների ԱԳՀ-ում հաշվառված է 2596 ընտանիք, որից նպաստառու՝ 2040 ընտանիք։ Ընտանիքների ԱԳՀ-ում որպես անօթևան (Գայի 19 հասցեով) հաշվառվել է 1 ընտանիք։ «Նպաստ» համակարգում 2009թ. սեպտեմբեր ամսից հաշվառված է մանկուց հաշմանդամ 81 երեխա, հաշմանդամ՝ 883 մարդ (առաջին խմբի հաշմանդամ՝ 142, երկրորդ խմբի՝ 506, երրորդ խմբի՝ 235)։

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Նոր Նորք վարչական շրջանում հաշվառված են 665 բազմաբնակարան շենք, որոնցից բարձրահարկ են 301-ը։ Գործում է թվով 589 վերելակ։ Հիմնանորոգված են 14

վերելակ, 5-ի նորոգումն ընթացքի մեջ է: Կա 4 գետնանցում, 3 լողավազան, 19 մարզահրապարակ և 3 բաղնիք:

Վարչական շրջանում առկա է թվով 3 վթարային շենք, 2-րդ աստիճանի վնասվածության՝ 2 շենք (Գալշոյան 12շ., Մառի 12շ.) և 3-րդ աստիճանի վնասվածության՝ 1 շենք (Միկոյան 25շ.):

***Բնապահպանություն***

Նոր Նորք վարչական շրջանում կանաչ տարածքների մակերեսը կազմում է 369 հա, որոնց մեծ մասը զբաղեցնում են թվով 18 այգիներն ու պուրակները:

***Առևտուր և սպասարկում***

Վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկման 1124 փոքր և միջին օբյեկտներ, շինարարական՝ 58, տրանսպորտային՝ 34 ձեռնարկություններ, բենզինի և գազի լիցքավորման 18 կետ:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010թ. Նոր Նորք վարչական շրջանում թվով 22 նուհ-ում ավարտվել է ջեռուցման համակարգի վերականգնողական աշխատանքները: Տանիքների վերանորոգման աշխատանք չի իրականացվել:

2010 թվականի ընթացքում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում իրականացվել են մշակութային և սպորտային մի շարք միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին:

**Առողջապահություն և սոցիալական ապահովություն**

2010թ. Նոր Նորք վարչական շրջանում առողջապահության բնագավառում սոցիալապես անապահով խավին տրամադրվել է շուրջ 110 միջնորդագիր՝ պետպատվերի շրջանակներում վիրահատություններ և կոնսերվատիվ բուժում իրականացնելու համար: Վարչական շրջանի տարածքում գործող հ.22 պոլիկլինիկայի և հ.5 բուժ. սանմասի հետ համատեղ իրականացվել է բնակչության մեջ էպիլեպսիայով և շաքարային դիաբետով տառապող հիվանդների ցուցակների կազմման և ճշտման, ինչպես նաև այդ հիվանդներին համապատասխան դեղորայքով ապահովելու գործընթացը:

2010 թվականին վարչական շրջանի տարածքում գործող 4 բարեգործական ճաշարաններից օգտվել է շուրջ 700 սոցիալապես անապահով անձ: Դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար 2010թ. մայիս ամսից կատարվել է թվով 89 Հայրենական Մեծ պատերազմի վետերանների հաշվառում (327 գրքույկների հաշվեհամարներով):

2010 թվականին Նոր Նորք վարչական շրջանում բնակվող սոցիալապես անապահով բնակչությանը, զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ու բազմազավակ ընտանիքների տրամադրվել է օգնություն սննդի տեսքով: 1-4-րդ դասարանի դպրոցահասակ երեխաներին տրամադրվել է պայուսակ և գրենական պիտույքներ (330 հատ): Միայնակ և հաշմանդամ երկու ընտանիքի տրամադրվել է գազի վառարան՝ անվճար հիմունքներով:

Շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը կազմակերպվել է Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Նոր Նորք վարչական շրջանում 2010 թվականի ընթացքում հիմնանորոգվել է 14 վերելակ. տրամադրվել է 500 հատ իզոգամ՝ 5000 քմ հարթ տանիք վերանորոգելու համար, 857 հատ ազբոշիֆեր՝ թեք տանիքները վերանորոգելու համար:

Վարչական շրջանի տարբեր մասերում տեղադրվել է 790 հատ աղբարկղ:

Վարչական շրջանում իրականացվել են 9440 քմ ծավալով ասֆալտե ծածկույթի ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ: Բարեկարգվել է 9-րդ զանգվածի նորաստեղծ այգին, 5-րդ զանգվածի (հ. 166 դպրոցի և հ. 16 նուհ-ի միջնամասի) այգին, 4-րդ զանգվածի 2-րդ հատվածի 33 և 38 շենքերի բակային տարածքները: Նոր Նորք վարչական շրջանի տարածքում տեղադրվել է 76 նստարան և 25 մանկական խաղ:

2010 թվականի ընթացքում Նոր Նորք վարչական շրջանում հիմնանորոգվել է 4-րդ զանգվածի 43 շենքի, Միկոյան փ. 5 շենքի, Վիլնյուսի փողոց, Գայի պող. «Էրեբունի» շարվածքով հենապատի մի մասը, վերանորոգվել է 668 գծմ բազալտե եզրաքար: Պարբերաբար ապահովվել է Գետառի հունի մաքրումը: Հիմնանորոգվել է Հովհաննիսյան փող. արտաքին լուսավորությունը: Ավարտվել է Լվովյան,, Գիլնյուս բոցներում արտաքին լուսավորության աշխատանքները:

Այգիներում մասամբ վերանորոգվել է ոռոգման ցանցը:

Ջրագծերի վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել: 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ զանգվածներում ապահոված է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ 1-ին, 2-րդ, 5-րդ, 8-րդ զանգվածներում, ինչպես նաև Ջրվեժի Բանավան և Մայակ թաղամասերում ջրամատակարարումը կատարվում է գրաֆիկով՝ ժամը 07:11 – 19:23:

Վարչական տարածքում ավարտվել է բնակելի շենքերի գազաֆիկացման աշխատանքները:

2010 թվականին ամբողջովին իրականացվել են 2-րդ զանգվածի ուսանողական ավանի 4-րդ մանսաշենքի կոյուղագծերի, ջրագծերի, օդափոխիչների և տանիքի վերանորոգման աշխատանքները:

***Բնապահպանություն***

2010 թվականին տնկվել է 610 մրգատու, 648 դեկորատիվ, 610 սոճանման ծառեր, ինչպես նաև 465 թուփ: Նոր Նորք վարչական շրջանում ծաղկապատման համար օգտագործվել է 94 հազ. ծաղիկ: Ծաղկապատվել է 1.4 հա տարածք, կանաչապատվել՝ 37.58 հա.

***Առևտուր և սպասարկում***

2010 թվականի ընթացքում իրականացվել է հսկողություն վարչական շրջանի տարածքում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, խախտումների համար կազմվել են արձանագրություններ: Համեմատաբար կանոնակարգվել է բացօթյա առևտուրը, իսկ գլխավոր փողոցներում՝ մասնավորապես Գայի պողոտայում՝ արգելվել:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Նոր Նորք վարչական շրջանի հ.հ. 100, 103, 108, 109, 116, 118 նախադպրոցական հաստատությունները հիմնանորոգման կարիք ունեն, տանիքների վերանորոգման կարիք ունեն հ.հ. 101, 102, 104, 106, 107, 110, 111, 112, 113, 114, 120 նուհ-երը, իսկ սանհանգույցների վերանորոգման՝ 101, 105, 107, 110, 113, 114, 119, 120 նուհ-երը:

Դպրոցական շենքերի մեծ մասն ունեն հիմնանորոգման և ջեռուցման համակարգերի տեղադրման կարիք: Հիմնանորոգման կարիք ունեն հ.հ. 133, 134, 135,

141, 142, 163, 164, 166 և 186 դպրոցները, իսկ հ.հ. 88, 139, 163, 143 և Հր. Մաթևոսյանի անվան դպրոցում նորոգման կարիք ունեն տանիքները:

Մարզաբազաների վերանորոգումը և նորի կառուցումը հնարավորություն կստեղծի կազմակերպել տարբեր սպորտաձևերի մարզական թիմեր: Վարչական շրջանին անհրաժեշտ է լողավազան և ֆուտբոլի կանաչապատ դաշտ:

Արտադպրոցական հիմնարկների շենքերը հիմնանորոգման կարիք ունեն: Երաժշտական գործիքները հին են: Գրադարաններին անհրաժեշտ են նոր տացքակետեր և գույք՝ գրքային ֆոնդը նորմալ պահպանելու համար:

Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ հաշմանդամ և ֆիզիկական զարգացման արատ ունեցող անչափահասների համար՝ հնարավորություն տալով զբաղվել սպորտով:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Բնակչության սոցիալապես անապահով խավին անվճար բժշկական օգնություն ցուցաբերելու և անվճար դեղորայք հատկացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանները բարելավման կարիք ունեն:

ԱՆհրաժեշտ է ավելացնել բարեգործական ճաշարանից օգտվող հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց թիվը:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Առկա է խնդիր՝ կապված Նոր Նորքի Ջուղայի 5 հասցեում գտնվող 4-րդ կարգի վթարային շենքը ապօրինի վերաբնակեցրած բնակիչների տեղահանման և շենքի քանդման հետ: Երևանի քաղաքապետարանի համատեղ անհրաժեշտ է կազմակերպել վարչական շրջանում անհատական բնակարանային շինարարության գործընթացը:

Վարչական շրջանի անավարտ բնակելի շենքերի կառուցապատման և առանձին շենքերի շահագործման հետ կապված խնդրի լուծման համար անհրաժեշտ է մշակել նոր մոտեցումներ:

***Բնապահպանություն***

Կանաչապատման և ոռոգման բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման, ոռոգման ցանցի ընդարձակման և ջրագծերի հիմնական վերանորոգման պահանջ կա:

***Առևտուր և սպասարկում***

# 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականին կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում նախատեսվում են իրականացնել միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին: Ծրագրերում պետք է նախատեսվի սպորտի միջոցով տարբեր վարչական շրջանների և տարածաշրջանների երիտասարդների շփումների հնարավորությունը:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2011 թվականի ընթացքում նախատեսվում է անցկացնել հ. 22 պոլիկլինիկայի և հ. 5 բուժ. սանմասի սպասարկվող բնակչության մեջ սրտի արատով հիվանդների ցուցակների ճշտման և նրանց անվճար դեղորայքով ապահովելու միջոցառումներ: Նմանատիպ միջոցառում պետք է իրականացվի նաև պարբերական հիվանդությամբ (

2011 թվականին նախատեսվում է տոնական միջոցառումներ կազմակերպել և անցկացնել բարեգործական ճաշարանների շահառուների համար:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2011թ. այս ոլորտում կիրականացվեն աշխատանքներ բազմաբնակարան բնակելի շենքերի լանջավոր, հարթ տանիքների, շքապատշգամբների և շքամուտքերի ծածկասալերի վերանորոգման ուղղությամբ: Պետք է հիմնանորոգվի մոտ 51 վերելակ:

Նախատեսվում է տեղադրել 150 հատ աղբարկղ, վերանորոգել աղբահարթակները:

2011թ. նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի փողոցների երթևեկելի մասի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտե ծածկույթի ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ (շուրջ 14000քմ): Կշարունակվի 4-րդ զանգվածի 2 հատվածի՝ 33 և 38 շենքերի բակային տարածքի

բարեկարգման աշխատանքերը: Նախատեսվում է նաև տեղադրել 16 հատ զրուցարան, 105 նստարան:

2011թ. նախատեսվում է ավարտել Գայի պողոտայի «Էրեբունի» շարվածքով հենապատի նորոգումը, ինչպես նաև Սաֆարյան փողոցի նրբանցքի և Միկոյան 17ա շենքի արտաքին լուսավորությունը, վերանորոգել և վերակառուցել վթարված հենապատերը և փողոցների եզրաքարերը (շուրջ 200գծմ), վերանորոգել աստիճաններն ու բազրիքները:

2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել 2-րդ զանգվածի ուսանողական ավանի 5-րդ մասնաշենքի կոյուղագծերի, ջրագծերի, օդափոխիչների և տանիքի վերանորոգման աշխատանքները:

***Բնապահպանություն***

2011թ. նախատեսվում է Նոր Նորքում վարչական շրջանում ընդարձակել կանաչ տարածքները: Անհրաժեշտ է խիտ բնակեցված թաղամասերում բարեկարգել բակային այգիները, տեղադրել մանկական խաղեր և մետաղական նստարաններ: Իրականացնել ծառատունկ, թփերի տնկում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում:

***Առևտուր և սպասարկում***

2011թ. կշարունակվի առևտրի և ծառայությունների ոլորտներում իրականացվող վերահսկողությունը: Կկանոնակարգվի գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի բացօթյա առևտուրը:

# ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում են 4 նախադպրոցական հաստատություն (242 երեխաներ, 94 աշխատող)։ Բոլոր հաստատությունները ապահովված են ջեռուցման համակարգերով։ Վարչական շրջանում գործում են թվով 4 հանրակրթական դպրոցներ (942 աշակերտ, 109 մանկավարժ)։

Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում է մեկ գրադարան (23837 գրքային ֆոնդ), 1 մարզադպրոց (210 երեխա, մարզաձևերը՝ ֆուտբոլ, բասկետբոլ, ձեռքի

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում կա թվով 25 փողոց, որոնց երկարությունը կազմում է մոտ 22,5 կմ։

***Բնապահպանություն***

Նորք-Մարաշ վարչական տարածքում որպես հասարակական նշանակության հասարակական գոտի առկա է Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակա տարածքը, որը դեռևս գտնվում է անավարտ վիճակում։

2010 թվականի դրությամբ կանաչ գոտիների զանգվածը Նորք-Մարաշ վարչական շրջանում կազմում է մոտ 400 հա՝ ներառյալ սեփական տնատիրություններին պատկանող այգիները, իսկ հասարակական նշանակության կանաչ գոտու զանգվածը կազմում է մոտ 0,3 հա։

***Առևտուր և սպասարկում***

Շրջանում գործում են 7 հանրային սննդի, առևտրային՝ 40, կենցաղային ծառայության՝ 10 օբյեկտներ, 3 բենզալցակայաններ։

## 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010թ. գազաֆիկացվեց և ջեռուցման կաթսա տեղադրվեց հ.123 և հ.124 նախադպրոցական հաստատություններում։ Մասնակի հիմնանորոգվեց հ.122 նուհ-ը, 80%-ով փոխվեց մանկապարտեզների կոշտ գույքը։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2010թ. վարչական շրջանի մոտ 10 ընտանիքներին տրվել է պետ. պատվերով բուժման միջնորդություն:

Սոցիալական ոլորտում դրամական աջակցություն է ցուցաբերվել շուրջ 150 ընտանիքի՝ վետերաններ, ազատամարտիկներ, հաշմանդամներ: 2010թ. սեպտեմբերի 1-ի կապակցությամբ գրենական պիտույքներ և պայուսակներ է բաժանվել 135 երեխաների:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2010թ. կատարվել է 3560,7 քմ ասֆալտ-բետոնե ծածկույթի փոսալցման աշխատանքներ (16,4 մլն դրամ): 2010թ. ընթացքում ամսական 303381 քմ ծավալով իրականացվել են սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներ (53.9 մլն. դրամ):

2010թ. հիմնանորոգվել է Ա. Արմենակյան և Գ. Հովսեփյան փողոցների արտաքին լուսավորության ցանցը:

***Բնապահպանություն***

2010թ. վերանորոգվել է 530 գծմ ոռոգման ջրագիծ (7,0 մլն. դրամ):

***Առևտուր և սպասարկում***

2010 թվականին գովազդային մակերեսը ավելացել է 16 քմ-ով:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Նոր-Մարաշ վարչական շրջանի հ.հ. 122 նախադպրոցական հաստատությունը հիմնանորոգման կարիք ունի, տանիքի և սանհանգույցի վերանորոգման կարիք ունի հ.հ. 121 նուհ-ը:

Մարզադպրոցը ենթակա է հիմնանորոգման: Նորք-Մարաշ վարչական շրջանում գործող երաժշտական դպրոցն ունի հիմնանորոգման, ջեռուցման և նոր գույքի կարիք: Վարչական շրջանի գրադարանն ունի գրքային ֆոնդի համալարման կարիք:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի հ.5 պոլիկլինիկան ունի հիմնանորոգման և նոր բուժ սպասարկման տեխնիկայով վերազինման կարիք;

***Բնակարանային կոմունալ տնտեսություն***

Նորք–Մարաշ վարչական շրջանում լուրջ հիմնախնդիր է հանդիսանում ոռոգման ցանցի բացակայությունը, երկրորդական փողոցների արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգումը: Անհրաժեշտ է առաջարկել «Երևան Ջուր» Ընկերությանը վերանայել խմելու ջրի մատակարարման ծավալները:

Անհրաժեշտ է մշակել «Նաիրի» հյուրանոցային համալիրի զարգացման առանձին ծրագիր, որը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը:

***Բնապահպանություն***

Բնապահպանության ոլորտում կարևոր հիմնախդիր է հանդիսանում Սբ. Աստվածածին եկեղեցուն հարող տարածքում կանաչ գոտու բացակայությունը:

# 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել թվով 12 մշակութային միջոցառում (10475,8 հազար դրամ): Սպորտի բնագավառում կիրականացվի թվով 6 միջոցառում (6033,6 հազար դրամ): Նախատեսվում է ձեռք բերել ըմբշամարտի գորգ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Առողջապահության բնագավառում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ հնարավորինս օգնել թոշակառուներին և հաշմանդամներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին անվճար (պետպատվերով) բուժմանը:

2011 թվականին Նորք-Մարաշ վարչական շրջանում սոցիալական ապահովության բնագավառում նախատեսվում է միանվագ օգնություններ (300 մարդ) և ամանորյա օգնություններ (350 մարդ) սոցիալապես անապահով, հաշմանդամության ունեցող, վետերանների և զոհված ազատամարտիկների

ընտանիքներին: Ճամբար գնացող երեխաների (60 երեխա) տրանսպորտային ծախսերը հոգալու համար անհրաժեշտ է 200.0 հազար դրամ:

***Բնակարանային - կոմունալ տնտեսություն***

2011 թ. Նորք–Մարաշ վարչական շրջանում նախատեսվում է 1600 գծմ ոռոգման ներքին ցանցի պահպանում և շահագործում (14,4 մլն դրամ), 3450 քմ փողոցների ընթացիկ նորոգում և պահպանում (19 մլն դրամ), աղբահանության և սանիտարական մաքրության միջոցառումների իրականացում (53,9 մլն դրամ), փողոցների 1500 գծմ արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում (20 մլն դրամ):

***Բնապահպանություն***

2011 թվականին նախատեսվում է այգի կառուցել Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակա տարածքում, որի իրականացման համար անհրաժեշտ է 75 մլն դրամ: Նորք-Մարաշ վարչական շրջանի կանաչապատման և կանաչ տարածքների պահպանման համար անհրաժեշտ է 5 մլն դրամ:

# ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում գործում են 1 նախադպրոցական հաստատություն (159 երեխա, 26 աշխատող), 2 հանրակրթական դպրոցներ (1248 աշակերտ, 96 մանկավարժ), 1 երաժշտական դպրոց, 1 մարզամշակութային կենտրոն, 1 գրադարան (թիվ 34), Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 հաստատություն, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների օժանդակ գիշերօթիկ դպրոց (թիվ 11), հատուկ դաստիարակչական դպրոց (թիվ 18)։

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Նուբարաշեն վարչական շրջանում գործում են Հանրապետական հոգեբուժական հիվանդանոցը, «Գրիգոր Նարեկացի» ԲԿ-ն, հ.21 պոլիկլինիկան։

2010թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների զբաղվածության կենտրոնում գրանցված է մոտ 310 գործազուրկ։ Ընտանիքների ԱԳՀ-ում հաշվառված է 510 ընտանիք, որից՝ նպաստառու 293 ընտանիք։ Ընտանիքների ԱԳՀ-ում, որպես անօթևան, հաշվառված ընտանիք չկա։ 2010թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ մանկուց հաշմանդամ երեխաների թիվը՝ 21, հաշմանդամ՝ 108 մարդ (հաշվառված առաջին խմբի հաշմանդամ անձանց թիվը՝ 25, երկրորդ խմբի՝ 43 երրորդ խմբի հաշմանդամ՝ 40)։

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Վարչական շրջանում կա շուրջ 535 սեփական տնտեսություն, 36 բազմաբնակարան շենք, որոնցից բարձրահարկ՝ 4-ը, 5-հարկանի՝ 27, եռահարկ՝ 1, երկհարկանի՝ 3, 1-հարկանի 1 շենք։ Բարձրահարկ շենքերում կան թվով 6 վերելակներ։

***Բնապահպանություն***

Նուբարաշեն վարչական շրջանի ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը կազմում է 4,1 հա, որից փողոցների սիզամարգեր՝ 0,1 հա, զբոսայգիներ՝ 3,0 հա,

պուրակներ՝ 0,13 հա: Ընդհանուր ծառերի թիվը 2400-ից ավելի է, ծաղկային մակերեսը՝ 750 քմ, ծաղկասածիլների քանակությունը՝ մոտ 1700 հատ:

***Առևտուր և սպասարկում***

Նուբարաշեն վարչական շրջանում գործում են առևտրի և սպասարկման 75 օբյեկտ, որից 40-ը պարենային ապրանքների, 8-ը ոչ պարենային, 2 շինանյութի, հանրային սննդի և զվարճանքի 3 օբյեկտ և սննդի 3 արտադրամասեր (հացի փուռ):

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010թ. Նուբարաշեն վարչական շրջանում հ. 125 նուհ-ում ավարտվել է ջեռուցման համակարգի վերականգնողական աշխատանքները: Տանիքի վերանորոգման աշխատանք չի իրականացվել:

2010 թվականի ընթացքում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին, Մայրության և գեղեցկության տոնին, Սուրբ Զատկին, Հայող Մեծ Եղեռնի 95-րդ տարելիցին, Հաղթանակի օրվան, Վերջին Զանգին, Երեխաների պաշտպանության օրվան, Գիտելիքի օրվան, Անկախության տոնին, Էրեբունի-Երևան 2792-ամյակին: Հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են Հայոց բանակի 18-ամյակին նվիրված միջոցառումների շարք:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2010թ. առողջապահության բնագավառում սոցիալապես անապահով, սակայն «Փարոսե համակարգում չընդգրված 3 վատառողջ անձանց տրամադրվել է 100.000-ական դրամ ֆինանսական օգնություն՝ հետվիրահատական շրջանում կոնսերվատիվ բուժում իրականացնելու համար: Վարչական շրջանի տարածքում գործող հ.21 պոլիկլինիկայի հետ համատեղ իրականացվել է միայնակ և անժառանգ ծերերի, շաքարային դիաբետով և այլ հիվանդություններով տառապող հիվանդների ցուցակների կազմման և ճշտման, ինչպես նաև այդ հիվանդներին համապատասխան դեղորայքով ապահովելու գործընթացը:

2010 թվականին վարչական շրջանի տարածքում դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար 2010թ. մայիս ամսից կատարվել է Հայրենական Մեծ պատերազմի թվով 11 վետերանների հաշվառում:

2010թ. Նուբարաշեն վարչական շրջանում բնակվող սոցիալապես անապահով բնակչությանը, զահված և հաշմանդամ ազատամարտիկների ու բազմազավակ ընտանիքների տրամադրվել է օգնություն սննդի տեսքով: 1-4-րդ դասարանի դպրոցահասակ երեխաներին տրամադրվել է պայուսակ և գրենական պիտույքներ (80 հատ): Միայնակ և հաշմանդամ երկու ընտանիքի տրամադրվել է հեռուստացույց և հաշմանդամության սայլակ (անվճար հիմունքներով):

Սոցիալապես անապահով ընտանիքների 40 երեխաների ամառային հանգիստը կազմակերպվել է Հանքավանի «Լուսաբացե ճամբարում:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Նուբարաշեն վարչական շրջանում 2010թ. ընթացքում հիմնանորոգվել է 4 վերելակ: 244 քմ հարթ տանիքի վերենորոգման համար տրամադրվել է 280 քմ իզոգամ:

Մինչև տարեվերջ նախատեսվում է իրականացնել 355 քմ ծավալով ասֆալտե ծածկույթի ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ: Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում տեղադրվել է 4 մանկական խաղ:

***Բնապահպանություն***

2010 թվականին կատարվել են շուրջ 500 ծառերի երիտասարդացման աշխատանքներ, ձեռք է բերվել 400 կգ հանգած կիր և կրապատվել են վարչական տարածքի բոլոր ծառերը: 750 քմ ծաղկային մակարերեսի վրա տնկվել է մոտ 1700 հատ ծաղկասածիլ:

***Առևտուր և սպասարկում***

2010 թվականի ընթացքում իրականացվել է հսկողություն վարչական շրջանի տարածքում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, խախտումների համար կազմվել են արձանագրություններ: Համեմատաբար կանոնակարգվել է բացօթյա առևտուրը, իսկ գլխավոր փողոցներում՝ արգելվել:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Վարչական շրջանի հ.125 նուհ-ը կապիտալ վերանորոգման կարիք ունեն: Կարևոր նշանակություն ունի մանկավարժական կադրերի վերապատրաստման համակարգի բարելավումը:

Դպրոցական շենքերի մեծ մասը ունեն հիմնանորոգման կարիք: Մարզաբազաների վերանորոգումը, կառուցումը հնարավորություն կստեղծի կազմակերպել տարբեր սպորտաձևերի մարզական թիմեր: Վարչական շրջանին անհրաժեշտ է ֆուտբոլի կանաչապատ դաշտ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Առողջապահության ոլորտում հիմնախնդիր է շտապ օգնության մեքենայի բացակայությունը:

Վարչական շրջանում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանները բարելավման կարիք ունեն:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Նուբարաշեն վարչական շրջանի Ա, Բ, Գ, Դ, Ե թաղամասերում ոչ հիմնական շինություններում բնակվող անապահով ընտանիքների կոմունալ-կենցաղային պայմանները բարելավման կարիք ունեն:

***Բնապահպանություն***

Կանաչապատման և ոռոգման բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման, ոռոգման ցանցի ընդարձակման և ջրագծերի հիմնանորոգման պահանջ կա:

***Առևտուր և սպասարկում***

Ոլորտում առևտուրը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտ է գյուղմթերքների արտադրանքի մինի շուկա:

# 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականին Նուբարաշեն վարչական շրջանի կրթօջախներում կկազմակերպվեն մրցույթներ, ստուգատեսներ, հանդիպումներ, հիշատակի և տոն

օրերին նվիրված միջոցառումներ: Նախատեսվում է ընդլայնել մարզամշակութային կենտրոնի խմբակները, կահավորել կենտրոնի մարզական մասը:

Կկազմակերպվեն ամենամյա միջոցառումներ՝ «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիքե համաքաղաքային բակային ավանդական փառատոնը, «Լավագույն մարզական ընտանիքե, «Լավագույն մարզական բակ» սպորտային միջոցառումները:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2011 թվականին կսահմանվի էկոլոգիական հսկողություն: Կիրականացվի վարչական շրջանում ապրող հաշմանդամների և միայնակ ծերերի հաշվառում:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

«Երևան-Ջուր» ՓԲԸ-ի և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ կսկսվեն Նուբարաշեն վարչական շրջանի Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ և Է թաղամասերի խմելու ջրի մատակարարման համակարգի կառուցապատման աշխատանքները: Ոռոգման ջրով կապահովվեն հ.հ. 15, 17, 20 փողոցները: Նորակառույց թաղամասերում կտեղադրվեն նոր աղբամաններ:

***Բնապահպանություն***

2011 թվականին նախատեսվում է վարչական տարածքում ևս նոր կանաչ տարածքների հիմնում, որը կհանդիսանա որպես հանգստի գոտի: Կապահովվի 4,1 հա կանաչ տարածքների խնամքի և սպասարկման աշխատանքների կազմակերպումը, կկատարվի հանգստի գոտում ծառատունկ, կձևավորվի 800 քմ ծաղկային տարածք:

***Առևտուր և սպասարկում***

Ոլորտում առևտուրը կանոնակարգելու նպատակով 2011 թվականին նախատեսվում է կազմակերպել գյուղմթերքների արտադրանքի իրացման մինի շուկա: 2011 թվականին աշխատանքներ կտարվեն նաև թափառող կենդանիների վնասազերծման ուղղությամբ:

# ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Շենգավիթ վարչական շրջանում գործում է 22 նախադպրոցական հաստատություն (3429 երեխա, 613 աշխատող), 29 հանրակրթական դպրոց (4 ավագ դպրոց, 25 հիմնական, 13218 աշակերտ, 1126 մանկավարժ), գրադարանային համակարգ՝ 4 գրադարանով, 2 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 մշակութային կենտրոն, 1 գեղագիտական կենտրոն, 1 համալիր մարզադպրոց, 1 մարզական ակումբ և 1 օլիմպիական հերթափոխի մարզադպրոց:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Շենգավիթ վարչական շրջանում գործում են 14 բուժհաստատություններ, այդ թվում՝ «Շենգավիթ» բ/կ, «Սուրբ Աստվածամայր» բ/կ, «Լեբեն» ՍՊԸ բ/կ, «Երևան» բ/կ, «Դենտա Էլիտա» ատամնաբուժական կլինիկա, հ.3 մանկական ստոմատոլոգիական պոլիկլինիկա ԱՊԸ, հ.13, «Նորագավիթ», «Արտաշիսյան», «Կարմիր Բլուր», «Արշակունյաց» պոլիկլինիկաները, տարածքային Հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունն ու փորձագիտական կենտրոնը, «Թիվ 4 բուժ. սան. մաս» ՊՓԲԸ, «Օն – կլինիկ Անի» հայ-իսրայելական բ/կ:

Շենգավիթ վարչական շրջանում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ֆինանսական աջակցությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից 2010թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ օգտվում են 102 սոցիալապես անապահով բնակիչներ՝ հիմնականում միայնակ թոշակառուներ: Վարչական շրջանում գործում են նաև «Փրկություն հաշմանդամ երեխաների կենտրոն» և «Ալեքս» բարեգործական հասարակական կազմակերպությունները:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Շրջանում կան 626 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցից 135-ը բարձրահարկ են (9-16 հարկանի): Շրջանի 626 բնակելի շենքերից 565-ը սպասարկվում է 43 համատիրությունների կողմից, 5-ը՝ լիազորագրային կառավարմամբ, 13-ը՝ աշխատակազմի և 44-ը թաղային լիազորների կողմից:

Շրջանի 135 բարձրահարկ շենքերում կան 257 վերելակներ, որոնցից 17-ը չեն աշխատում:

Շրջանի 135 բարձրահարկ շենքերում կենցաղային աղբը կուտակվում է այդ շենքերի մուտքերի աղբախցերում, իսկ մնացած 492 շենքերինը՝ շրջանի տարածքում հավասարաչափ տեղադրված 412 աղբարկղների մեջ, որոնցից 220-ը համեմատաբար լավ վիճակում են, 65-ը նոր են:

Շրջանի մաքրման ենթակա ընդհանուր տարածքը կազմում է 2130.2 հազ քմ, որից մաքրվում է 1229.5 հազ. քմ, այդ թվում 972.2 հազ քմ՝ կենտրոնական, 213 հազ քմ՝ շրջանային նշանակության փողոցներ և այլ տարածքներ: Սանմաքրման աշխատանքները կատարվում են ամեն օր, մեքենայացված և ձեռքի միջոցով: Շրջանի «Կանաչ» ՓԲԸ-ի առկա մեքենայական պարկը կազմում է 27 միավոր մեքենամեխանիզմ, այդ թվում՝ մասնագիտացված հատուկ աղբատարներ 8 միավոր, ինքնաթափ, բեռնատար՝ 14, ջրցան-լվացող՝ 4, աղ-ավազ ցանող՝ 1:

Շրջանն ունի 137 փողոցներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 99.5 կմ, ընդհանուր մակերեսը՝ 2130200 քմ, երթևեկելի մասի մակերեսը՝ 1308000 քմ: Ճանապարհների ասֆալտբետոնե ծածկույթի մակերեսը կազմում է 2.260.000 քմ:

### *Բնապահպանություն*

Շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են 913.3 հա տարածություն: Շրջանի բնակավայրի հողերի մակերեսը 1577.0 հա է, կանաչ տարածքները՝ 30 հա, սիզամարգերը՝ 38,9 հա, այգիները և պուրակները՝ 43,7 հա, ծաղկեպատ տարածքը՝ 3000 քմ:

### *Առևտուր և սպասարկում*

Շենգավիթ վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 1314 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքով զբաղվում են 312 օբյեկտներ, դեղորայքի վաճառքով՝ 53, շինանյութի վաճառքով՝ 49, ռադիոէլեկտրոնային 5 խանութ, 4 շուկա, ոչ պարենային ապրանքների վաճառքով զբաղվող 350 խանութ և բենզինի ու գազի լիցքավորման 29 կետ:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010 թվականին Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված Ամանորին և Սուրբ Ծննդյան տոնին, Բանակի օրվան, Կանանց միջազգային օրվան, Մայրության և գեղեցկության տոնին, Հայող Մեծ Եղեռնի 95-ամյակին, Հայրենական Մեծ պատերազմի 65-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներ, Երեխաների իրավունքներ պաշտպանության օրվան և այլ մշակութային միջոցառումներ: Անցկացվել է ՀՀ անկախության 19-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 19-րդ մարզական խաղեր, ՀՀ նախագահի մրցանակ «Լավագույն մարզական ընտանիք», վազքարշավ նվիրված օլիմպիական օրվան, Երևան քաղաքի «Կաշվե գնդակ» ֆուտբոլի առաջնությունը և այլ սպորտային միջոցառումներ:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Սոցիալական հատուկ կարգավիճակ ունեցող բնակիչներին թվով 66 միջնորդագրեր են տրվել բուժում և բուժզննում իրականացնելու համար: «Աճեմյան» ատամնաբուժական կլինիկայի հետ համագործակցության արդյունքում 36 քաղաքացի անվճար հիմունքներով օգտվել է կլինիկայի ծառայություններից:

Վարչական շրջանի վետերաններին 10000-ական դրամով պարգևատրելու համար հատկացվել է 1420,0 հազար դրամ, սոցիալապես անապահով ընտանիքների թվով 90 դպրոցահասակ երեխաներ իրենց ամառային հանգիստը անցկացրել են Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում: Դպրոցահասակ երեխաների ճամբար մեկնելու և վերադառնալու, ինչպես նաև ապրիլի 24-ին և մայիսի 9-ի միջոցառումների համար Ծիծեռնակաբերդի և Հաղթանակի այգու կոթողներն այցելելու նպատակով տրամադրվել են ավտոբուսներ, որի համար հատկացվել է 558,2 հազար դրամ: Սոցիալապես անապահով, ազատամարտիկների ընտանիքներին թվով 300 դպրոցահասակ երեխաներին բաշխվել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2010թ. ընթացքում իրականացվել է 1229500 քմ փողոցների սանմաքրման, 30 հա կանաչապատման, գետերի 510 խմ հուների մաքրման, 4094 քմ բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ: Վերանորոգվել է

բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները (5000 քմ), բազմաբնակարան շենքերի մուտքերում տեղադրվել են թվով 32 դուռ: Տարվա ընթացքում բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման համար ձեռք են բերվել 660 հատ ազբոշիֆեր:

Շենգավիթ վարչական շրջանի 4 բակերում կատարվել են բարեկարգման աշխատանքներ:

2010 թվականի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանում տեղադրվել են 65 աղբամաններ:

***Բնապահպանություն***

Կատարվել է պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողատարածքների չափագրում և հաշվառում՝ շուրջ 115 հա չափով: Մշակվել և խնամվել են 30 հա կանաչ տարածքները, 38,9 հա սիզամարգերը, 43,7 հա այգիները և պուրակները, 3000 քմ ծաղկեպատ տարածքները:

***Առևտուր և սպասարկում***

2010 թվականին ընթացքում ապօրինի բացօթյա առևտուր իրականացնողների նկատմամբ կազմվել են համապատասխան արձանագրություններ: Ներկայումս Շիրակի, Գ.Նժդեհի և Արտաշիսյան փողոցներում իրականացվում է ոչ հիմնական (ժամանակավոր) օբյեկտների տեղափոխման կամ արդիականացման համալիր ծրագիր:

Իրականացվել են վարչական շրջանի տարածքում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների հաշվառման և գույքագրման աշխատանքներ: Արդյունքում հաշվառվել է 1314 տնտեսվարող սուբյեկտ:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Սպորտային և մշակութային հիմնարկներում առկա է ջեռուցման անցկացման խնդիր: Անհրաժեշտ է կատարել նաև տանիքների, ջրագծերի, կոյուղագծերի, սան.հանգույցների վերանորոգման, ներքին հարդարման աշխատանքներ: Շենգավիթ վարչական շրջանի հ.հ. 134, 135, 139 նախադպրոցական հաստատությունները հիմնանորոգման կարիք ունեն, տանիքների վերանորոգման կարիք ունեն հ.հ. 126,

131, 138,139,143 նուհ-երը, իսկ սանհանգույցների վերանորոգման՝ 126, 129, 131, 132, 134, 141, 142, 143, 146, 147 նուհ-երը:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Վարչական շրջանում բնակվող սոցիալապես անապահով խավի, ազատամարտիկների, վետերանների, թոշակառուների, բազմազավակ ընտանիքների սոցիալական պայմաններն ու ապրելակերպը բարելավման կարիք ունեն: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որ վերջիններս հնարավորություն ունենան տարվա ընթացքում բուժումներ ստանան առողջարաններում և հանգիստը անցկացնեն հանգստյան տներում:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Միջթաղային ճանապարհները քայքայված են և վերակառուցման կարիք ունեն: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել փողոցների արտաքին տեսքի ձևավորման վրա:

Անհրաժեշտ է կազմակերպել բնակելի շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության, ամրացման և վերանորոգման աշխատանքները:

***Բնապահպանություն***

Շրջանի կարևոր հիմնախնդիրն է շրջակա միջավայրի պահպանումը, գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների կազմակերպումը և աջակցումը՝ հողօգտագործողներին անհրաժեշտ պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռք բերման համար:

Որոգման ջրի կորուստները նվազեցնելու, հողօգտագործողներին ոռոգման ջրով ապահովելու նպատակով առաջնահերթ լուծել վերանորոգման ենթակա ներտնտեսային ոռոգման ցանցի աշխատանքների կազմակերպման հետ կապված խնդիրները և աջակցել աշխատանքների իրականացմանը:

Անհրաժեշտ է իրականացնել այգիների, հանգստի գոտիների և բակերի բարեկարգման, նոր կանաչ գոտիների ստեղծման աշխատանքներ:

***Առևտուր և սպասարկում***

Վարչական շրջանի տարածքում անհրաժեշտ է կանոնակարգել բացօթյա առևտուրը:

# 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականին կիրականացվեն միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին:

Երևանի քաղաքապետարանի ծրագրով Կոմիտասի անվան պանթեոնի տարածքում նախատեսվում է անցկացնել շուրջ 950 գծմ նոր ջրագիծ: Կանցկացվի արտաքին լուսավորության նոր ցանց: Կթարմացվի ու կծաղկապատվի պանթեոնի ողջ կանաչ տարածքը: Նոր, թարմ տեսքի կբերվեն ծառուղիները: Նախատեսվում է վերանորոգել նաև բազալտե եզրաքարերը, սալիկները, ավելացնել նստարանների ու աղբամանների թիվը: Բարեկարգվելու է Մհեր Մկրտչյանի հուշաքարը:

2011 թվականին շահագործման կհանձնվի Դելֆինարիումը, որը կառուցվում է զբոսայգու բարեկարգման ծրագրի շրջանակներում՝ այգու հակառակ կողմում, պանթեոնից բավական հեռո, որի մուտքը կլինի Արշակունյաց պողոտայի կողմից: Դելֆինարիումի շահագործումից ստացված եկամուտներն ուղղվելու են զբոսայգու և պանթենոնի բարեկարգմանը:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

2011 թվականին վարչական շրջանի տարածքում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների անդամների, վետերանների, ազատամարտիկների առողջական խնդիրները հոգալու համար միջնորդագրեր կտրվեն՝ պետ.պատվերի շրջանակներում բուժօգնություն իրականացնելու համար: Կշարունակվի համագործակցությունը «Աճեմյան» ատամնաբուժական կլինիկայի և այլ բարեգործական կազմակերպությունների հետ՝ վարչական տարածքում բնակվող սոցիալական խնդիրներ ունեցող բնակչությանը բժշկական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

2011 թվականին սեպտեմբերի 1-ի նախօրեին ֆինանսական միջոցներ կհատկացվեն վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին՝ դպրոցական պայուսկաներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով (4000,0 հազար դրամ): Նախատեսվում է ավելացնել ազատամարտիկների, Հայրենական պատերազմի մասնակիցների, սոցիալապես անապահով ընտանքիների երեխաների համար ամառվա ընթացքում հատկացվելիք ճամբարի ուղեգրերի քանակը: Երեխաների հանգստի կազմակերպման նպատակով

գույքի և սարքավորումների (տրանսպորտի) վարձակալության համար անհրաժեշտ է 1000,0 հազար դրամ:

Ֆինանսական աջակցություն կցուցաբերվի Շենգավիթ վարչական շրջանում բնակվող պատերազմի, զինված ուժերի վետերաններին, Արցախյան պատերազմի մասնակիցների, զոհված և վիրավոր ազատամարտի ընտանիքներին՝ Ամանորի, Հաղթանակի օրվա, կանանց միջազգային օրվա և այլ առիթներով:

Շենգավիթ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին և վետերաններին տոնական օրերեի կապակցությամբ նախատեսվում են փաթեթներ՝ սննդամթերքի տեսքով: Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական օրերին ֆինանսական աջակցության համար նախատեսվում է 3000,0 հազար դրամ: Ամանորյա նվերներ կհանձնվեն նաև վարչական շրջանում բնակվող սոցիալական խնդիրներ ունեցող երեխաներին:

2011 թվականին կշարունակվի «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագիրը, որի շրջանակներում վարչական տարածքում բնակվող գործազուրկները աշխատելու հնարավորություն կունենան: այս ծրագրի համար նախատեսված է 10000,0 հազար դրամ, որից 5000,0 հազար դրամը համայնքային բյուջեից և 5000,0 հազար դրամը պետ բյուջեից տրվող այլ տրանսֆերտների հաշվին:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2011թ. ընթացքում Շենգավիթ վարչական շրջանում կիրականացվեն միջբակային փողոցների, բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ: Բակերում 13300 քմ մակերեսով ասֆալտապատման և վերականգնման աշխատանքներ իրականացնելու համար նախատեսվում է 72.0 մլն դրամ գումար:

Շենգավիթ վարչական շրջանի շենքերի հարթ տանիքները պատված են փափուկ ծածկով՝ իզոգամով, որոնց պիտանելիության միջին ժամկետը 5-7 տարի է և որոնք ենթակա են մշտական փոփոխման: Նմանատիպ շենքերի տանիքների վերանորոգման նպատակով առաջարկվում է 2011թ. վերանորոգել 3000 քմ հարթ տանիք, որի համար անհրաժեշտ է մոտ 11,4 մլն. դրամ: Թեք լանջավոր տանիքները հիմնականում հին են, քայքայված, շենքերի կառուցումից հետո հիմնական նորոգման չեն ենթարկվել: Այդ շենքերի տանիքների վերանորոգման համար անհրաժեշտ է ձեռք բերել 4000 հատ ազբոշիֆեր:

Բազմաբնակարան շենքերի անձրևատար խողովակների վերանորոգման և վերականգնման աշխատանքների համար առաջարկվում է նախատեսել 10,0 մլն. դրամ, որի դեպքում կվերանորոգվի մոտ 2500 գծմ խողովակ:

Բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ 46.1 մլն դրամ գումարի չափով:

Նախատեսվում է ավելացնել շրջանի բնակչության կողմից արտադրվող կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը: Կենցաղային աղբի տեղափոխումը կկատարվի ռիթմիկ, ըստ մշակված աշխատանքային գրաֆիկների:

2011թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել 307.5 մլն. դրամի սանիտարական մաքրման աշխատանքներ, ընդգրկելով 1229.5 հազ. քմ. տարածք, այդ թվում նաև տարածքի շին. աղբի տեղափոխումը:

***Բնապահպանություն***

2011թ. նախատեսվում է շրջանում ընդարձակել կանաչ տարածքները 10 հա-ով: Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում 7 հա նոր այգիների, պուրակների ստեղծում, սիզամարգերի վերականգնում, ծառերի և թփերի տնկում, ծաղկային տարածության ընդարձակում, սիզամարգերի ավելացում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում՝ տարեկան 2 անգամ:

Վարչական շրջանի տարածքների 30 հա պուրակների, այգիների, սիզամարգերի խնամքի, բարեկարգման և ընդլայնման աշխատանքների համար անհրաժեշտ է 66.5 մլն. դրամ:

Ոռոգման ջրի կորուստները նվազեցնելու, հողօգտագործողներին ոռոգման ջրով ապահովելու նպատակով իրականացվելու է ներտնտեսային ցանցի վերանորոգման աշխատանքներ՝ Նորագավիթ, Ներքին Չարբախ, Ն.Շենգավիթ թաղամասերում:

***Առևտուր և սպասարկում***

2011 թվականին վարչական շրջանի տարածքում բացօթյա առևտուրը կանոնակարգելու համար նպատակահարմար է կազմակերպել մինի շուկաներում: Նախատեսվում է գովազդային վահանակների նոր տեղերի ավելացում:

# ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Վիճակի բնութագիր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում են 15 նախադպրոցական հաստատություն (1819 երեխա, 328 աշխատող), հանրակրթական 13 դպրոց (6304 աշակերտ, 633 մանկավարժ), 1 կերպարվեստի դպրոց, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 կենտրոնացված գրադարանային համալիր (2 մասնաճյուղով) և 1 մշակույթի տուն:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում են 8 բժշական կենտրոններ, 3 մասնավոր բուժ.հաստատություն, 2 պոլիկլինիկա (Քանաքեռ-Զեյթուն ԲԿ-ի պոլիկլինիկայի մեկ մասնաճյուղ էլ գործում է Քանաքեռում):

Վարչական շրջանում առկա է 72 փախստական ընտանիք: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է մոտ 13200 մարդ: ՍՕՏԲ-ում հաշվառված են 1768 անապահով ընտանիքներ, որոնցից 1408-ը ստանում են ընտանեկան նպաստ:

Քառանքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում են 3 բարեգործական ճաշարան՝ գերմանական Կարմիր Խաչի կողմից սպասարկվող բարեգործական ճաշարան (240 շահառու), «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի բարեգործական ճաշարան (120 շահառու) և Արաբկիրի Հայորդաց տան բարեգործական ճաշարան (100 շահառու):

Քանաքեռ-Զեյթունում է գտնվում նաև «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից սպասարկվող «Սոցիալական տուն»-ը, որտեղ ժամանակավոր կացարան է հատկացվել մոտ 50 անօթևանների:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Վարչական շրջանն ունի 78 փողոց, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 68.6 կմ, ճանապարհային ցանցի մակերեսը՝ 973194 հազ քմ:

Վարչական շրջանում կա 353 բազմաբնակարան շենք, որոնցից 122-ը բարձրահարկ են (6-ից ավելի հարկ), 4536 սեփական տուն: Թեք տանիք ունեն բազմաբնակարան 239 շենք (1-6 հարկ) և հարթ տանիք՝ 122 բարձրահարկ շենք: Թվով 122 բարձրահարկ շենքերը սպասարկում են 216 վերելակ:

***Բնապահպանություն***

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կանաչապատ տարածքը կազմում է 44 հա, որից սիզամարգեր՝ 59461 քմ, ծաղկանոց՝ 3470 քմ, վարդանոց՝ 2940 քմ, կենդանի ցանկապատ՝ 480 գծմ, զբոսայգիներ՝ 485780 քմ:

***Առևտուր և սպասարկում***

Վարչական շրջանի տարածքում գործում է առևտրի և սպասարկումների 485 օբյեկտներ, բենզինի և գազի լիցքավորման 11 կետեր: Հիմնականում կարգավորված են օբյեկտների տեղաբաշխման և արտաքին համաչափության հարցերը:

# 2010 թվականին իրականացված ծրագրեր

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2010 թվականի ընթացքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում ջեռուցման լոկալ համակարգով ապահովվել են 4 նախադպրոցական հաստատություն (հ.հ. 148, 152, 161 և 162), մասնակի վերանորոգվել է հ.161 նուհ-ի տանիքը, հիմնովին վերանորոգվել է հ.160 նուհ-ի ցանկապատը և ավարտին է հասցվել հ.153 նուհ-ի մասնակի հիմնանորոգման և ներքին հարդարման աշխատանքները:

«Զեյթուն» մշակույթի տանը վերանորոգվել, կահավորվել է խոհարարական դասասենյակը, փոխվել են մետաղապլաստե վեց պատուհան և մեկ դուռ, համալրվել է համակարգիչներով և տպիչ սարքով: Կենտրոնացված գրադարանային համալիրը համալրվել է գրքային ֆոնդով, իրականացվել է սանհանգույցի, նախասրահի և տնօրենի սենյակի լրիվ վերանորոգում, Քանաքեռի մասնաճյուղի սանհանգույցի մասնակի վերանորոգում և լոկալ ջեռուցման համակարգի անցկացում:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Սոցիալապես անապահով բնակիչներին պետպատվերի շրջանակներում բուժման, հետազոտման, վիրահատման նպատակով շրջանի կողմից հատկացվում են միջնորդագրեր: Այսպես, 2010թ. տրվել է 46 միջնորդագիր, որից վիրահատության

համար՝ 29, բուժման նպատակով՝ 12 և բժշկական հետազոտության համար՝ 5 մարդու:

Շրջանի առավել կարիքավոր ընտանիքների համար 2010թ. իրականացվել են բարեգործական բաղնիքի ծառայության, ձմռան ամիսների ջեռուցման համար վառելափայտի տրամադրման ծրագրեր: Զոհված և վիրավոր ազատամարտիկների, առավել կարիքավոր բազմազավակ, բազմանդամ ընտանիքների 70 երեխաներ հանգստացել են Ծաղկաձորի «Տանձաղբյուր» ճամբարում, նոր ուսումնական տարվա կապակցությամբ 1-4-րդ դասարանների 250 երեխաների հատկացվել 1.5 մլն. դր. արժողությամբ դպրոցական պարագաներ: 2010թ. ընթացքում համագործակցելով ՀԿ-ների ու ԲՀԿ-ների հետ իրականացվել են առավել կարիքավոր ընտանիքներին հագուստի, կոշիկի, հիգիենիկ պարագաների, գրենական պիտույքների բաշխման ծրագրեր:

2010թ. «Վորլդ Վիժն» ՄԲԿ-ի հետ համատեղ 50 դպրոցահասակ երեխաների համար իրականացվել է նաև բակային ճամբար ծրագիրը:

### *Բնակարանային-կոմունալ տնտեսություն*

2010թ. իրականացվել է 60000 քմ ասֆալտ բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ, տեղադրվել են 82 մուտքի դուռ (250 քմ), տանիքների վերանորոգման նպատակով ձեռք է բերվել 15,0 մլն. դրամի նյութեր (իզոգամ և ազբոշիֆեր), որը տրամադրվել է համատիրություններին, վերանորոգվել է 19 վերելակ, բարեկարգվել է 2 բակային տարածք, տեղադրվել են խոշոր ատրակցիոններ և խաղեր:

### *Բնապահպանություն*

2010թ. իրականացվել է Հ.Պարոնյանի և Մ.Ավետիսյանի պուրակների 170 գծմ ոռոգման ջրագծերի վերականգնում, Ազատության պող., Պ.Սևակի, Դ.Անհաղթ փողոցներում վերականգնվել ու կանաչապատվել է 6850քմ գազոն, տնկվել է 18100 ծաղիկ: Վարչական շրջանում տնկվել է 127 ծառ, իսկ «Հաղթանակ» զբոսայգում 40 հատ արծաթափայլ եղևնի:

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» եռամսյա ծրագրով «Հաղթանակ» զբոսայգում և հինգ պուրակներում իրականացվել են սիզամարգերի մաքրման, պատահական աղբի հավաքման, ծառերի չորուկների ու կոճղաշվերի կտրման և այլ աշխատանքներ: Ծրագրի արժեքը կազմել է 4.443.511 դրամ:

***Առևտուր և սպասարկում***

2010թ. կրպարկների և խանութների սեփականատերերի հետ համատեղ իրականացվել են օբյեկտների հարակից տարածքների բարեկարգման, ծառատնկման աշխատանքներ: Կազմակերևպվել են ստուգայցեր՝ առևտուրը կանոնակարգելու և սանիտարական նորմերը ապահովելու համար:

# Հիմնախնդիրներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանի հ.հ. 148, 149, 150, 155, 159 նախադպրոցական հաստատությունները հիմնանորոգման կարիք ունեն, տանիքների վերանորոգման կարիք ունեն հ.հ. 153, 157, 160, 161, 162 նուհ-երը, իսկ սանհանգույցների վերանորոգման՝ 151, 153, 157, 158,160 նուհ-երը:

Վարչական շրջանի նախադպրոցական հաստատությունները ենթակա են մասնակի և հիմնական նորոգման: ԿԳՀ-ի շենքային պայմանները բարելավման կարիք ունեն: Երեխաների ամառային հանգիստը վարչական շրջանի տարածքում կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է բակային ճամբարների կազմակերպում, սպորտային հրապարակների ավելացում, գույքով ապահովում:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Անհրաժեշտ է դեղորայքի ձեռք բերման նպատակով կենտրոնացված դեղատների առանձնացում՝ առավել կարիքավոր ընտանիքների համար, ատամնաբուժական մասնագիտացված, կենտրոնացված ծառայությունների ստեղծում: Նոր պոլիկլինիկայի կառուցման անհրաժեշտություն կա: Սոցիալապես անապահով ընտանիքներին պետ.պատվերի մոտավոր լիմիտի սահմանում, հանգստյան տների ու առողջարանային ուղեգրերի տրամադրում:

Անհրաժեշտ է սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերել՝ սոցիալական ու առողջապահական խնդիրների լուծման համար: «Փարոս» համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների մահացած անդամների դիահերձման վճարներից ազատում կամ զեղչերի հատուցում: Կենսաթոշակների ու նպաստների հնարավոր ավելացում:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

Անհրաժեշտ է բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները վերակառուցել թեք տանիքների, ազբոշիֆերը փոխարինել թիթեղապատ թեք տանիքների: Վերելակները հիմնանորոգման կարիք ունեն: Կոյուղագծերը հիմնանորոգման պահանջ ունեն, կոյուղու ցանցի ընդլայնման խնդիր կա:

***Բնապահպանություն***

Անհրաժեշտ է «Հաղթանակ» զբոսայգում ոռոգման նոր ջրագիծ անցկացնել, Յ. Լեփսիուսի փողոցի ամբողջ տարածքի ոռոգման ցանց ստեղծել: Այս հսկա տարածքը, որը նախկինում կանաչ գոտի էր զրկված է ոռոգման ցանցից ու կանաչ տարածքների խնամքից:

***Առևտուր և սպասարկում***

Փոքր և միջին բիզնեսը խթանելու և հավասար մրցակցային դաշտ ձևավորելու համար ոգելից խմիչքների և ծխախոտի, ինչպես նաև բացօթյա առևտրի տուրքերի դրույքաչափերը անհրաժեշտ է կարգավորել կախված շրջանառության ծավալներից և գոտիավորումից՝ կատարելով օրենսդրական փոփոխություն:

Անհրաժեշտ է կենտրոնացնել փողոցային առևտուրը՝ այն կազմակերպելով առանձին հատկացված տեղերում ավելի ժամանակակից ձևերով:

## 2011 թվականին նախատեսվող միջոցառումներ

***Կրթություն, մշակույթ, սպորտ***

2011 թվականին կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում կնշվեն ՀՀ հիշատակի և տոն օրերը, կկազմակերպվեն սպորտային միջոցառումներ: Նուհ-երում նախատեսվում է իրականացնել մասնակի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես հիմնովին վերանորոգել հ.150 նուհ-ը և հ.153 նուհ-ի տանիքը:

***Առողջապահություն և սոցիալական ապահովություն***

Նախատեսվում է աջակցել սոցիալապես անապահով խավին՝ դեղորայքով ապահովելու հարցում:

2011 թվականին նախատեսվում է սոցիալապես անապահով ընտանիքներին ու անհատներին տրամադրել հագուստի, սննդի, գրենական պիտույքների, հիգիենայի պարագաների, բաղնիքի կտրոններ: Առավել կարիքավորները կընդգրկվեն

բարեգործական ճաշարաններում: Տոների հետ կապված (Մարտի 8, Սբ. Զատիկ, Տարեցների օր և այլն) բարեգործական ճաշարաններում կկազմակերպվեն միջոցառումներ: Նախատեսվում է ՀԿ-ների հետ համատեղ առանձին ծրագրեր իրականացնել:

2011թ. «Վորլդ Վիժն» ՄԲԿ-ի հետ համատեղ 100 դպրոցահասակ երեխաների համար կիրականացվի բակային ճամբար ծրագիրը:

***Բնակարանային-կոմունալ տնտեսություն***

2011թ. նախատեսվում է իրականացնել 9,8 կմ արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքներ, փողոցների երթևեկելի և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ (մոտ 60.000 քմ մակերես), հիմնովին ավարտել բազմաբնակարան շենքերի մուտքերի բացակա դռների տեղադրումը (թվով 56 դուռ), համատիրություններին տրամադրել 10 մլն դրամի շինանյութ (իզոգամ, ազբոշիֆեր)՝ տանիքների վերանորոգման նպատակով, վերանորոգել 25 վերելակ, իրականացնել բակերի բարեկարգման աշխատանքներ 14 բակային տարածքներում:

Անհրաժեշտություն կա Քանաքեռ-Զեյթուն «Սան-մաքրում» ՓԲԸ-ում ավելացնել ևս 9 մեքենա-մեխանիզմ, կառուցել և վերանորոգել բոլոր աղբահարթակները, փոխարինել 60 մաշված աղբարկղերը, մաքրման տարածքը ավելացնել 288.745 քմ մակերեսով փողոց և 332.737 քմ մակերեսով բակային տարածքներ:

2011 թվականին նախատեսվում է աղբարկղերի հենապատերի կառուցում հետևյալ հասցեներում՝ Ռուբինյանց 6շ. և 10շ. դիմաց, Դրոյի 7շ. դիմաց, Դ.Անհաղթի փող. (մշակույթի տան հարևանությամբ) և Մ.Ավետիսյան փող. և Կ.Ուլնեցու խաչմերուկում:

***Բնապահպանություն***

2011թ. նախատեսվում է վարչական շրջանում կազմակերպել ծառատունկ և ընդարձակել կանաչ տարածքները, «Հաղթանակ» զբոսայգում վերականգնել Մայր Հայաստան հուշարձանի շրջակայքի վարդանոցները: Դրոյի փողոցում կիրականացվեն կանաչապատման և ծաղկապատման աշխատանքներ:

2011 թվականին կանաչ տարածքների ընդլայնման նպատակով նախատեսվում է իրականացնել 150 գծմ «կենդանի ցանկապատի» (թփերի) և 400 հատ ծառերի

տնկում: Նախատեսվում է տնկել 20000 հատ ծաղիկ և 2500 հատ վարդի թուփ: Ոռոգման ցանցի բարելավման նպատակով նախատեսվում է մոնտաժել 500 գծմ խողովակ:

***Առևտուր և սպասարկում***

Առևտրի և սպասարկման ոլորտում կկազմակերպվեն ստուգայցեր՝ առևտուրը կանոնակարգելու և սանիտարական նորմերն ապահովելու համար:

# ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանի զարգացման 2011 թվականի ծրագրի գերակայությունները բխում են Երևանի ավագան 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 52-Ն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագրի հիմնադրույթներից։

Երևանի զարգացման 2011 թվականի հիմնական գերակայություններն են՝

- ✓ *Երևանի տարածական համաչափ զարգացումը և պլանավորումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,*
- ✓ *քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարձրացումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դրանց հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովումը,*
- ✓ *Երևանի ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը,*
- ✓ *Մայրաքաղաքի ջրամատակարարման, աղբահանության, սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման, բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման ոլորտներում իրական բարեփոխումները և նախատեսված ծրագրերի արդյունավետ իրականացումը, բակային տարածքների բարեկարգման միջոցառումների շարունակականությունը,*
- ✓ *Երևան քաղաքում ուղևորատար տրանսպորտի զարգացման ռազմավարության ներդրումը,*
- ✓ *համայնքի եկամուտների հավաքագրման և տնօրինման արդյունավետության ու թափանցիկության ապահովումը և համայնքային գույքի արդյունավետ կառավարումը,*
- ✓ *առողջապահության առավել արդյունավետ համակարգի ստեղծումը,*

- ✓ *Երևանի քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության ապահովումը,*
- ✓ *երեխաների իրավունքների պաշտպանությունը և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը,*
- ✓ *կրթական համակարգի վերակառուցումը և համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին և մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին, ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրումը, կրթության որակի էական բարելավումը և կրթության հասանելիության մակարդակի բարձրացումը բնակչության անապահով խմբերի համար,*
- ✓ *համամարդկային ու ազգային արժեքների, ազգային ավանդույթների, հոգևոր, պատմահնագիտական ու մշակութային ժառանգության պահպանման ու դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,*
- ✓ *մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովումը,*
- ✓ *քաղաքաշինության հարատև զարգացումը, ներառյալ՝ ներդաշնակ կենսատարածքի ձևավորումը և նպաստումը բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը,*
- ✓ *միջազգային կապերի ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների միջև արդյունավետ համագործակցությունը,*
- ✓ *սփյուռքի հետ արդյունավետ աշխատանքների կազմակերպումը և զբոսաշրջության զարգացումը:*
- ✓ *կառավարման համակարգի բարեփոխումները և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը՝ այդ նպատակով իրավական դաշտի կատարելագործումը, համակեցության և համաքաղաքային կանոնների ընդունումն ու ներդրումը,*
- ✓ *համայնքային ծառայողների մասնագիտական որակավորման և գործունեության արդյունավետության էական բարձրացումը,*
- ✓ *քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարձրացումը,*

*կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դրանց հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովումը,*

- ✓ *գործարարության և ներդրումային միջավայրի բարելավումը, պետական, համայնքային և մասնավոր գործընկերության արդյունավետությունը, կորպորատիվ կառավարման ներդրումը,*
- ✓ *գիտական ներուժի և ինովացիոն ծրագրերի ներգրավումը կենսագործունեության բոլոր ոլորտներում:*